

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА
NATIONAL ACADEMY OF SCIENCES OF ARMENIA

Հ.ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ЯЗЫКА ИМЕНИ Р.АЧАРЯНА
H. ACHARYAN INSTITUTE OF LANGUAGE

ԼԵԶՈՒ

ԵՎ

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

•

ЯЗЫК И ЯЗЫКОЗНАНИЕ

LANGUAGE AND LINGUISTICS

1 (18)

2018



ԵՐԵՎԱՆ • ЕРЕВАН • YEREVAN

Հանդեսի հիմնադիրն է ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի
ինստիտուտը:

Լույս է տեսնում 2003 թ., տարին երկու անգամ:

Գլխավոր խմբագիր Համբարձումյան Վ. Գ.

Խմբագրական խորհուրդ՝

Աբաջյան Ա. Հ., Աբրահամյան Կ. Շ., Ավետիսյան Յու. Ս., Բարդակչյան Գ. (ԱՄՆ),
Բարլեզիզյան Ա. Կ., Բրուտյան Լ. Գ., Գալստյան Ա. Ս. (գլխավոր խմբագրի
տեղակալ), Թրագուտ Յ. (Ավստրիա), Խաչատրյան Ա. Հ. (Շվեդիա), Խաչատրյան
Գ. Կ., Կատվալյան Վ. Լ., Կորտլանդտ Ֆ. (Նիդերլանդներ), Հովհաննիսյան Լ. Շ.,
Հովսեփյան Լ. Ս., Մոհամմադի Ս. Ս. (Իրան), Պետրոսյան Վ. Ջ., Սարգսյան Ա. Ե.,
Սարգսյան Ս. Ա. (պատասխանատու քարտուղար), Սաքայան Դ. Գ. (Կանադա),
Սիմոնյան Ն. Ս. (գլխավոր խմբագրի տեղակալ), Տեր-Մերկերյան Ռ. (Ֆրանսիա),
Տոնապետյան-Դեմոպուլոս Ա. (Ֆրանսիա):

Главный редактор Амбарцумян В. Г.

Редакционная коллегия

Абаджян А. Г., Абрамян К. Ш., Аветисян Ю. С., Бардакчян Г. (США), Барлезизян А.
К., Брутян Л. Г., Галстян А. С. (заместитель главного редактора), Катвалян В. Л.,
Мохаммади М. М. (ИРИ), Кортландт Ф. (Нидерланды), Оганесян Л. Ш., Петросян В. З.,
Сакаян Д. Г. (Канада), Саргсян А. Е., Саргсян М. А. (ответственный секретарь),
Симонян Н. М. (заместитель главного редактора), Тер-Меркерян Р. (Франция),
Тонапетян-Демопулос А. (Франция), Трагут Я. (Австрия), Хачатрян А. А. (Швеция),
Хачатрян Г. К.

Chief Editor Vazgen Hambardzumyan

Editorial Board

Abajyan A. H., Abrahamyan K. Sh., Avetisyan Yu. S., Bardakchyan G. (USA), Barlezizyan
A. K., Brutyan L. G., Galstyan A. S. (deputy chiefeditor), Khachatryan A. H. (Sweden),
Knachatryan G. K., Hovhannisyan L. Sh., Katvalyan V. L., Kortlandt F. (Netherlands),
Mohammadi M. M. (Iran), Petrosyan V. Z., Sargsyan A.E., Sargsyan M. A. (editorial
secretary), Sakayan D. G. (Canada), Simonyan N. M. (deputy chiefeditor), Ter-Merkeryan R.
(France), Donabndian-Demopoulos A. (France), Tragut J. (Austria).

ISSN

© Լեզու և լեզվաբանություն

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2018

ՀՈԴՎԱԾՆԵՐ. STATЬИ. ARTICLES

ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ԱՐՏՈՐԱԼ «ՇՏԱՊԵԼ. ՓՈՒԹԱԼ», ԱՐՏՈՅՏ «ԱԲԵՂԱԶԱԳ (ԹՈՉՈՒՆ)»

Բանասիր. գիտ. դոկտոր Վ. Գ. ՀԱՄԲԱՐՉՈՒՄՅԱՆ

Հ. Աճառյանի «Արմատական բառարան»-ում հայ. *արտորալ* «շտապել, փութալ» բառը չունի որևէ ստուգաբանություն (համարվում է «անստոյգ բառ»)¹:

Բառի ստուգաբանությանը հետազայում անդրադառնում է Է. Աղայանը, ըստ որի «ծագում է հնդեվրոպական *drā- արմատից, որ նշանակում է «վազել, շտապել», ածանցված է -*որ* մասնիկով: Հմմտ. հին հնդկերեն prāti «վազում է, շտապում է», հունարեն δραπετεύω «վազում եմ (վրայով)», հին բարձր գերմաներեն zittarōm «շտապում եմ», գոթերեն anatrimpan «շրջել, շարժվել», միջին բարձր գերմաներեն trumphen «վազել», անգլերեն tramp, trample «մտնել» և այլն: Հայերենը ծագում է drā- ձևից, dr > րտ օրինաչափ տեղափոխությամբ (հմմտ. *drakru > արտասուք, dhabhro > դարբին և այլն) և բառասկզբում ր-ից առաջ ա-ի հավելումով, որից և ստացվել է *արտ-* պարզական արմատը»²:

Գ. Ջահուկյանը որոշակի վերապահությամբ է մոտենում Է. Աղայանի այդ ստուգաբանությանը՝ գրելով հետևյալը. «Թերևս բնիկ հնդեվրոպական *der- արմատի *drā- ձևից՝ -*որ* ածանցով և հայերենին հատուկ դրափոխությամբ. հմմտ. հ.հնդկ. drnti «վազում է, շտապում է», հուն. εδραυν «վազել, փախչել»:- Աղայան, ԲՄՀ 35»³:

Մենք ստորև, իր տեղում, կանդրադառնանք հե. *der-/ *drā- արմատի՝ հայերենում ունեցած դրափոխությանը, և առհասարակ նման արմատից ծագած լինելու հարցին, իսկ մինչ այդ հարկ ենք համարում խոսել հայ. *արտ-* արմատով բառերից մեկ-երկուսի մասին:

¹ Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1, Ե., 1971, էջ 344:

² Է. Բ. Աղայան, Բառաբանական և ստուգաբանական հետազոտություններ, Ե., 1974, էջ 35:

³ Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Ե., 2010, էջ 97:

Այս բառի *արտ-* արմատին է առնչվում հայ. *արտույտ* «աբե-
ղաձագ (թռչունը)» բառը՝ *-ույտ* (< *-ոյտ*, տարբերակներ՝ *-ուտ*, *-իւտ*.
արտուտ. *արտիւտ* և այլն) մասով: Հայ գրական հուշարձաններում
այդ երկուսի՝ իրար մոտ կամ նույնական լինելու ամենալավ օրի-
նակը, կարծում ենք, հանդիպում ենք Հ. Թումանյանի հետևյալ
քառյակում. «Կըլթացնում են, *արտորում* / *Արտույտները* արտե-
րում, / Թռչում մանուկ հոգուդ հետ / Ճախրում ճրխում եթերում»
(Հ. Թումանյան, հ. 2, Ե., 1990, էջ 32-33):

Արտույտ բառը հայերենում, մանավանդ նոր գրականում, ունի
ոչ պակաս տարածված գործածություն. «Լոռու հանդում՝ մի *ար-
տուտ* / Նայում է միշտ իմ ճամփին» (ն. տ., էջ 32). «Ոսկեշղթա իմ
հուշերին, իմ գիշերին, իմ փշերին, / *Արտույտներին* ոսկե հանդում
ասում եմ ես, մնա՛ք բարով» (Վ. Տերյան, Երկեր, 1989, էջ 147) և այլն:

Այն ևս, ըստ Աճառյանի, «անստույգ բառ» է, որի բուն նշանա-
կությունն է «արտի՝ մարգագետնի թռչուն» (ՀԱԲ, ն. տ.), իսկ ըստ
Ջահուկյանի՝ «Թերևս բնիկ հնդեվրոպական՝ բնաձայնական *t-r-
պարունակող մի ձևից. հմմտ. *trozdos/*trodos, որտեղից՝ մ. իռլ.
truit, druit «սարյակ», ռուս. трозд «կեռնեխ», այլն՝ լատ. tordus,
*tet(e)r- որտեղից՝ հայ. *տատրակ*՝ առանց բաղաձայնական տե-
ղաշարժի, *trug (որտեղից՝ հուն. τρυφών «տատրակ»): Հայերենի
համար ենթադրելի են *t/dreut/d (> *արտոյտ*) կամ *t/drut(d) (>
արտուտ) նախաձևերը: Ժողովրդական ստուգաբանություն է *ար-
տոյտ* < *արտ + ոյտ = ուտ (իբրև «արտ ուտող») (ն. տ., էջ 97)⁴:

Այս երկու բառի՝ *արտորալ* և *արտույտ*, հնչումով նույն
արմատը՝ *արտ-*, կարելի է մտածել, որ իմաստով ևս նույն է, ծագում
է հե. *arg՝ - «փայլ» ձևից, եթե ընդունենք հնդեվրոպական հետնա-
լեզվային ձայնեղ բաղաձայնի սովորական և քմայնացած տարբե-
րակում (*g // *g՝). ի՞նչ փաստեր (այլ լեզուների հետ հնարավոր
գուգահեռներ) և ինչպիսի՞ հիմնավորում կարելի է բերել այս դեպ-
քում:

Ամենից առաջ նկատենք, որ այս համեմատության մեջ ամե-
նավիճելին, եթե հարցին մոտենում ենք ավանդական համեմատա-
բանության տեսանկյունից, թերևս հե. *g՝ > հայ. տ անցումն է, որն,
այնուամենայնիվ, անհնարին չէ, եթե նկատի ենք ունենում այդ

⁴ Չ. Ջահուկյանը նախկինում չի անդրադարձել *արտոյտ* բառի ծագմանը (տե՛ս «Հայոց
լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան», Ե., 1987):

բնագավառի ոչ միայն ավանդաբար հաստատված, այլև նորագույն տվյալների՝ թե՛ իմաստային և թե՛ հնչյունական անցումների (հնչյունական օրենքի) հավաստիությունը. այդ հնարավոր անցման վստահելի օրինակ է *արտ* «արտ. մշակվող հող» բառի ծագումը հմմտ. հայ. *արտ*, *-ոյ* < հե. *agro, որում, ինչպես Ջահուկյանն է նշում, ոչ անկախ Աճառյանից և նախորդ մյուս ուսումնասիրողներից, ունենք «*g > տ ոչ սովորական անցում». հմմտ. հինդկ. njra, հուն. αγρος, լատ. ager, գոթ. akrs «արտ»: - ԱՃ., ՀԱԲ 1, 337» (ն. տ., էջ 95):

Այնուհետև՝ հայ. *արած*-, որից՝ *արածիլ* «ուտել (խոտ՝ դաշտում), ճարակել», *արածել* (*) «արածեցնել (հոտը՝ նախիրը՝ երամակը և այլն)» և այլն, այլև *արաւտ* (> *արօտ*) «արածելու տեղ, արոտ». հմմտ. *ծ/տ*, այլև *ա/աւ* տարբերակայնություն⁵: Ըստ այդմ՝ *արած* // *արաւտ* տարբերակային արմատը ծագում է հե. *træg՝ ձևից, որ զուգահեռներ ունի՝ հուն. τραγανός «ուտելի», τραγείν «ուտել, արածել» և այլն, իսկ նրա *trog՝ տարբերակից՝ հուն. τρώγω «ուտել. կրծել» և այլն, «ուտիճ» և այլն (ն. տ., էջ 293-294):

Ուշագրավ է, առանձնապես, հայ. *արաւտ* (*արօտ*) բառի ծագման, նախալեզվի ձևի նշանակության վերաբերյալ է. Աղայանի դիտարկումը. «*Արաւտ* բառի համար *աւտ*-ը պետք է ածանց համարել, որով *արած*-, *արատ* բառերի հետ կկապվի միայն արմատով (հնիս. արմատն է *ter/tr, որից՝ g՝-ով աճած treg՝ ձևից ունենք *արած*-, *արատ*-ը պետք է կապել նույն արմատի d-ով ձևի հետ (*tred). հմմտ. կիւր. trwyddo «պատռել, ծակել», լիտ. triedžiu «habe stanken Durchfall» են (=և այլն. Վ. Հ.), և *արաւտ*-ը՝ tr + *աւտ* > *արաւտ*): Այս -*աւտ* ածանցով կազմությունները շատ հին են, ավելի ճիշտ՝ հնության մնացորդներ»⁶:

⁵ Այս երևույթը բավականին հին է և ոչ այնքան տարածված («ներկայացնում են մասնավոր դեպքեր»), որ նկատելի է նաև պայթաշփականների համակարգում. հմմտ. *աղաչել* // *աղաթթ* (> *աղթթթ*), *ամաչել* // *ամաթ* (> *ամթթ*), *զգածիմ* «հագնել, վրան առնել» // *զաւտի* (> *զօտի*), *ճանաչել* (**ճանաչել*) // *ճանաթ* (> *ճանթթ*) և այլն, որոնք բաղաձայնական, այլև ձայնավոր / երկբարբառ տարբերակվածության նկատառումով առանձին ուշադրության առարկա են եղել նախկինում, թեև ունեն նաև վերանայման նորովի մեկնաբանման կարիք: Հմմտ. Գ. Ղափանցյան, Հնէաբանական մի քանի մնացորդներ հայերենում // «Տեղեկագիր», 1927, 2, էջ 3-4: Նույնը, Ընդհանուր լեզվաբանություն, հ. 1, Ե., 1939, էջ 208: Է. Բ. Աղայան, Գրաբարի քերականություն, հ. 1. Մինխրոնիա, գիրք Ա. Հնչյունաբանություն, Ե., 1964, էջ 317:

⁶ Է. Բ. Աղայան, Բառաքնական և ստուգաբանական հետազոտություններ, էջ 25:

Առավել ուշագրավ է հայ. *արաւտ* (*արօտ*) բառի դեպքում հնդեվրոպական նախաձևի վերականգնման վերաբերյալ Գ. Ջահուկյանի դիտարկումը՝ հատկապես հե. *g' > տ «ոչ սովորական անցման» առնչությամբ. «Բնիկ հնդեվրոպական՝ *træg' - [*ter-] «տրորել, շփել, շփելով մաշել, ծակել» արմատից՝ *g'-ի տ արտացոլմամբ (հմմտ. *ag'ro > *արտ*, *g'rlou- > *տալ* «տազերկին» և այլն) և լ-ի ներմուծմամբ (*ա*-ի երկբարբառացմամբ, ինչպես՝ *մաւտ* (*մատոյիլ*) և *յաւտ* (*յատանել*) բառերում. հմմտ. հուն. τρώω «ուտել (հում բան), կրծել», թոխ. ԱԲ trāsk «որոճալ», հայ. *արածել*: - ԱՃ., ՀԱԲ 1, 349-350) (Ջահուկյան, 2010, էջ 85):

Արատ // *արաւտ* արմատը (ձայնդարձի *ա/աւ* աստիճանով) ծագում է հե. *træg' - արմատից (հմմտ. հուն. τρώγω «կրծել, ուտել»), թոխ. A և B trāsk «ծամել»⁷: Այնուհետև, այդ նույն արմատից է ծագում հայ. *արտ* «հանդ, դաշտ» բառը (հմմտ. բրբռ. *արձ-ալ* «արածել»՝ խուլի ձայնեղացմամբ)՝ կազմելով արմատի ձայնդարձի ստորին՝ զրո աստիճանը⁸:

Ըստ այսմ՝ հայերենում անհրաժեշտ է միմյանցից տարբերել *արտ* բառի երեք համանուն՝ *արտ* (< հե. *ag'-ro «դաշտ, արտ»), *արտ(ա)*- («դուրս» իմաստով նախածանց) և *արտ* (< հե. *træg' - «արածել, արաւտ»): Պետք է կարծել, որ ստուգաբանորեն *արտ*-ը («ճարակ, արած-ել»), կապվում է *արատ*, *արաւտ* բառերին, իբրև ծագումնային ընդհանրություն ունեցող միավորներ:

Արատ և *արաւտ* բառերի այն ստուգաբանությունը, որ բերվում է Գ. Ջահուկյանի կողմից, այդ բառերը ծագած համարելով հե. *træg' -ից, տվյալ դեպքում, միանգամայն համոզիչ է և ընդունելի⁹: Սակայն պետք է ավելացնել, որ այն տվյալ դեպքում սահմանափակվում է *արատ*, *արաւտ* և *արած* բառերով, այսինքն՝ չի տարածվում *արտ*-ի վրա, իբրև նրանց հետ ծագումնային ընդհանրություն ունեցող վաղնջական ժամանակներից եկող միավոր: Այնինչ, ինչ-

⁷ Տե՛ս Գ. Բ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 153, այլն՝ էջ 253: Ի դեպ, աշխատության բառային զուգաբանությունների ցանկում նշվում է թոխ. (= թոխարական) զուգաբանության մասին (էջ 153), իսկ բարբառային հնչյունական տարբերակների թվարկման ժամանակ այդ զուգահեռը չի նշվում (էջ 253): Եվ թոխ. զուգահեռը բերում ենք ըստ հեղինակի մյուս գրքի՝ Դ. Բ. Джаукян, Сравнительная грамматика армянского языка, Ереван, 1982, էջ 57:

⁸ Հմմտ. Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 3, Ե., 1957, էջ 37:

⁹ Տե՛ս նաև Ա. Ա. Աբրահամյան, Բառաբանական դիտողություններ // ՀՍՄՀ ԳԱ «Տեղեկագիր» (*հասարակական գիտությունների*), 1958, 4, էջ 62-63:

պես նկատում ենք, այդ շարքը համալրվում է *արտ* («արատ, արած-ել») բառով, որպիսով ավելի են ամբողջանում մեր պատկերացումները ծագումնային որոշակի ընդհանրություն ունեցող բառերի ողջ փնջի վերաբերյալ:

Այս դեպքում լրացուցիչ օրինակ է հայ. (գրական) *ծ* > բբբ. *ձ* անցումը՝ կապված հայ. *ծ//տ* տարբերակայնության հետ: Վերջինիս լուծմանն ըստ ամենայնի անդրադառնալը թողնելով հետագային՝ այստեղ ակնարկի ձևով նշենք մի քանի հիմնական դրույթներ:

Հայ. (բբբ.) *արձալ* «արածել» (գրական՝ *արատ* // *արած*) (Մուշ, Ալշ.) (հմմտ. *խաւարտ* // *խաւարծի*, *բուտ*, *բտել* // *բոծ*, *բուծել*, *պղտ-որ* // *պիղծ* և այլն) ձևը ներկայացնում է հին գրական հայերենի *ծ* > *ձ* անցումը (խուլի ձայնեղացում), որը ոչ այլ ինչ է, քան հին գրական հայերենի բարբառային հիմքի (Այրարատ, Տարոն-Տուրուբերան) վերածում նոր բարբառային հիմքի, որ չի անցել նոր գրական հայերենին, հավանաբար գրական (գրավոր) ավանդույթի պահպանման հետևանքով (վերջինս ավանդական շարունակությունն է հին գրականի, քան ընդհանուր առմամբ նոր հիմքի վրա բարձրացած), ուստի հայ. (բբբ.) *ձ*-ով ձևը (*արձալ* և այլն) մնացել է միայն իբրև բարբառների բնորոշ յուրահատկություն, և ըստ այդմ կարելի է անել մի քանի վարկածային (հիպոթետիկ) ենթադրություն:

ա) Հին գրական հայերենի բարբառային հիմքը, ինչպես գիտենք, ըստ դասական բարբառագիտության տվյալների, հին հայերենի բարբառներից մի որոշակի խմբի բարբառներն են (Այրարատ, Տարոն-Տուրուբերան), որոնցում, հավանաբար, եղած պիտի լինի, տվյալ դեպքում, *ծ*-ով (ավանդաբար՝ խուլ բաղաձայնով, ըստ նոր ուսումնասիրությունների՝ այլ որակի) *արածել* (հմմտ. *արատ* «արածելը. արածելու վայր՝ տեղ» և այլն) ձև, որն էլ անցել է գրական լեզվին¹⁰:

բ) Հին գրական հայերենում *արածել* («արածելը. արածելու վայր՝ տեղ» և այլն) ձևում *ծ*-ն ունեցած պիտի լինի ոչ թե խուլ, ինչպես լիովին ընդունված է հայերենի դասական համեմատաբանության մեջ, այլ, այսպես կոչված, ձայնածերպային (գլոտալ) արտասանություն (<*trəg'-), որը, ի թիվս մի շարք այլ համակարգային ձևով ներկայացող փաստերի, առանձնապես՝ հայերենի,

¹⁰ Գ. Բ. Զահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972:

իբրև ամենաարխաիկ վիճակ ներկայացնողի, այլև ցեղակից լեզուներից մի քանիսի, վերջին ժամանակներս հիմք է առաջարկելու արմատապես վերանայել հնդեվրոպական բաղաձայնական համակարգը (նոր՝ ձայնածերպայինների շարքի (**(p)*), **t*’, **k*’) առանձնացմամբ), որպիսով բոլորովին նոր խնդիրներ են ծագում հնդեվրոպական լեզուների ուսումնասիրության մեջ¹¹: Ի դեպ, այդ խնդիրների լուծման ուղղությամբ հայերենի համեմատական ուսումնասիրության բնագավառում նոր աշխատանքներ են հարկավոր:

գ) Ըստ վերը ասվածի՝ կարելի է մտածել, որ *արածել* (ծ-ով) ձևը նոր գրական հայերենում (գրավոր ճանապարհով) ժառանգություն է հին գրականից, քան նոր բարբառային որևէ ձևի հիմքով դրսևորում, այսինքն՝ նոր գրական հայերենում *արածել*-ը (և այլն) գրական փոխառություն է լեզվի հին վիճակից, ոչ թե նոր գրական հայերենի բարբառային հիմքի (Արարատյան և այլն) արտահայտություն:

դ) Նման տարորոշումը հիմնված է ոչ թե ավանդական, այլ նոր տեսական բարբառագիտության հիմնարար դրույթի վրա (տե՛ս նաև վերը բերված 2-րդ կետը):

Ըստ այսմ՝ հայ տեսական բարբառագիտությունը, կարելի է ասել, պատկանում է ապագային՝ ի հակադրություն եղած, ընդհանուր առմամբ գործնականի (կամ ավանդականի, ավելի ստույգ՝ նկարագրականի), որը, անշուշտ, ունեցել է մեծ ձեռքբերումներ: Այլ կերպ ասած՝ մինչև այժմ հայերենի բարբառների գիտական ուսումնասիրությունը (որևէ հատկանիշով կամ հատկանիշներով դասակարգում, առանձին բարբառների նկարագրություն և այլն) գրեթե զերազանցապես եղել է գործնական բնույթի, քան տեսական հարցադրումների և լուծումների մեջ (Ք. Պատկանյան, Հ. Աճառյան, Ա.

¹¹ Տե՛ս Ս. Պ. Դ. Խոփեր, Типология проиндоевропейского набора сегментов // “Новое в зарубежной лингвистике”, вып. XXI, М., 1988, էջ 160-172 (= P. J. Hopper, Glottalised and murmured occlusives in Indo-European // “Glossa”, 3, էջ 141-166): Նույնի Կրկն “decem” и “taihun”: индоевропейская изоглосса, *նույն տեղում*, էջ 173-182 (= *Idem*, “Decem” and “taihun”: An Indo-European isogloss // “Bono Homini Donum. Essays in Historical Linguistics in memory of Alexander Kerns”, part I, Amsterdam, 1981, էջ 133-142): Դ. Բ. Գամկրելիձե, Բյա. Բ. Իվանով, Лингвистическая типология и реконструкция системы индоевропейских смычных // “Конференция по сравнительно-исторической грамматике индоевропейских языков. Предварительные материалы”, М., 1972, էջ 15-18:

Ղարիբյան և ուրիշներ)¹²: Բուն իմաստով տեսական ուսումնասիրություններ այս բնագավառում համեմատաբար ավելի ուշ են երևան գալիս և մասնակիորեն են առանձնանում՝ զուգընթաց գործնականին (Գ. Ջահուկյան և ուրիշներ)¹³:

Ըստ այսմ՝ արդի բարբառագիտության առանցքային խնդիր են նախագրային հայերենի բարբառային տարբերակվածության, գրավոր շրջանի գրական լեզուների և նրանց բարբառային հիմքի հարցերը, հին և նոր բարբառների (ենթաբարբառների, խոսվածքների և այլն), առանձնապես միջին գրական հայերենի բարբառների (եթե ոչ նաև ենթաբարբառների, խոսվածքների և այլն) հարաբերակցային քննությունը, չի բացառվում նաև այն, որ վերջիններս հետագա դրսևորումն են հին հայերենի բարբառների, հիմք են նոր հայերենի բարբառների, այսինքն՝ արգասավոր և անխափան միջին գլիծ, որն առանձին խնդիր է այս բնագավառում:

Այսպես, ունենք նաև *արտ(ա)*- («դուրս» իմաստով նախածանց) բառ-բաղադրիչը, որ հանդիպում է հայերենի նախագրային շրջանից եկող, օրինակ, *արտախոյր* բառում, վերջինս կազմությամբ բարդ բառ է՝ բաղադրված *արտ(ա)*- և *խոյր* «արևելյան թագ, պսակ, փաթոց», ավելի հին՝ «ծածկոց» մասերից (հմմտ. *արտախուրել* «գլուխը բանալ») մասերով¹⁴: Ի դեպ, Մխիթար Սեբաստացու բառարանում ունենք *արտախուրակ*, որ բացատրվում է՝ «Բառս այս ելան է ի բառեն խոյր, որ է ծածկոյթ գլխոյ, այսինքն գլխարկ կամ թագ և այլն: Եւ աստ արտախուրակ, այսինքն՝ արտաքուստ երևելի խուրիկ, որ և ռամկօրէն ասի մէնտիլ, զոր ի հնումի մեծամեծ իշխանքն արևելից դնէին ի գլուխս իւրեանց»¹⁵:

Արտ // *արծ* տարբերակայնությունը տարածվում է նաև *արտորալ* «շտապել. փութալ» և *արտոյտ* «աբեղաձագ (թռչուն)» բա-

¹² Ավելորդ ենք համարում նշել հիշյալ հեղինակների՝ մեր այս թեմային վերաբերող կարևորագույն աշխատանքները:

¹³ Նկատի ունենք Գ. Բ. Ջահուկյանի «Հայ բարբառագիտության ներածություն» (Ե., 1972) և «Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան» (Ե., 1978) աշխատությունները:

¹⁴ Ավելի մանրամասն տե՛ս Վ. Գ. Համբարձումյան, Մովսես Խորենացու Պատմության «Տենչայ Սաթենիկ տիկին» հատվածը // «Պատմա-բանասիրական հանդես», 1995, 2, էջ 232-233:

¹⁵ Բառգիրք հայկազեան լեզուի ի Մխիթարայ Սեբաստացոյ, հ. 1, Վենետիկ, 1749, էջ 112: Հմմտ. «Սոնան էր, զառ մանդիլով նորահարսը, լույս ատամներով այն աղջիկը»: Կամ՝ «Ու հանկարծ, երբ սիմինդրի մարգերում երևաց գլխի զառ կապույտ մանդիլը, ինքը պահվեց դռան հետևը» (Ա. Բակունց, Երկեր, Ե., «Սովետական գրող» հրատ., 1985, էջ 74):

ների վրա՝ իբրև բնիկ բառապաշարի միավորներ: Ըստ այսմ՝ հիշյալ բառերի քննությունը ևս ցույց է տալիս, որ պայթական խուլ *տ-* ի և նրա տարբերակ *ծ-*ի առնչությունը լրացուցիչ օրինակ է հայերենի պայթականների հնչյունական հարաբերակցության վերանայման համար, որ առաջարկված է համեմատական լեզվաբանության մեջ վերջին ժամանակներս:

В. Г. Амбарцумян. Этимологии: арм. *արտորալ* [artoral] «торопиться», *արտոյտ* [artoyt] «жаворонок» - Этимологически [art] («пастбище, кормить») связано со словами *накормить* (<* arat (дефект) и *пастбище*, как единицы имеющие общее происхождение (<и.е. * træg'-), которые также связаны с Армянскими словами [artoral] («торопиться») и artoyt («жаворонок»), не имеющие действительной этимологии в настоящее время.

V. G. Hambardzumyan. Etymology: Arm. *արտորալ* [artoral] «to hurry», *արտոյտ* [artoyt] «lark» - Etimologically [art] («pasture, to feed») is bound to the words *to feed* (<* arat (defect) and *pasture*, as the units having common origin (< i.e. * træg'-), which are also related to the Armenian words [artoral] («to hurry») and [artoyt] («lark»), that have no valid etymology at present.

**ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՄԱԽՍ «ՍԵԳ, ՊԵՐՃ»,
ՄԱԽՍԻ «ԶԻՆԱՐ, ԲԱՐԴԻ»**

Բանասիր. գիտ. դոկտոր Ա. Ե. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Ըստ հայոց ավանդական պատմության (Խորենացի, Ա.Ժ-Ի, Սեբեոս, Ա)՝ Հայկ նահապետի ավագ որդին՝ Արամանյակ/Արմանյակը, Հայկի գավառից՝ Հարքից տեղափոխվում է Արարատյան դաշտ և հաստատվում Արագած լեռան ստորոտին: Նրա որդի Արամայիս/Արմայիսը այդտեղ հիմնադրում է երկրի առաջին մայրաքաղաքը և կոչում այն իր անունով Արմավիր: Շատ դարեր անց Վաղարշակ արքան Արմավիրում մեհյան է շինում և այնտեղ կանգնեցնում արեգակի, լուսնի և իր նախնիների արձանները (Խորենացի, Բ.Ը): Նրա թոռ Արտաշեսը Ասիայից (այսինքն՝ Փոքր Ասիայից) պղնձաձույլ ոսկեզօծ արձաններ է բերում և նույն տեղում, հին արձանների փոխարեն, կանգնեցվում են Ապոլոնի և Արտեմիսի, այսինքն՝ նույն գործառության հունական աստվածների (արևի աստծու և լուսնի դիցուհու) արձանները: Ազաթանգեղոսը, պատմելով արդեն Արտաշատ տեղափոխված այդ արձանների մասին, աստվածներին անվանում է Տիր և Անահիտ (Ազաթանգեղոս, էջ 778-779): Որևէ վայրում երբևէ հաստատված պաշտամունքը սրբության մեծ իներցիա է հաղորդում այդ տարածքին: Պաշտամունքները վերանվանվում են և վերափոխվում, բայց սրբավայրերի սրբազան էությունը և նրանց պաշտամունքի առանձնահատկությունները պահպանվում են¹: Արևը և լուսինը տարբեր ժողովուրդների առասպելներում և լեգենդներում հանդես են գալիս փոխկապակցված՝ որպես հայր ու որդի, երկվորյակներ, եղբայրներ, եղբայր և քույր²: Եվ մանրամասն քննությունը ցույց է տալիս, որ արևի և լուսնի պաշտամունքը եղել է Արմավիրում ամենահնագույն ժամանակներից. Արամանյակը և Արամայիսը վերա-

¹ Տե՛ս օրինակ *Ա. Պետրոսյան*, Հայկական դիցարանի հնագույն ակունքները, *Պատմա-բանասիրական հանդես*, 2004, էջ 206: Ուրարտական և նախաուրարտական պաշտամունքային կառույցներից մինչև քրիստոնեական միջնադար հասած սրբավայրերի մեծաքանակ օրինակներ տե՛ս *Մ. Հմայակյան*, *Մ. Մանասյան*, Ուրարտական պաշտամունքային կառույցների և քրիստոնեական սրբավայրերի առնչությունների շուրջ // *Հայոց սրբերը և սրբավայրերը*, Ե., 2001, էջ 222-233:

² *Вяч. Вс. Иванов*, Лунарные мифы // *Мифы народов мира*, т. 2, М., 1982, с. 78.

կանգնվում են որպես, համապատասխանաբար, արևի և լուսնի հետ կապված դիցաբանական կերպարներ³:

Արամանյակից և Արամայիսից մի քանի սերունդ անց իշխում է նրանց հետնորդ Արա Գեղեցիկը, որին հաջորդում է նրա նույնանուն որդին՝ Արայան Արան: Հերոսի՝ հոր անունը կրելը ցույց է տալիս, որ նա հոր մի երկրորդ տիպարն է (առասպելում անունը կերպարը բնորոշող ամենակարևոր գործոններից է): Վերջինիս որդին էր Անուշավանը, որը կոչվել է *Մասանուէր* (կամ, համաձայն երկու ձեռագրի, հենց *Մասու* է անվանվել, որը քիչ հավանական է)⁴: Հերոսն այդպես է կոչվել, ըստ Խորենացու, այն պատճառով, որ նվիրված է եղել Արմավիրում գտնվող Արամանյակի *սասուհ* ծառերին, որոնց սոսափյունով հնում գուշակություններ են արվել (Խորենացի, Ա. Ի):

Արա Գեղեցիկը համարվում է հինարևելյան «մեռնող և հառնող», կամ «գոհվող» պատանի աստվածությունների հայկական տարբերակը⁵: Այս աստվածությունները հանդես են գալիս որպես մեծ մայր դիցուհու սիրեցյալներ, որոնք գոհվում են այդ դիցուհու սիրո պատճառով: Ակկադական առասպելաբանության մեջ դիցուհին Իշտարն է, Թամուզի սիրեցյալը, Ատտիսի առասպելում՝ Կիբելեն, Ադոնիսի դեպքում՝ Ափրոդիտեն: Հայոց ազգածին ավանդության մեջ Արա Գեղեցիկին սիրահարվում է Ասորեստանի «վաճառ» թագուհի Շամիրամը: Արան մերժում է Շամիրամին և գոհվում նրա դեմ պատերազմում, բայց Շամիրամը հայտարարում է, որ իր աստվածները (արալեզ/առլեզները) նրան լիզել-վերակենդանացրել են: Շամիրամը (հուն. Սեմիրամիս) հունական աղբյուրներում համարվել է միջագետքյան Իշտարին համապատասխան սիրիական մեծ աստվածուհու՝ Դերկետոյի դուստրը և նրա վիպական՝ պատմականացած տարբերակն է: Հայկական լեգենդներում նույնպես Շամիրամը հանդես է գալիս որպես հեթանոսական դիցուհիների մի ուշ ժամանակաշրջանի տարբերակ՝ միջագետքյան Իշտարի,

³ Ա. Պետրոսյան, Ն. Տիրացյան, Հայոց առաջին մայրաքաղաք Արմավիրը պաշտամունքային կենտրոն // § *Պատմաբանասիրական հանդես*, 2012, 1, էջ 173-174:

⁴ Ղ. Ալիշան, Հին հուստոք կամ հեթանոսական կրօնք հայոց, Վենետիկ – Ս. Ղազար, 1895, էջ 70-71: *Մովսէս Խորենացի*, Պատմութիւն հայոց, քննական բնագիրը Մ. Աբեղեանի և Ս. Յարութիւնեանի, Ե., 1991, էջ 63, ծան. 20:

⁵ Ա. Մատիկեան, Արա Գեղեցիկ, Վիեննա, 1930. Գ. Ղափանցյան, Արա Գեղեցկի պաշտամունքը, Ե., 1944:

ասորական Դերկետոյի և հունական Ափրոդիտեի հայկական վիպական համապատասխանություն⁶:

Շամիրամ անունը ծագում է մ.թ.ա. IX դարավերջի ասորեստանյան Շամմուրամատ թագուհու անունից, այսինքն՝ համեմատաբար նոր է: Ի՞նչ պիտի լիներ նրա հին, աստվածային անունը: Շամիրամը հայկական ավանդության մեջ հանդես է գալիս որպես Նինվեի թագուհի, իրականում Նինվեի հին աստվածուհու վիպականացած կերպարն է: Նինվեի հնագույն դիցուհին խուռական Շաուշկան է, որն առաջին անգամ հիշվում է մ.թ.ա. 3-րդ հազարամյակի վերջին, Šauša անունով, իսկ հետագայում նույնացվել է որպես «Նինվեի Իշտար»⁷ (Իշտարի՝ տարբեր քաղաքներում պաշտվող կերպարները տարբեր էին իրարից)⁸: Հնարավոր է, որ այդ դիցուհու կերպարը ծագում է Նինվեի շրջանի հնագույն՝ մինչ-խուռական բնակչության կրոնից, բայց, խուռիները, փոխառելով հին կերպարը, նոր՝ խուռական անունով էին կոչել նրան՝ Šauša-ն իմաստավորվում է որպես «Մեծ, Հոյակապ»: Այս Իշտար-Շաուշկան կոչվել է նաև ուղղակի «Նինվեի թագուհի», «նինվեուհի», և նրա խուռական անունը հիշվել է Նինվեում մինչև մ.թ.ա. 8-րդ դ. վերջը, այսինքն՝ տասնհինգ դար: Շամիրամն այսպիսով պետք է նույնացվի Նինվեի Իշտար-Շաուշկայի հետ՝ որպես նրա պատմականացած տարբերակը: Այս անունը հնչել է Sausa և Sa(w)uska (ասորեստանյան, ապա և խուռական ու խեթական սեպագրում ճ-ով հաղորդվել է s հնչյունը, իսկ -k- տարրն ածանց է, որը բացակայում է անվան հնագույն տարբերակում)⁹: Նրա պաշտամունքը մ.թ.ա. երկրորդ հազարամյակից լայն տարածում է ունեցել՝ հասնելով Փոքր Ասիա, Խեթական կայսրություն, որտեղ ունեցել է պաշտամունքի բազմաթիվ կենտրոններ:

Շամիրամի և Իշտար-Շաուշկայի (Մաուսա, Սաուսա) նույնացումը հիմք է տալիս ենթադրելու, որ խուռական Շաուշկա/Մաուսայի հուշերը պահպանվել են հայոց մեջ Արա Գեղեցիկի և նրա հա-

⁶ Տե՛ս օրինակ *Մ. Աբեղյան*, Երկեր, հ. 7, Ե., 1975, էջ 154-165:

⁷ Այս մասին տե՛ս օրինակ *E. Laroche*, Glossaire de la langue hourite // *Revue hittite et asianique*, t. XXXIV-XXXV. Paris, 1976-77, էջ 220: *A. Leick* A Dictionary of Ancient Near Eastern Mythology. London, New York. 1991, էջ 150, նաև *G. Beckman*, Ishtar of Nineveh Reconsidered // *Journal of Cuneiform Studies*, 50, 1998, էջ 1-10:

⁸ *И. М. Дьяконов*, Архаические мифы Востока и Запада, М. 1990, էջ 229, ծան. 129; *G. Beckman*, նշվ. աշխ., էջ 3-4:

⁹ *К. Вильке*, Ти'амат-башти и богиня Ша(в)уш(к)а ниневийская // *Древний Восток*, 5, Ереван, 1988, էջ 24, ծան. 3, հմմտ. *G. Beckman*, նշվ. աշխ., էջ 2, ծան. 14:

ջորդների՝ Արայի ու Անուշավանի առասպելներում: Հայերենում Sausa-ն պիտի դառնար *Սաւս (վերջին վանկի կանոնավոր անկմամբ): Արայի որդին, որը, ինչպես ասվեց, ուղղակի Արայի մի երկրորդ տիպարն է, Շամիրամի հովանավորյալն էր և մեռնում է Շամիրամի հետ (Խորենացի, Ա.Ի): Կարելի է կարծել, որ նա ուղղակի երկրորդ Արան էր, այսինքն՝ նույն Արան, որը զոհվելուց և վերակենդանանալուց հետո ապրեց Շամիրամի հետ և հենց նրանից էլ սերեց իր որդուն՝ Սոսանվեր Անուշավանին: Եվ թեև Խորենացին այս անունը մեկնաբանում է որպես «սաւս(ի) ծառերին նվիրված», այն կարելի է մեկնաբանել նաև որպես «Սաւս-ի նվեր», «Սաւս-ի տուրք (որդի)»: Սա է առավել հավանական մեկնաբանությունը հին դիցակիր անվանաբանության համատեքստում, որում բազում են աստվածների և դիցաբանական այլ կերպարների կողմից «տրված» կոչվող անունները՝ հմմտ. հուն. Ապոլոդորոս, Հերոդոտոս, իրան. Bagadāta (> հայ. Բագարատ), հայ. Աստվածատուր, ռուս. Բոգդան ևն: «Որևէ աստծու տուրք/նվեր» կոչվող անունները բազում են խոռոչներում և կազմվում են հետևյալ կաղապարով Ar(i)-N կամ N-ari, որտեղ N-ն աստծու անունն է, իսկ ar(i)-ն, ar- «տալ» արմատից, «տուրք, տված» (հմմտ. հուն. Դորոթեա և Թեոդորոս «աստծու տուրք»՝ նույն արմատների շրջված հերթականությամբ ստեղծված անունները): Որպես օրինակ հիշենք Ar(i)-Tešub և Tešub-ari ձևերը, ամպրոպի աստված Թեշուբի անունից: Ar-Šauška անձնանունն ավանդված է Նուզիից¹⁰, իսկ Šauš(k)a-ari-ն, թեև ավանդված չէ, բայց միանգամայն հնարավոր մի ձև է (այս անվան «միտաննիական արիական» տարբերակն է Šauššadata, հմմտ. Bagadāta):

Այսպիսով, կարելի է կարծել, որ *սաւս*-ը հայ հերոսի անվան մեջ խոռոչական դիցանվան արձագանքն է: Հավանական է, որ այդ ծառը եղել է դիցուհու, գուցե նաև նրա սիրեկանի սիմվոլը: Այս առումով ուշագրավ է, որ Արայի կրկնակներից Ադոնիսն ուղղակի ծնվում է գմռնենուց, իսկ Ատտիսը՝ նոնենուց կամ նշենուց (դիցուհին առասպելում հանդես է գալիս ոչ միայն որպես «զոհվող» հերոսի սիրուհի, այլև մայր): Ատտիսը նաև մեռնում է սոճու տակ, որն, ակնհայտորեն, նրա սիմվոլն էր (Հռոմում, Ատտիսի տոնախմբության ժամանակ անտառից մի սոճի էին կտրում-բերում Կիբելեի մեհյանն ու զարդարելով պաշտում այն որպես հենց Ատ-

¹⁰ I. J. Gelb, P. M. Purves, A. A. MacRae, *Nuzi Personal Names*. Chicago, 1963, էջ 253:

տիս)¹¹: Դատելով եղած նյութից՝ սուսին՝ Արամանյակին նվիրված ծառը, եղել է Արամանյակի և Արայի առասպելների կարևոր բուսական սիմվոլը, այնպես, ինչպես սոճին՝ Ատտիսի:

Արամանյակը, որպես հայոց կենտրոնական նահանգի՝ Այրարատի և նրա կենտրոնի՝ Արարատյան դաշտի առաջին Հայկյան բնակիչ (Խորենացի, Ա. ԺԲ), այդ տարածքների առաջին էպոնիմն է: Երկրորդը Արա Գեղեցիկն է, որի անունով Այրարատը կոչվել է «դաշտն Արայի» (Խորենացի, Ա. ԺԵ): Ուրեմն, կարելի է ասել, որ Արայի կերպարը որոշ առումներով կրկնում է Արամանյակին. Արան Արամանյակի «երկրորդ տիպարն» է, կամ՝ Արամանյակը «առաջին Արան» է¹²: Ըստ այդմ՝ Անուշավանը «առաջին Արայի» ծառերի նվերը/տուրքն է կամ որդին (հմմտ. Ադոնիսի ծնունդը գմոնենուց): Այդ ծառերի անվանումը նույնական է խուռական դիցուհու անվանը, իսկ դիցուհին էլ վերականգնվում է որպես Արայի զուգորդ, այնպես ինչպես Իշտարը Թամմուզի, Ափրոդիտեն Ադոնիսի և Կիբելեն Ատտիսի համար:

Այսպիսով, պետք է կարծել, որ *սաւս(հ)* բառը, ծառանուններին բնորոշ *-h* (< հ.-ե. **-iyā*, հմմտ. հոգնակի սեռական սաւսեաց ձևը) ածանցով, գալիս է խուռերենից: Այն, ինչպես և *Sausa* դիցանունը, պիտի նշանակեր «մեծ, հոյակապ», որը միանգամայն համապատասխանում է կատարված քննությանը: Եվ հատկանշական է, որ հայերենում *սաւս/սօս* բառը ունի նաև «սեգ, պերճ» նշանակությունը, որը, թեև ըստ Հ. Աճառյանի, կապված է ծառանվան հետ¹³, սակայն պարզորոշ կերպով կարող է բացատրվել այս համատեքստում որպես փոխառություն խուռերենից:

Ծառերի տերևների սոսափյունով գուշակությունները և այս կամ այն պատգամախոսարանին կից սրբազան պուրակները հայտնի են և այլուրեք: Այսպես, անտիկ ավանդություն գուշակություններ էին անում Դոդոնեի կաղնու տերևների սոսափյունով, հայտնի էին և Ապոլոնի որոշ պատգամախոսարանների մերձակա սրբազան պուրակները: Հաշվի առնելով, որ հետագայում Արմավիրում հաստատվում է արև-Ապոլոնի պաշտամունքը, Կ. Տրևերը եզրակացրել է, որ Արմավիրում հնուց ի վեր եղել է արև աստծուն

¹¹ Ջ. Ֆրեդեր, Ոսկե ճյուղը, Ե., 1989, էջ 411, 415:

¹² А. Е. Петросян, Армянский эпос и мифология, Ереван, 2002, с. 62.

¹³ Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. Դ, Ե., 1979, էջ 230:

նվիրված պաշտամունք և պատգամախոս¹⁴: Եվ հատկանշական է, որ Արմավիրից Արտաշատ տարված Տիր-Ապոլոնի մեհյանը գտնվում էր Երագամոյն կոչված վայրում, իսկ նրա պաշտամունքը բնութագրվում է որպես «երագացոյց երագահան» (Ագաթանգեղոս, էջ 778): Ըստ այդմ՝ Տիրը ներկայացվում է պատգամախոսական գործառնություն ունեցող հնագույն արևային աստվածության ժառանգը: Առասպելի տրամաբանության համաձայն՝ այդ աստվածը պետք է լիներ Արամանյակը, որին և նվիրված էին ծառերը:

Ֆրաբարյան *սաւս*, *սաւսի* (նոր՝ *սոս*, *սոսի*) բառերը մեկնաբանվում են որպես «բարդի», «կաղամախի», «մայրի», «սոճի», «նոճի», բայց առավել ընդունված նշանակությունն է «չինար, արևելյան պլատան»¹⁵: Նշված բոլոր ծառերի ընդհանուր հատկանիշն է բարձրությունը (հմմտ. «չինարի/բարդու հասակ» արտահայտությունը), և հնարավոր էր ենթադրել, որ *սաւս(h)* բառը հնում նշանակել է ուղղակի «բարձր, մեծ, սլացիկ ծառ» և վերագրվել տարբեր ծառատեսակների (հմմտ. խուռ. šauša «մեծ, հոյակապ», նույնն է և հայ. *սաւս* «սեգ, պերճ». նշված բոլոր ծառերը աչքի են ընկնում բարձրությամբ, վեր ձգվող սլացիկ, նետաձև հասակով): Արամանյակի սոսիները սովորաբար մեկնաբանվում են որպես չինարի ծառեր¹⁶: Սակայն պետք է նշել, որ Տիր-Ապոլոնի արևային կերպարի առնչությամբ *սաւսի* բառի հավանական նշանակությունն է նաև բարդին: Հայոց մեջ մինչև ուշ ժամանակները պահպանվել էր արևորդիների աղանդը, որի հետևորդները, արևի հետ միասին (որը նույնացրել են Քրիստոսի հետ), պաշտել են բարդի ծառը¹⁷:

А. Е. Петросян. Этимологии: арм. saws 'пышный, великолепный', арм. sawsi 'платан, тополь'. Согласно традиции одним из мифических патриархов армян был Анушаван Sawsanuer, чей эпитет осмысливается 'Подарок деревьев sawsi' или «Данный деревьями sawsi'. Мифологический контекст показывает, что деревья sawsi были связаны с мифом деда Анушавана - умирающего и воскрешающего героя Ара Прекрасного и его паредры – ассирийской царицы Шамирам (греч. Семирамиды). Она в мифе выступает царицей города Нинве и была эпическим вариантом местной

¹⁴ *К. В. Тревер*, Очерки по истории культуры древней Армении, М.-Л., 1953, с. 105: Ըստ Խորենացու՝ տերևների սոսափյունով հայոց աշխարհում «սովորեցին» գուշակություններ անել («սովորեցան ի հմայս յաշխարհիս Հայկազանց»), և տեսականորեն չի կարելի բացառել, որ գուշակության այդ եղանակը Հայաստան է բերվել ուշ, հելլենիստական արձանների հետ:

¹⁵ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 2, Վենետիկ, 1837, էջ 768:

¹⁶ Տե՛ս, օրինակ, Ղ. *Ալիշան*, նշվ. աշխ., էջ 71:

¹⁷ Ղ. *Ալիշան*, նշվ. աշխ., էջ 72:

богини – Ша(в)ушки или Иштарь Ниневийской. Ее древнее хурритское имя – Sausa 'великая/великолепная' совпадает с арм. saws 'пышный, великилепный' (с регулярной апокопой). А чинара и/или тополь были символами ее мифа.

A. E. Petrosyan. Etymologies: Arm. sawsi 'magnificent, great', Arm. sawsi 'platan, poplar'. According to the tradition, one of the ancient Armenian mythic patriarchs was Anushavan Sawsanuer, whose epithet is interpreted as 'Gift of the sawsi trees' or 'Given by the sawsi trees'. Mythological context shows that the sawsi trees were connected with the myth of the grandfather of Anushavan, the dying and resurrecting hero Ara the Handsome and his consort, the Assyrian queen Shamiram (Greek Semiramis). She in the myth is represented as the queen of the city of Nineveh and was an epicized version of the local goddess – Saus(k)a or Ishtar of Nineveh. Her ancient Hurrian name, Sausa 'Great/gorgeous', coincides with Arm. saws 'magnificent, great' (with a regular apocope). And the plane and/or poplar trees were the symbols of her myth.

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՀՈՒՇԵՐԻ ԼԵՂՎԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԸ

Բանասիր. գիտ. թեկնածու Ա. Վ. ԳԱԼՍՅԱՆ

Հուշագրությունը (ֆրանս. memoires), ըստ հեղինակի հայեցողության, անցյալի՝ հետաքրքրություն ներկայացնող դեպքերի ու դեմքերի մասին հիշողության գրառում է, որ ունի ժանրային առանձնահատկություն՝ առաջին հերթին գրավոր խոսքի դրսևորման առումով: Այդ ժանրը հանդես է բերում տեսակային բազմազանություն՝ ժամանակակիցների հուշային դիմանկարներ, հեղինակի ինքնակենսագրություն, մեծ մարդկանց զավակների պատմածներ, գրողի կյանքի գլխավոր դեպքերի խաչաձևում ժամանակի գրամշակութային և հասարակական իրադարձություններին և այլն: Թեմատիկ առումով ևս կա տարբերություն. հայտնի են *թատերական, քաղաքական, պատրիարքական, անձնական հուշեր* և այլն: Ժանրի բազմազանության մեջ նկատելի են թատերական հուշերը, որոնք լայն առումով ունեն աղբյուրագիտական նշանակություն: Սրանք թատրոնի և դերասանների մասին գրված հուշեր են, որոնց հեղինակները արվեստագետներ են, գրողներ, գիտնականներ: Մենք նկատի ունենք Հասմիկի «Թատերական հուշերը», Պահարեի «Թատերական հուշերը», Վ. Փափագյանի «Հետադարձ հայացք», Գ. Ջանիբեկյանի «Թատրոնի հետ», Վ. Վաղարշյանի «Ընկերներս, բարեկամներս և ես», Դ. Դեմիրճյանի «Հուշեր և խոհեր հայ դրամատուրգիայի և թատրոնի մասին» հուշագրությունները և այլն, որտեղ հեղինակների մեծ մասը ոչ միայն գծագրել է տարբեր թատրոններում անցկացրած իրենց կյանքի շրջանները, այլև ներկայացրել հայ և օտար բեմերի նշանավոր գործիչների դիմանկարները: Հուշագրության էջերում ուրույն ըմբռնումներ կան դերասանական արվեստի այլնայլ հարցերի վերաբերյալ:

Ընդհանրապես հուշագրության հեղինակների կյանքի պահանջները, մասնագիտական գործունեության ձևերը պայմանավորում են հիշողության այս կամ այն տիպի ավելի կամ պակաս չափով արտահայտված առանձնահատկություններ: Օրինակ՝ թատերական հուշերում ավելի հաճախ հանդիպում է հիշողության ակնառու-պատկերավոր տիպը, որն էլ պայմանավորում է խոսքի լեզ-

վական-ռուցվածքային կաղապարը: Կարևոր է փաստել, որ թատերական հուշը՝ որպես գեղարվեստական վավերագրության տեսակ, ինքնուրույն ժանր է, որի լեզվակառուցվածքային քննությունը տեքստի ոճաբանության ուրույն բնագավառ է:

Ընդհանրապես գեղարվեստական վավերագրության ժանրի հեղինակները փորձում են ներկայացնել անցյալի այն իրողությունները, որոնք կարևոր են համարվում գալիք սերունդների համար: Ինչպես նշում է Պ. Սևակը, վերհիշել անցյալը, չի նշանակում տեղափոխվել անցյալ, այլ «անցյալը տեղափոխել ներկա»¹:

Թատերական հուշերը լեզվակառուցվածքային առումով տարբերվում են հուշագրության այլ տեսակներից: Հեղինակի կյանքի պատումներից բացի՝ ներկայացվում են հեղինակային խոհեր ու մեկնաբանություններ այս կամ այն ստեղծագործության վերաբերյալ:

Թատերական հուշերում առավելաբար երևում են լեզվական անհատը՝ հեղինակը՝ իր լեզվամտածողությամբ, և բնորոշները՝ մարդիկ, որոնք, անհատական լեզվական պատյան ունենալով հանդերձ, սովորաբար հեղինակի լեզվական ազդեցության ոլորտում են:

Վ. Վաղարշյանի հուշերի առաջաբանում մեմուարային գրականության հեղինակի դերին է անդրադարձել Ս. Սողոմոնյանը: Ըստ գրականագետի՝ մեմուարային գրականությունն իր սեփական յուրահատուկ ձևը և ուրույն օրենքներն ունի: Ամենահիմնական, ամենապարտադիր օրենքը հեղինակի՝ լեզվագագացողության սահմանի պահպանումն է, որը պահանջում է «նախ շրջապատին նայել, ապա իրենով զբաղվել»: Սկզբում անհրաժեշտ է բարեխղճորեն ցույց տալ այն միջավայրը, որտեղ հասակ է առել ու ձևավորվել հեղինակը, նոր միայն ներկայացնել իր սեփական անձը:

Գրականագետի բնորոշմամբ՝ թատերական հուշերում գործ ունենք իրական դեմքերի, տեղի ունեցած փաստերի, կատարված դեպքերի հետ: Այդ իմաստով մեմուարիստը պատմաբանի բարեխղճությամբ պետք է «ճշմարտորեն վերարտադրի դեպքերն ու դեմքերն այնպես, ինչպես եղել են իրականում»²:

¹ Պ. Սևակ, Անցյալը ներկայացած // «Սովետական գրականություն» (ամսագիր), 1989, 1, էջ 129-133:

² Վ. Վաղարշյան, Ընկերներս, բարեկամներս և ես, Ե., 1959, էջ v:

Ընդգծենք, որ գեղարվեստական վավերագրությունը՝ լայն առումով իբրև ազդեցության եղանակ, իրացվում է խոսքի ներգործության ընդհանուր կադապարով, որը ենթադրում է հեղինակի մտորումները կյանքի տարբեր իրավիճակների, անձնական փորձի, սեփական ապրումների մասին: Ուշագրավ է, որ նա այդ ամենը պատմում է՝ ընթերցողի հետ վարելով բաց երկխոսություն³, որը չպետք է նույնացնել զրույցի ազատ ոճի կամ մտքերի փոխանակության հետ: Բաց երկխոսության կադապարը հիմնովին տարբերվում է առօրյա-խոսակցական զրույցից: Այստեղ իրականությունը ներկայացվում է անձնական կյանքի օրինակով և ոչ թե կյանքի մեխանիկական ընկալմամբ: Հեղինակը գեղարվեստի միջոցով լիցքեր է փոխանցում ընթերցողին, ներգործում նրա վրա՝ հաճախ ձեռք բերելով ընթերցողի համաձայնությունը: Այսօրինակ հատվածներ կան Վ. Փափագյանի «Հետադարձ հայացքում». «*Տեսնում եմ ծիծաղում ես, ընթերցող, և ենթադրում ես, թե արգավանդ մրգաստանում երկար տարիներ թափառելուց հետո՝ իրիկնամուրի ժամին, ժուժկալության վարդապետ եմ դառել քո գլխին, բայց հավատա՛, իմ հարազատ, որ կյանքի բուրումնավետ ծաղկաստաններում մոլորվելիս նույնն եմ մտածել, ինչ հիմա, երբ խոսում եմ քեզ հետ այս տողերով*» (ՎՓՀՀ, 2, 173-174):

Թատերական հուշերի հեղինակի նպատակն է ընթերցողին ոչ միայն համախոհ, այլև գործողությունների մասնակից դարձնելը: Ինչպես նշում է ֆրանսիացի փիլիսոփա և արձակագիր Ժան-Պոլ Սարտրը, հեղինակը և ընթերցողը ստանձնում են մեծ պատասխանատվություն, որովհետև «աշխարհը կանգուն է այդ երկուսի ազատության միացյալ ջանքերով»⁴: Օրինակ՝ Վ. Փափագյանի «Հետադարձ հայացքում» հեղինակը մտերմիկ ոճով դիմում է ընթերցողին՝ գործածելով հրամայական եղանակի բայաձևեր. «*Ապա լսի՛ր ինձ. վե՛ր կաց անկողնուցդ, կյանքումդ գոնե մի գիշեր մա՛ն եկ, օրինակ իմ Երևանում, քո Երևանում: Չե՛, մի՛ ծիծաղիր...*» (ՎՓՀՀ, 2, 117): Երբեմն հեղինակը կարևորում է ընթերցողի կարծիքը. «...Ի՞նչ է կարծիքդ այդ մասին, ընթերցող» (ՎՓՀՀ, 2, 230):

³ Ըստ Վ. Վոլկենշտեյնի՝ բաց է համարվում անկեղծ, անթաքույց երկխոսությունը, որտեղ պարզորոշ և բացահայտ են զրուցակիցների ցանկություններն ու մտքերը: Բաց երկխոսություններին հակադրվում են անուղղակի երկխոսությունները, որոնց բնորոշ է ներքին թաքնված իմաստը: Տե՛ս В. Волькенштейн, Драматургия, М., 1969, էջ 70:

⁴ Ժ.-Պ. Սարտր, Ի՞նչ է գրականությունը. <http://lit-bridge.com/tag>:

Հեղինակի և ընթերցողի միջև տեղի ունեցող բաց երկխոսությունն ստեղծում է նոր աշխարհ: Նրանք միմյանց շաղկապվում են նույն կենսատիրության բաղադրիչներով: Անտարակույս, այդ կենսատիրությամբ նույնական չի կարող լինել յուրաքանչյուրի համար: Նրանց միջև գոյանում է նոր տիրությո՝ չնայած առկա ընդհանրություններին: Ե՛վ գրողի աշխարհը, և՛ ընթերցողի աշխարհը երբեք չեն կորցնում իրենց ինքնատիպությունը: Այս դեպքում գրողի աշխարհը կարող է «քողազերծվել միայն ընթերցողի քննությամբ»⁵:

Ինչպես նկատելի է, գեղարվեստական վավերագրության մշակութային տարածքը և՛ հեղինակին է, և՛ ընթերցողին, որոնք ապահովում են սեփական ես-ի արտահայտությունը:

Մտապահման և վերարտադրության գործընթացում հիշողության մեջ ամրագրված նյութը հեղինակը սովորաբար որոշակի որակական փոփոխությունների է ենթարկում՝ աներկբա ներառելով իր հեղինակային ես-ի քարտեզը: Ժամանակակից մարդու համար անցյալը, ներկան և ապագան կապող գլխավոր օղակը սեփական ես-ն է: Այստեղ հեղինակը դիտվում է սոցիալական և անհատական գծերի համադրությամբ մի կերպար, որը կարող է հանդես գալ սեփական նախաձեռնությամբ ստեղծված երկում:

Առաջադիր ժանրի տարբեր տեսակներ կառուցվածքային հատուկ մուտք ունեն: Թատերական հուշ-դիմանկարների սկզբում հեղինակը տրամադրում, նախապատրաստում է ընթերցողին: Ռ. Զարյանի «Վաղարշ Վաղարշյան» դիմանկարը հետաքրքրական սկիզբ ունի, որտեղ գործածված են *մարդ* բառաձևի տարբեր կիրառություններ. «Կան *մարդիկ*, որ ոչ միայն բնագավառն են զարդարում, այլև քաղաքը, որի բնակիչն են: Երբ այդպիսի *մարդիկ* փողոցում հայտնվում են, ասես քաղաքը փայլ է առնում: ... Վաղարշյանն այդ *մարդկանցից է*» (ՌԶԶԳԵ, 432):

Պատմողը երբեմն թերևս կարող է առաջ է ընկնել տվյալ պահի դեպքերից և անոնսի ձևով ընթերցողին նախապատրաստել գալիք դեպքերին: Այս դեպքում հուշագրական հատվածը ընթերցողին հուշում է, որ հետագա պատումներում մենք դեռ հանդիպելու ենք նույն բնորդին. «Այդ սպայի անուն-ազգանունը Պետյա Ղումարյան էր: Նա պատերազմի տարիներին փողոցում դաստիարակված մի

⁵ Ժ.-Պ. Մարտը, նշվ.աշխ.:

դոչի էր և, դժբախտաբար, ասորճանակը ձեռքին... Սակայն չշտապենք: Նրա հետ մենք նորից կհանդիպենք» (ՎՎԸԲԵՎԵ, 247):

Երբեմն հուշագիրը պատճառաբանված ներկայացնում է շարադրանքի կառուցվածքը. «Չեմ կարող իմ սոսկ թատերական հուշերից դուրս թողնել այս նշանավոր աշուղական «անսամբլը» և ասիա թե ինչու...» (ԴԴՀ, 522)

Հուշերի տարբեր հատվածներում գործածվում են «*հիշում եմ*», «*տարիներ են անցել*» արտահայտությունները, «*Հիշում եմ՝ շատ ու շատ տարիներ դրանից հետո ես հրավիրվեցի մի տեղ՝ կարդալու իմ ֆելիետոնները*» (ԴԴՀ, 524): «*Հիշում եմ նրա շեկ ու առատ բեղերը, կլոր դեղնավուն դեմքը՝ ճերմակ կնճիռներով*» (ԴԴՀ, 517): «*Աղոտ եմ հիշում բովանդակությունը*» (ԴԴՀ, 517): Նկատելի է, որ *հիշում եմ* բայաձևին երբեմն հակադրվում է *չեմ հիշում*-ը: Դեպքերի մանրամասները հաճախ չեն դրոշմվում հեղինակների հիշողություններում. «Չեմ հիշում՝ նա Ռոստոփից էր, թե Թբիլիսիից» (ԳՋԻԱ, 1, 267):

«Տասնյակ *տարիներ են անցել*, բայց հիմա էլ ես հաճախ մտաբերում եմ այն» (ԳՋԻԱ, II, 32): «... *Անցան տարիներ*: Լենինականի Ա. Մռավյանի անվան թատրոնը ինձ հրավիրեց «Երկիր հայրենի» ներկայացման մեջ Գագիկ թագավորի դերը մի քանի անգամ խաղալու» (ՎՎԸԲԵՎԵ, 236):

Ուշագրավ է *մանկություն, հուշ, հիշողություն* հասկացությունների հաճախադեպ գործածությունը: Հասկացությի կարևոր բաղադրիչներից մեկը բառի իմացական հիշողությունն է, լեզվական այդ նշանի իմաստային բնութագրությունը, որն ըստ էության կապվում է բառի արմատական նշանակության և լեզուն կրողների հոգևոր արժեհամակարգի հետ: Օրինակ՝ «Այնպես որ *մանկությունս* անցավ լիակատար չքավորության մեջ» (ԴԴՀ, 515): «Մեկ-մեկ *հիշողությանս* հատորները թերթելիս իմ մտքի մոխիրների տակից կայծին էին տալիս Ժեներայի վառվուռն աչքերը» (ՎՎԸԲԵՎԵ, 109): «Սակայն նկարի պես պարզ դեռ կանգնած է իմ հիշողության մեջ Չմշկյանի Պեպոն» (ԴԴՀ, 529-530): «Միաժամանակ և պատշաճ դասեր առա, ինչը անջնջելի է մնացել հիշողությանս մեջ» (ԳՋԻԱ, 2, 44):

Տեքստի կառուցվածքային միավոր է նաև *մի անգամ* ժամանակային արտահայտությունը. «Մի անգամ էլ շուլալվել էի գերան-

ներին, որոնք գցված էին դեպի կտուրը» (ԳՁԻԱ 1, 11): «Մի անգամ դերասան Չմկյանը Կարինյանի «Վարդան Մամիկոնյան» պատմական դրամայի հերոս Վարդանին է ներկայացնում՝ պատերազմի դաշտում վիրավոր ընկած» (ԴԴՀ, 533):

Նկարագրական խոսքը թատերական հուշերի լեզվի գլխավոր շերտերից է: Գեղարվեստավավերագրական բնագրերում առաջնային են բնակավայրերի նկարագրությունները՝, որոնք ընդելուզվում են պատումի ընդհանուր շղթային՝ ամբողջացնելով ասելիքը:

Վ. Վաղարշյանը հուշերում նկարագրել է Շուշի քաղաքը. «Ա՛խ, Շուշի... Շուշի... Շուշին գեղատեսիլ մի քաղաք էր, տեղական ճերմակ բազալտից կառուցած գողտրիկ տներով և մրգաշատ ու վարդաշատ պարտեզներով: Նա կանգնած էր կլորիկ, ոչ այնքան ծավալուն մի սարահարթի վրա: Պատկերավոր ասում են՝ на пяточке:

Հիմնական խճուղին, որ երկաթուղային Եվլախ կայարանից 106 վերստ ձգվում է դեպի քաղաք, նրա հյուսիսային ստորոտից զիզգազ բարձրանում, թիկունքում թողնում հայկական հին գերեզմանները, քաղաքի միջով անցնում, ապա գնում է դեպի Գորիս, Սիսիան, Երևան: Իսկ քաղաքի արևմտյան և արևելյան թևերը աջ ու ձախ բարձրանում և վերջանում են հսկայական ժայռերի ծայրերին՝ իրենց առաջ բացելով երկու խոր ձորեր՝ արագավազ երկու գետերով, որոնց ափին տարածված են քաղաքամերձ գյուղեր...» (ՎՎԸԲԵՎԵ, 28-29):

Դ. Դեմիրճյանը հետաքրքիր է ներկայացնում տան նկարագրությունը. «Մենք ապրում էինք քաղաքի ամենահարավային ծայրին, մի փոքր տան մեջ: Չորս փոքրիկ սենյակով, մի մառանով և փոքրիկ պարտեզով մի տուն էր դա: Հարավային պատից անմիջապես սկսվում էր հարթ և կանաչ դաշտը, որ գնում էր դեպի Խոսպիու սարը» (ԴԴՀ, 518):

Ինչպես նկատելի է, նկարագրության մեջ հորիզոնի կողմերի գործածությամբ ակտիվ են նաև գործողության շարունակականությունն արտահայտող մի շարք բայեր՝ *սկսվել, ձգվել, բարձրանալ, տարածվել, գնալ, բացել* և այլն, ինչպես նաև կապերը (սարահարթի վրա, քաղաքի միջով, դեպի Գորիս, տան մեջ, դեպի սարը և այլն):

Ուշագրավ են հարազատ մարդկանց (հաճախ ծնողների) դիմանկարները. «Հայրս թեև հարստությունից ընկել էր մի յոթ-ութ տարի առաջ, բայց նրան բոլորն ասում էին՝ Կարապետ աղա...Նա շատ գեր, սև, առատ բեղ-մորուքով, խոշորադեմ, հանդարտաբարո մարդ էր» (ԴԴՀ, 516-517):

Դիմանկարները հաճախ հյուսվում են համեմատության տարբեր հիմքով. այս դեպքում բնորդը համեմատվում է մեկ այլ անձի հետ. «Մկրտիչ Թաշյանը, իրոք, սքանչելի արտիստ էր: Նրա հասակը կարճ էր և դեմքը քիչ նման Պետրոս Ադամյանին: Նա բեղ էր պահում և մազերը հարդարում ճիշտ այնպես, ինչպես Պետրոս Ադամյանի բեղն ու մազերն էին» (ՎՎԸԲԵՎԵ, 244):

Հաճախ երևում է բառի «ֆիզիկական զգացողությունը», որին պետք է ձգտի գրողը: Հիշողության հոսքերը պահպանվում են «վաղեմի պատկերների» տեսքով. «Մեր բակը, մեր թթենին, ինչ-որ գերաններ, բակի միջով քչքչալեն հոսող առուն... և վերջապես պարտեզի վերջում կանգնած ընկուզենին» (ԳՋԻԱ 1, 11):

Թատերական հուշերում բնապատկերը հեղինակի կամ բնորդի հոգեկան աշխարհի բացահայտման հայելին է: Վ. Փափազյանը բառերով «նկարում է» բնության պատկերներ՝ որոշիչներով հագեցած, որտեղ երևում է հեղինակի հիացմունքն ու ձգտումը՝ ներկայացնելու բնության կատարելությունը. «Օ՛, ինչ անմոռաց անակնկալ էր, երբ գիշերը աներազ քնով քնելուց հետո լուսաբացին պատշգամբ ելա: Թեթև մշուշը բամբակի մաքուր ծվենների պես իջել ծածկել էր ընդարձակ լիճը այդ հնամենի դղյակի առաջ, և մի ամբողջ երամակ սիրուն, արագոտն պախրաներ, սև դնչիկները ջրում թաթախած, խմում էին ու երկինք նայում. վաղեմի պարկի բնակիչների շառավիղներն էին այդ պախրաները, որոնց կարող էր մոտենալ միայն սպիտակ ու մենավոր հանդարտ կարապը, որ լող էր տալիս քնած ջրերի լույս հայելում, հեքիաթային մի սիրուն նավի առագաստի պես քամու դեմ պարզած իր զույգ սպիտակ թևերով» (ՎՓՀՀ, 2,245): Այստեղ հայոց լեզուն իրապես փայլում է իր ճոխության, նրբության ու ճկունության բարենասնություններով:

Վ. Փափազյանի «Հետադարձ հայացքը» երկխոսության յուրատեսակ դրսևորում է ընթերցողի հետ: Հուշային պատումներում հեղինակը հաճախ է կիրառում *սիրելի ընթերցող, բարեկամ ընթեր-*

ցող, սրտացավ ընթերցող, համբերող ընթերցող դիմելաձևերը. «Պետք է խոստովանեմ, սակայն, *սիրելի՛ ընթերցող*, որ հենց առաջին տարին ամենաբարի ցանկությամբ հնարավորն արեցին՝ դարձնելու համար ինձ բնակիչը մեր մայրաքաղաքի» (ՎՓՀՀ, 2, 18):

Հատուկ ուշադրության է արժանի թատերական հուշերի բառապաշարային դաշտը: Այդ հուշերը հյուսված են լեզվական կառույցների ինքնատիպ դրսևորումներով: Հուշերում առկա են հատուկ անունների հոգնակիի կիրառության կառույցներ. «Իմ անձնավորած հազարավոր համլետները, օթելլոները բոլորովին առանձին-առանձին անհատներ են» (ՎՓՀՀ, 2, 39): «Պատահել են ինձ դեզդեմոնաներ, որոնց պետք էր խեղդել ներկայացման սկզբից» (ՎՓՀՀ, 2, 96):

Հերոսներին անհատականացնելու համար գործածվում են գրաբարյան կառույցներ, բարբառային արտահայտություններ, արևմտահայերեն տարրեր: Խոսքաշղթան հաճախ կառուցվում է գրաբարյան բառերով, այսպես՝ *երկվարոք* (ՎՓՀՀ, 2, 88), *ի տես* ավսեին եզրակացրի (ՎՓՀՀ, 2, 98), ...կհայտնվի ծնողներիդ, որ *ի Բյուզանդիոն*... (ՎՓՀՀ, 2, 99):

Գ. Ջանիբեկյանի «Իմ աշխարհից» հուշագրության լեզվում ընդգծվում է Ղարսի բարբառով արտահայտություն. «... Եվ կանանցից մեկը, որ համարյա հասակակից էր մորս, դարսա բարբառով դարձավ նրան.

-Քույրի՛կ ջան, էդ դու ինչըխ սիրտ ունիս... վախից մենք լեղաճաք էինք էղե, ուշքներս կերթար, չիդեինք ի՞նչ էնենք... հանկարծ՝ երգ...» (ԳՋԻԱ, 2, 15):

Վ. Փափագյանը վարպետորեն օգտվել է նաև արևմտահայ լեզվի հնարավորություններից՝ *տղեկ* «փոքրիկ տղա, մանկիկ», *մարմնակրթանք* «մարմնամարզություն», բարկաճայթ «խիստ բարկացած, ցասկոտ» և այլն:

Հայտնի դերասանուհի Վ. Վարդերեսյանի հուշերը հյուսված են արևմտահայերենի ներթափանցումներով.

«-Ինձի չե՞ք ճանչնար, սրբազան:

Նայեց *երկվայրկյան*:

-Չէ, աղջիկս, *չեմ՝ ճանչնար*» (ԱԳՏ, 36):

Այս երևույթը ոճաբանական գրականության մեջ կոչվում է տեղական ոճավորում, որն իրականացվում է նաև գրական արև-

մտահայերենն օգտագործելու միջոցով, երբ խոսողը կամ լեզվական անհատը արևմտահայ է:

Թատերական հուշերում առկա են նաև նոր բառակերտումներ, որոնք արձանագրված չեն բառարաններում: *Սրբազարդեր* և *Ժայռեքարափ* (ավելի ճշգրիտ է *Ժայռաքարափ*-ը) կազմությունները քաղել ենք Վ. Վաղարշյանի հուշերից. «Մառի արշավախումբը եղել է այդ վայրերում և ասում են՝ հայտնաբերել է հեթանոսական *սրբազարդեր* և մեհյանների հետքեր» (ՎՎԸԲԵՎԵ, 188): «Այդ տեսարանում կղզու *ժայռեքարափներն* են, որոնք կիզիչ արևի տակ վառվել, բրոնզի գույն են ստացել» (ՎՎԸԲԵՎԵ, 169): Նույն հուշագրության մեջ գործածված է *բազմաձական* «բազմաթիվ աձականներով» դիպվածային կազմությունը. «Թեև շատ սիրում էր իր փոքրիկին, բայց ... *բազմաձական* անեծքներ էր թափում վրան» (ՎՎԸԲԵՎԵ, 202): Թատերական հուշերում Վ. Վաղարշյանը գործածում է նաև *բեմացավ* դիպվածային կազմությունը ու տալիս մեկնաբանություն. «*Բեմացավ* անունով հիվանդություն չկա բժշկական գիտության մեջ, սակայն կյանքում, մանավանդ թատրոնական կյանքում՝ որքան ուզեք» (ՎՎԸԲԵՎԵ, 262):

Մտադաշտ բառը գործածված է Ս. Մելիքսեյանի «Գոտեմարտող արտիստը» հուշ-դիմանկարում. «Անդադար իր *մտադաշտում* պահում էր ներկայացվելիք բեմական կերպարը» (ՎՓ, 25):

Ուշագրավ է, որ հուշագրության լեզվում առկա են այնպիսի դիպվածային բառեր, որոնք «ծնվում են» որոշակի իրավիճակում և բնականաբար չեն կարող այլ իրավիճակներում և կառույցներում գործածություն ունենալ, օրինակ՝ *օթելլոյացու* բառակերտումը հենց այդպիսի իրավիճակում է ծնվել. «-Ապրես... *Օթելլոյացու* ես... Ճշմարիտ է, դեռ անելիքներ ունես» (ԳՋԻԱ, 2, 247): *Թատրոնախաղ* կազմությունն առկա է Վ. Վաղարշյանի հիշողությունների գրքում. «Մանկական այդ *թատրոնախաղը* տեղի է ունեցել 1901 կամ 1902 թվականներին» (ՎՎԸԲԵՎԵ, 10):

Ընդհանրապես բառաքնական դիտումների ժամանակ կարևոր տեղ է տրվում բառապաշարի իմաստային-ոճական տարբեր խմբերի դասակարգմանը:

Եվրոպական լեզուների ազդեցության հետևանքով արևելահայ թատերական հուշերի լեզվում տեղ են գտել նաև եվրոպական փոխառություններ: Լեզվական տեսակետից եվրոպական փոխա-

ություններից հաճախադեպ գործածություն ունեն գաղիաբանությունները (ֆրանկաբանություններ)⁶. օրինակներ՝ *լիկյոր* (liqueur), *կավալեր* (cavalier), *բենեֆիս* (bénéfice), *ֆրակ* (frac), *լանդո* (landau), *կրուշոն* (cruchon), *տրիումֆ* (triumph) և այլն: Գործածական են նաև՝ ա. անգլիաբանություն՝ *ջենտլմեն* (gentleman) բ. իտալաբանություն⁷՝ *կարետ* (carreta) գ. գերմաներենից փոխառյալ⁸՝ *գաստրոլ*, gastrolle < gast -հյուր, rolle-խաղ և այլն:

Թատերական հուշերում աչքի են զարնում տվյալ ոլորտը և այդտեղ գործող անհատին ներկայացնող բառաշերտեր: Այդ առումով արդարացված է *թատրոն*, *արվեստ*, *հանդես*, *բեմ*, *դեր*, *խաղ*, *փորձ* միավորներով բառաձևերի գործածությունը՝ *թատերախաղ*, *թատերախումբ*, *թատերագիր*, *թատերգություն*, *թատերասեր*, *թատերաշրջան*, *թատերարվեստ*, *թատերախոս*, *թատերասրահ*, *թատերաբեմ*, *թատերապես*, *արվեստասեր*, *արվեստագետ*, *արվեստակից*, *գեղարվեստ*, *բարձրարվեստ*, *հանդիսատես*, *հանդիսասրահ*, *հանդիսական*, *բեմադրություն*, *բեմահարթակ*, *բեմահարդար*, *բեմարվեստ*, *բեմավիճակ*, *նախաբեմ*, *բեմախորք*, *բեմականորեն*, *խաղացանկ*, *խաղընկեր(ուհի)*, *խաղընկերություն*, *խաղառձ*, *խաղակից*, *դերացանկ*, *դերաբաշխում*, *դերակատար*, *դերակատարում*, *դերախաղ*, *հյուրախաղ*, *դիմախաղ*, *փորձասենյակ*, *փորձասրահ* և այլն:

Գործածության հաճախականությամբ ակտիվ են բառերի և բառակապակցությունների խմբեր (բառափնջեր), որոնք թատերական ասպարեզը բնութագրող հիմնաբառեր են, այսպես՝ *թատրոն*, *դրամատուրգիա*, *պիես*, *բեմ*, *բեմադրություն*, *դեր*, *դերասան*, *կիսասարտիստ*, *մենախոսություն* (մոնոլոգ), *կոմիկական*, *ֆելիետոն*, *վոդևիլ*, *օպերա*, *մելոդրամա*, *խաղացանկ* (ռեպերտուար), *հուշարար* և այլն: Բառակապակցություններ՝ *Մայր թատրոն*, *սունդուկյանական թատրոն*, *Թիֆլիսի հայկական թատրոն* (Արտիստական թատրոն), *Օթելլոյի փափազյանական կատարում*, *տնային թատրոն*, *ընտանեկան ներկայացում*, *բեմական կերպար*, *բեմական զգեստ*, *բեմական գործողություն*, *թատերական միտք*, *թատրո-*

⁶ Փոխառությունների իմաստային նշանակությունը ճշտելու համար հիմք ենք ընդունել «Dictionnaire encyclopédique» (Philippe Auzou, Paris, 2003) բառարանը:

⁷ Տե՛ս T. de Mauro, M. Mancini, Dizionario etimologico: Garzanti Linguistica (Milano, 2000) բառարանը:

⁸ Տե՛ս «Duden Fremdwörterbuch, Mannheim, Wien, Zürich: Dudenverl, 1990» բառարանը:

նական աստղեր, արտիստական տաղանդ, հուշարարի պատու-
հան, բեմի խորք և այլն:

Պատումներում կենսունակ են –*ոտ* ածանցով բառամի-
ավորները՝ *հմայքոտ, խնամքոտ, կյանքոտ, կրակոտ, անտառոտ,*
մշուշոտ, աղմկոտ, նախանձոտ, ռիսկոտ, քմայոտ, հավակնոտ և
այլն:

Թատերական հուշերում ոճական որոշակի նպատակադրու-
մով կրկնվում են նախադասության ամենատարբեր միավորներ.
օրինակ՝ «Լսեցի այդ հեռուներից հարազատներիս ձայնը. *մի քիչ*
հուզվեցի, *մի քիչ* լաց եղա...» (ՎՓՀՀ, 2, 446): «Արվեստ, որ հասնում
էր նրբերի նրբին» (ՎՓՀՀ, 2, 136): «Հաղթանակների հաղթանակը
ինքն իրեն հաղթելն է» (ՎՓՀՀ, 2, 440):

Ոճական առումով զուտ բայերի համակուտակում է Վ. Վա-
ղարշյանից բերված այս օրինակը, որտեղ հաճախ հակոտնյա գոր-
ծողություններ են իրականացվում. «Ապրում ես, սիրում, ատում,
խանդում, կովում, հաշտվում, հասկանում, ճանաչում» (ՎՎ, ԸԲԵ,
260): Բայերի այսպիսի համակուտակումը ոճաբանության մեջ
կարելի է կոչել *հակադրական համակուտակում*:

Խոսքի ոճավորման նպատակով հուշագիրները հաճախ են
մեջբերում հայտնի գրողների խոսքերից, օրինակ, Վ. Փափագյանը
հաճախ էր դիմում Շեքսպիրին. «Աղամամութը նոր էր սկսել...
«լույսը խավարի հետ կովում էր», ինչպես ասում է լեդի Մակբեթը»
(ՎՓՀՀ, 2, 131):

Թատերական հուշերը թևավոր խոսքերի, իմաստախոսու-
թյունների և շրջասությունների շտեմարան են: Հուշերում ակտիվ է
հոմերական ծիծաղ - (անգուսպ քրքիջ (առավելաբար զանգվածա-
յին)) թևավոր խոսքի գործածությունը: «Այդ ճղղոցին ընկերացավ
դահլիճի հոմերական ծիծաղը» (ԴԴՀ, 521): «Ողջ դահլիճը թնդում է
հոմերական ծիծաղից» (ԴԴՀ, 534):

Իմաստախոսություններ՝ «Թատրոնը դերասանի տունն է»
(ՎՓՀՀ, 2, 5), «Աղբյուրի ճանապարհին է կուժը կոտրվում» (ՎՓՀՀ,
2, 463), «Ի՞նչ նշանակություն ունի ամանը կամ նրա ձևը, եթե գինին
ընտիր է...» (ՎՓՀՀ, 2, 95): «Դրա համար են ասում, որ կոշկակարը
լավ կոշիկ չի հագնի» (ՎՎԸԲԵ, 111): «Ամեն սկիզբ ունի իր վերջը»
(ՎՎԸԲԵ, 299) «Ասում են՝ մարդ չի կարող երկու անգամ նույն գետը

մտնել, որովհետև այն ջրերը, որոնց գիրկն էիր նետվել երեկ, այն ջրերը այսօր հեռով են, նրանք անցան գնացին» (ՎՓ, 13):

Թատերական ասպարեզին բնորոշ իմաստախոսություններ կան հուշագրական այլ աղբյուրներում, օրինակ՝ «Դու անկոտրում վանք կմնաս...» հուշագրությունից քաղել ենք հետևյալ միտքը. «Ինչպես թատրոնում են ասում, արքա մի խաղա, թող շրջապատդ արքա խաղա» (ԴԱՎԿ, 6):

Շրջասություններ՝ Ադրիականի թագուհի-Վենետիկ, անարև քաղաք-Լոնդոն, Ալբիոնի զավակներ-անգլիացիներ, արի ու բարի ժողովուրդ-հայեր, հայ բեմի զարդը -«Պատվի համար», ծովերի աստված-փոթորիկ և այլն:

Այսպիսով՝ թատերական հուշերը հուշագրության ժանրի տարատեսակներից են և աչքի են ընկնում լեզվակառուցվածքային ինքնատիպ դրսևորումներով: Հուշագրության լեզվում գործածության հաճախականությամբ աչքի են ընկնում բառերի և բառակապակցությունների խմբեր (բառափնջեր), որոնք թատերական ասպարեզը բնութագրող հիմնաբառեր են: Հուշագիրները կարող են էջերով դիտարկել որևէ ներկայացման ամբողջական ընթացքը՝ շարադրանքին հավելելով համապատասխան մեկնաբանություններ, որոնք կարող են լինել վերլուծական փորձեր, պատճառաբանված մտորումներ ու խոհեր մի շարք դերերի մասին: Այսպիսի հուշերը երբեք բնականից չեն տրվում. դա պահաջմունք է և շնորհ: Ինչպես գրում է Գ. Ջանիբեկյանը, «մարդու հիշողությունը նմանվում է տեսագրված ու ձայնագրված ժապավենների դարանին. ցանկացած պահի կարող ես վերստեղծել քեզ համար անմոռանալի մեկի տիպարը, ձայնը, ոգեղեն երևույթը»⁹:

Համառոտագրություններ

ԱԳՏ - Ապրել գալիքի տեսիլքով, Էջմիածին, 2008:

ԳՋԻԱ, 1 - Գ. Ջանիբեկյան, Իմ աշխարհից, գիրք առաջին, Ճանապարհ դեպի թատրոն, Ե., 1977:

ԳՋԻԱ, 2 - Գ. Ջանիբեկյան, Իմ աշխարհից, գիրք երկրորդ, Թատրոնի հետ, Ե., 1980:

ԴԱՎԿ - Դու անկոտրում վանք կմնաս... (Մկրտիչ Սարգսյանը ժամանակակիցների հուշերում), Ե., 2011:

ԴԴՀ - Դ. Դեմիրճյան, Հուշեր, Ե., 1958, էջ 515-674:

ՌԶՀԳԵ- Ռ. Ջարյան, Հուշապատում, գիրք 3, Ե., 1977:

ՎՎԸԲԵՎԵ - Վ. Վաղարշյան, Ընկերներս, բարեկամներս և ես, Ե., 1959:

⁹ Գ. Ջանիբեկյան, Իմ աշխարհից, գիրք երկրորդ, Թատրոնի հետ, Ե., 1980, էջ 218:

ՎՓ - Վահրամ Փափազյան, կազմեց և խմբագրեց Լ. Խալաթյանը, Ե., 1959:
ՎՓՀՀ, 2 - Վ. Փափազյան, Հետադարձ հայացք, գիրք 2, Ե., 1981:

А. В. Галстян. Лингвоструктурные основы театральных воспоминаний.

Театральные мемуары являются разновидностью мемуарного жанра и выделяются своеобразными лингвистически-структурными проявлениями. Здесь чаще всего встречается примечательно-образный тип мемуаров, которым и обусловлена модель слова. Значительное место отведено созданию портретов актеров. В мемуарах бросаются в глаза основные слова, характеризующие театральную сферу и пласты слов, представляющие действующего персонажа. Театральные мемуары перефразировок.

Авторы являются кладезью крылатых выражений, мудрых высказываний и следить за ходом какого-либо представления, добавляя к рассказу аналитические размышления.

A. Galstean. Linguistic-Structural Bases of Theatrical Memoirs. Theatrical memoirs are a variety of the memoir genre and they are distinguished by peculiar linguistic-structural manifestations. Here we can see more often the evident imaginary type of memoirs by which the model of the word is conditioned. A great place is given to the creation of actors' portraits. One can especially find in these memoirs basic words characterizing the sphere of theatre and layers of words presenting the acting personage. Theatrical memoirs are a treasury of winged words, expressions full of wisdom and periphrases.

Authors can watch the course of a performance and express analytic reflections.

ԲԱՆԱՎԵՃ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ. ДИСКУССИИ И ОБСУЖДЕНИЯ. DISCUSSIONS.

ՀԱՄԱՅԱՆՑԱՅԻՆ ԼԵՂՈՒ. ԼԵՂԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱՊ, ԹԵ՛ ԽՈՍՔԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄ

*Բանասիր. գիտ. թեկնածու Մ. Ա. ՄԱՐԳՍՅԱՆ
meri.sargsyan@lang.sci.am*

Լեզուն շարունակ փոփոխվում է արտաքին և ներքին գործոնների ազդեցությամբ: Այն պահից սկսած, երբ ի հայտ եկավ համացանցը, հանդես եկան հաղորդակցման նոր մեթոդներ և ձևեր: Սոցիալական կայքերում, բլոգերում, առցանց խաղերում և առցանց հաղորդակցման ընթացքում աստիճանաբար ձևավորվեց այսպես կոչված համացանցային լեզուն կամ խոսքը: Այն ուսումնասիրության լայն նյութ դարձավ: Սակայն դեռևս կան երևույթներ, որոնք ըստ պատշաճի ուսումնասիրված չեն կամ լրացուցիչ բացատրության կարիք ունեն: Օրինակ՝ դեռ պարզ չէ՝ խոսքի ինչպիսի դրսևորում պետք է համարել համացանցային նամակագրությունը: Այն մի կողմից գրավոր խոսք է, մյուս կողմից՝ բանավոր, քանի որ բանավոր խոսքին հատուկ հատկանիշներ է դրսևորում:

Սույն հոդվածի նպատակն է ներկայացնել համացանցային լեզվի առանձնահատկությունները, դիտարկել դրանք «բանավոր խոսք» և «գրավոր խոսք» տարանջատման, ինչպես նաև լեզվական տարբերակների առանձնացման համատեքստում:

Մինչ այդ հարցին անդրադառնալը նշենք, որ լեզվի ուսումնասիրության առումով կարևոր են համացանցի կիրառության երկու հիմնական դրսևորումները՝ համացանցը՝ որպես հաղորդակցման և տեղեկատվության պահպանման միջոց: Առանց մասնագիտական խոր ուսումնասիրության էլ դժվար չէ նկատել, որ համացանցն առաջին հերթին կիրառվում է որպես *հաղորդակցման միջոց*: Բացի այդ՝ համացանցը տեքստային տեղեկատվության պահպանման վիթխարի դաշտ է: Այստեղ ընդգրկված են թե՛ բազմաժանր գրականությունը, թե՛ մշակութային ժառանգությունը, թե՛ լեզվական ու խոսքային ստեղծագործությունները: Թերևս հենց այս պատճառով

էլ վերջին տասնամյակում համացանցային լեզուն սկսում է դիտարկվել որպես լեզվական մի մեծ կորպուս՝ ընդգրկելով լեզվական զանազան տվյալներ ցանկացած բնագավառի վերաբերյալ: Աշխարհի տարբեր երկրներում համացանցային կորպուսի ուսումնասիրության մեծածավալ աշխատանքներ են տարվում¹: Բացի այդ՝ գիտական զանազան հոդվածներ, գրքեր, ատենախոսություններ նվիրվում են համացանցային լեզվի բառապաշարի քննությանը:

Ինչ վերաբերում է համացանցային հայերենին, ապա, ի տարբերություն միջազգային լեզուների՝ հայերենի դերը համացանցում փոքր է, չնայած վերջին ժամանակներում հայերենն ամրապնդում է իր դիրքերը համացանցային հարթակում. բրաուզերները գործառում են հայերեն, սոցկայքերը հայերեն օգտագործելու հնարավորություն են ընձեռում, շարունակ աճում է հայերեն հավելվածների թիվը: Համացանցային հայերենի ուսումնասիրության մասին պետք է նշել, որ այն դեռևս սկզբնավորման փուլում է: Առանձնացնենք, թերևս, ամենաուշագրավ ուսումնասիրությունը՝ Ա. Քամալյանի՝ համացանցային հայերենի բառապաշարի առանձնահատկություններին նվիրված աշխատանքը²:

Այսպիսով՝ կարելի է նշել, որ վերջին ժամանակներս համացանցային լեզվի ուսումնասիրությամբ քիչ թե շատ զբաղվում են: Բայց որքան էլ զարմանալի է, հետազոտողները գրեթե չեն անդրադառնում այն հարցին, թե խոսքի ինչպիսի դրսևորում պետք է համարել համացանցային լեզուն, կամ արդյո՞ք խոսքի դրսևորում է, թե՞ լեզվական տարբերակ: Այս հոդվածում փորձում ենք ներկայացնել համացանցային լեզուն կամ խոսքը այս տեսանկյունից՝ չանդրադառնալով բառապաշարային կոնկրետ առանձնահատկությունների:

Նախ նշենք, որ թե՛ գիտական գրականության մեջ և թե՛ առհասարակ լեզվում համացանցային խոսքը բնորոշելու բազմաթիվ տարբերակներ կան: Նկատի ունենք ոչ միայն հայալեզու, այլև օտարալեզու աղբյուրները: Այսպես, օրինակ, համացանցային խոս-

¹ Տե՛ս <https://www.kilgariff.co.uk/Publications/2003-KilgGrefenstette-WACIntro.pdf>; M.Gatto, *Web as Corpus: Theory and Practice*, "Studies in Corpus and Discourse", Bloomsbury, 2014 շեփոհիտր://cl.indiana.edu/~md7/13/615/slides/13-wac/13-wac.pdf; M.Hundt, N.Nesselhauf, C. Biewer, *Corpus Linguistics and the Web*, NY 2007, 305 էջ:

² http://language.sci.am/sites/default/files/conference/-kamalyan_arewik.pdf

քը բնորոշվում է որպես *համացանցային ժարգոն, համացանցային լեզու, համացանցային խոսակցական լեզու, համացանցային խոսք, առցանց հաղորդակցման գրավոր խոսակցական լեզու* ևն: Անգամ այս բնորոշումները փաստում են, որ համացանցային լեզուն կամ խոսքը միջանկյալ դիրք է գրավում խոսակցականի և գրականի, գրավորի և բանավորի միջև: Բայց ո՞րն է համացանցային լեզվի կամ խոսքի սահմանագիծը: Այսպես, դիտարկենք այն *լեզվական տարբերակներ*ի համատեքստում: Հայտնի է, որ լեզվի հիմնական տարբերակներն են տարածական, հասարակական, գործառական և ոճական տարբերակները³:

Եթե նկատի ունենանք, որ համացանցային խոսքը ստեղծվել է համացանցային հարթակում, ծառայում է համացանցից օգտվող մարդկանց, բառապաշարը այսպես կոչված «համաժողովրդական» բառապաշարի սահմաններում է, կարող ենք համացանցային խոսքը կամ լեզուն դիտարկել որպես ժարգոն՝ համարելով լեզվական տարբերակ: Մակայն կարծում ենք՝ այնքան էլ ճիշտ չէ ժարգոն համարել: Նախ՝ ժարգոնը բնորոշ է հասարակության մի փոքր խմբին, իսկ համացանցային լեզուն կիրառվում է հասարակության տարբեր շերտերի կողմից՝ անկախ տարիքից, սեռից, կրթական մակարդակից, բնակության վայրից ևն: Այսինքն՝ այն ավելի լայն սահմաններ ունի: Երկրորդ՝ եթե ժարգոնը ստեղծում է հասարակության մի որոշակի խումբ՝ հասարակության մյուս շերտերից առանձնանալու նպատակով և որոշակի միտումով, ապա համացանցային լեզուն նման միտում բոլորովին չունի: Այն հատուկ ստեղծված լեզվատարբերակ չէ, այլ ձևավորվել է տարերայնորեն՝ որպես հասարակական պահանջ:

Լեզվական տարբերակներից համացանցային լեզուն կամ խոսքը առավել մոտ է նաև խոսակցականին: Քանի որ համացանցը որևէ կերպ չվերահսկվող, ազատ հարթակ է, այստեղ մարդիկ հաղորդակցվում են գերազանցապես խոսակցական լեզվին մոտ լեզվատարբերակով: Ինչու՞ խոսակցականին մոտ: Ինչպես գիտենք, խոսակցական լեզուն բանավոր հաղորդակցման միջոց է, այսինքն՝ այն որևէ տեղ չի արձանագրվում, որևէ կերպ հնարավոր չէ փոփոխել, գրեթե անվերահսկելի է ևն: Ի տարբերություն խոսակցական լեզվի՝ համացանցային լեզուն կամ խոսքը ոչ թե գրավոր, այլ բանա-

³ Հ. Զ. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան, Ե., 1987, էջ 266:

վոր հաղորդակցման միջոց է: Սա թերևս խոսակցական լեզվից համացանցայինը առանձնացնելու ամենակարևոր առանձնահատկությունն է: Բացի այդ՝ համացանցային լեզուն, լինելով գրավոր, հնարավորություն է տալիս ոչ միայն կիրառել խոսակցական լեզվի բոլոր միջոցները, այլև վերահսկել խոսքը, ըստ անհրաժեշտության և ցանկության փոփոխել այն, նա: Այսպիսով՝ համացանցային լեզուն կամ խոսքը բավական մոտ է խոսակցականին, բայց դրանք չեն կարող նույնանալ:

Ինչ վերաբերում է *խոսքի դրսևորմանը*, ապա հայտնի է, որ խոսքը, ըստ արտահայտման եղանակի, ունի երկու դրսևորում՝ գրավոր և բանավոր⁴: Համացանցային լեզուն կամ խոսքը ունի բանավոր խոսքի բոլոր առանձնահատկությունները. ունի խոսակցական իրացում, պայմանավորված է խոսքային իրադրությամբ, այստեղ ևս կան ուղեկցող միջոցներ, թեև փոքր-ինչ տարբեր, ինչպես, օրինակ՝ մեմերի, ժպիտիկների, գիֆերի ևն կիրառությունը: Սակայն եթե բանավոր խոսքն ունի տարածական և ժամանակային սահմանափակում, ապա համացանցայինը նման սահմանափակումներ չունի: Այս առումով համացանցային լեզուն կամ խոսքը մոտենում է գրավորին: Ինչպես գրավոր խոսքը, համացանցայինը ևս գրային պայմանական նշանների իրացում է, ընկալվում է տեսողությամբ: Այստեղ ևս կարևորվում են գրության եղանակներն ու միջոցները: Սակայն համացանցային խոսքը, ի տարբերություն գրավոր խոսքի, գուրկ չէ ռճաարտահայտչական, հնչերանգային հատկանիշներից: Ավելին՝ այն ունի իրեն բնորոշ և հատուկ միջոցներ: Այսպիսով՝ վերոնշյալից կարելի է եզրակացնել, որ համացանցային լեզուն կամ խոսքն օժտված է ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր խոսքի առանձնահատկություններով, սակայն չի նույնանում դրանցից որևէ մեկին, այլ միջանկյալ դիրք է գրավում դրանց միջև:

Ինչ վերաբերում է համացանցային լեզուն «լեզու և խոսք» երկատման համատեքստում դիտարկելուն, նշենք հետևյալը: Ինչպես գիտենք, լեզուն հասարակական երևույթ է, խոսքը՝ անհատական: Բացի այդ՝ «այն ամենը, ինչ հանդես է գալիս որպես անմիջական գործընթաց, վերաբերում է խոսքին, այն, ինչ զրկվում է անմիջականությունից, դադարում է գործընթաց լինելուց...», վերաբերում է լեզ-

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 281:

վին»⁵ Հետևաբար՝ խոսքը՝ որպես լեզվական ընդհանրական նորմերի համակարգի կոնկրետ իրացում՝ ստացած անմիջական բնույթ, կարծում ենք, կարող է լիարժեքորեն իր բովանդակության սահմաններում ընդգրկել համացանցային խոսքը:

Այսպիսով՝ ամփոփելով նշենք, որ համացանցային հաղորդակցումը, ունենալով անհատական և անմիջական բնույթ, պետք է դիտարկվի ոչ թե լեզվի, այլ խոսքի տիրույթում: Բացի այդ՝ նկատի ունենալով, որ այն օժտված է թե՛ բնավոր և թե՛ գրավոր խոսքի առանձնահատկություններով, սակայն որևէ կերպ չի նույնանում դրանց, առաջարկում ենք առանձնացնել խոսքի ոչ թե երկու դրսևորում, այլ՝ երեք՝ գրավոր, բանավոր և որպես դրանց միջանկյալ օղակ՝ *համացանցային խոսք*:

М. А. Саргсян. - Интернет-сленг: речевое проявление или языковой вариант? - Язык постоянно меняется из-за внешних и внутренних факторов. С момента появления Интернета появились новые методы и формы коммуникации. Они стали объектом изучения. Тем не менее, существуют явления, которые не были должным образом изучены или требуют дополнительного объяснения. Например, до сих пор неясно, к какому проявлению речи следует отнести интернет-сообщение? С одной стороны, это письменная речь, а с другой - устная, потому что оно имеет особые характеристики устной речи.

Цель этой статьи - представить особенности интернет-сленга, рассматривать их в контексте разделения «устной» и «письменной речи», а также разделения языковых вариантов.

М. А. Sargsyan. - Internet Slang: speech manifestation or language option? - The language is constantly changing because of external and internal factors. Since the Internet came up, new communication methods and forms appeared. They became a great deal of study. However, there are still phenomena that have not been properly studied or required additional explanation. For example, it is still unclear what kind of speech should be considered the Internet message? On the one hand, it is a written speech and on the other hand verbal, because it has special characteristics of the verbal speech.

The purpose of this article is to present the peculiarities of the Internet slang, to consider them in the context of separation of "oral" and "written speech" as well as the separation of language variants.

⁵ Մ. Մարգարյան, Գ. Ջահուկյանի ընդհանուր լեզվաբանական հայացքները, Ե., 2017, էջ 42:

**ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ
ՀԱՏԿԱՆՇԱՅԻՆ ԿԱՅՈՒՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԻՄԱՍՏՆԵՐԸ ԳՐԱԲԱՐՈՒՄ**

Բանասիր. գիտ. թեկնածու Լ. Ն. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ընդհանուր առմամբ լեզվուներում կայուն կապակցությունների¹ հարաբերակցությունն այս կամ այն խոսքի մասին որոշվում է նրանց արտահայտած իմաստով (իմաստներով): Ըստ այդմ՝ գրաբարում հիմնականում տարբերակվում են գոյականի, ածականի, բայի և մակբայի խոսքիմասային նշանակություններով կայուն կապակցություններ: Ըստ որում, ածականական և մակբայական կապակցություններն առանձնացվում են որպես հատկանշային միավորներ՝ արտահայտելով համապատասխանաբար առարկայի, գործողության կամ հատկանիշի հատկանիշներ՝ նախադասության շարահյուսական դիտվածքում կատարելով հիմնականում որոշչային (ածականի արժեք ունեցող կայուն կապակցություններ) և պարագայական (մակբայի արժեք ունեցող կայուն կապակցություններ) գործառույթներ:

Գրաբարի քննվող կապակցությունների մեջ զգալի տեսակարար կշիռ ունեն քրիստոնեական վարդապետությանն առնչվող կայուն կապակցություններն ընդհանրապես և այդ կարգի հատկանշային միավորները մասնավորապես:

Ներկա հոդվածում իմաստային հայեցակետից քննության են ենթարկվում խնդրո առարկա հատկանշային (ածականական և մակբայական) կայուն կապակցությունները հին հայերենում համաժամանակյա կտրվածքով, կատարվում է այդօրինակ կապակցությունների դասակարգում՝ ըստ իմաստային տիպերի և իմաստային (թեմատիկ) խմբերի: Քրիստոնեական վարդապետությանն առնչվող կայուն կապակցությունները ներկայացվում են խոսքային միջավայրում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընդհանրապես խնդրո առարկա կապակցությունների իմաստային իրացման, հուզարտահայտչական գնահատականի և ոճական-գործառական

¹ Կայուն կապակցությունները մասամբ կամ ամբողջությամբ վերաիմաստավորված կամ նոր իմաստավորում չունեցող պատրաստի վերարտադրելի լեզվական միավորներ են:

արժեքի առավելագույնս ցայտուն դրսևորման առումով կարևորվում է խոսքաշարի դերը²:

Անդրադառնանք քրիստոնեական վարդապետությանն առնչվող հատկանշային (ածականական և մակբայական) կայուն կապակցությունների իմաստներին առանձին-առանձին:

Ա. Հատկանշային կայուն կապակցությունների իմաստային տիպերը: Մասնագիտական գրականության մեջ մասնավորաբար դարձվածքներին վերաբերող հետևյալ դիտարկումը հատկանշական է նաև կայուն կապակցությունների բոլոր դրսևորումների համար. «Դարձվածքն այս կամ այն խոսքի մասին հարաբերակցելիս հաշվի են առնվում այնպիսի քերականական և իմաստային հատկանիշներ, ինչպիսին են՝ ա) քերականորեն գերադաս անդամի արտահայտման միջոցը, բ) նախադասության մեջ դարձվածքի արտահայտած շարահյուսական գործառույթը, գ) դարձվածքի իմաստային առանձնահատկությունները, դ) դարձվածքի կապակցելիությունը և այլն»³:

Ստորև կանդրադառնանք մեզ հետաքրքրող կապակցություններին՝ ըստ նրանցում վերաիմաստավորման առկայության կամ բացակայության հատկանիշի:

1. Վերաիմաստավորում չունեցող կայուն կապակցություններ: Լեզվաբանական գրականության մեջ առանձնացվում են կայուն կապակցությունների հետևյալ տեսակները՝ 1. բաղադրյալ անվանումներ, 2. դարձվածային արտահայտություններ, 3. ոչ փոխաբերական հարադրական բայեր, 4. դարձվածքներ⁴:

Ածականական կայուն կապակցությունները, արտահայտելով հասկացություն, ունեն անվանողական (ոչ հաղորդակցական) գործառույթ: Ուշագրավ է այն հանգամանքը, որ այդօրինակ ածականական միավորները «կազմվում են նաև առանց ածականների մասնակցության»⁵:

² Կայուն կապակցությունների գործածության յուրահատկությունների մասին հանգամանորեն տե՛ս *Ю. А. Гвоздарев*, Функции фразеологических единиц в русской речи // Фразеологическая номинация (особенности семантики фразеологизмов), Ростов н/Д, 1989, էջ 14:

³ Տե՛ս *В. П. Жуков*, Русская фразеология, М., «Высшая школа», 1986, էջ 204:

⁴ Հմմտ. *Պ. Մ. Բեդիրյան*, Ժամանակակից հայերենի ոչ փոխաբերական կայուն բառակապակցությունները, Ե., 1990, էջ 5:

⁵ Տե՛ս *Խ. Գ. Բաղդկյան*, Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Ե., 1986, էջ 128:

Գրաբարի ածականական կայուն կապակցություններում սակավադեպ են խնդրո առարկա այն կառույցները, որոնք վերախմաստավորված (դարձվածային) չեն, սակայն հատկանշվում են պատրաստի վերարտադրելիությամբ. *ծանօթ երկիւղին Աստուծոյ* (աստվածավախ, հավատացյալ), *խոհական հանճարով* (խոհուն՝ խելացի), *լի մտօք, իմաստուն մտօք* (մտքով կատարյալ. շատ խելացի, իմաստուն), *մտօքն աղքատագոյն* (մտքով աղքատ. Անգիտակ), *ուխտաւոր Աստուծոյ*⁶ (Աստծուն ուխտ անող, որևէ ուխտ ստանձնած), *քան զամենայն բարձրութիւն սրբոցն*⁷ (բարձր՝ պատվարժան), *բուռն իբրև զմահ*⁸ (բնական, անխուսափելի):

Հմմտ. Որ լինէ *մտօքն աղքատագոյն* (Միրաք. ԺԲ. 20): *Ուխտաւոր Աստուծոյ* եղիցի մանուկն անդստին յորովայնէ (Դատ. ԺԳ. 5):

Մակբայական կայուն կապակցությունները ևս անվանողական միավորներ են, որոնք կարող են կազմվել նաև առանց մակբայների: Այդ կարգի կապակցությունները արժեքավորվում են մակբայի խոսքիմասային նշանակությամբ իրենց համընդհանուր (կատեգորիալ) իմաստով, իսկ վերջինս, ինչպես նշվում է մասնագիտական գրականության մեջ, քերականական է⁹:

Հմմտ. վերախմաստավորում չունեցող հետևյալ մակբայական կայուն կապակցությունները. *յառաջ քան զմարմնով զալուստն Քրիստոսի, յառաջ քան զՆոյ, յառաջ քան զլինելն աշխարհի* (հնուց ի վեր, անհիշելի ժամանակներից), *իբրև զանխորհուրդս* (խորհուրդ խրատ չընդունելով), *իբրև տէր* (տիրաբար), *մինչև յաւիտեանս* (հավիտյան, հավետ), *ըստ արժանի* (արժանիքի համաձայն, արժանաբար), *ըստ կարգի, ըստ օրինաց* (կարգի համաձայն. օրենքով), *ըստ Արարչին հրամայելն* (Աստծո կամքով՝ հրամանի համաձայն), *ի բնէ // ի բնմէ* (հենց սկզբից):

⁶ Գրաբարյան կայուն կապակցություններն առհասարակ կառուցվածքային յուրահատկություններ են ցուցաբերում հանդես գալով նախդիր-նախադրություններով կամ առանց այդօրինակ հոլովառու բառերի: Վերը բերված կապակցությունները, ինչպես տեսնում ենք, ձևավորվել են առանց նախդիր-նախադրությունների:

⁷ Նշված կապակցությունը միագազաթ է: Այդօրինակ կառույցներում բացակայում է քերականորեն գերադաս անդամը: Միագազաթ կայուն կապակցությունները կարող են կազմվել մեկ լիմաստ և մեկ թերիմաստ բաղադրիչներով: Ինչպես երևում է վերը բերված օրինակից, հնարավոր են նաև նշված կառույցի ծավալումներ:

⁸ Տվյալ կապակցությունը երկանդամ ստորադասական կառույց է՝ ձևավորված *իբրև* հայցական խնդրով նախադրությամբ:

⁹ В. П. Жуков, Семантика фразеологических оборотов, М., 1978, էջ 30:

Խնդրո առարկա մակբայական կապակցությունները դիտարկենք խոսքաշարում. Անխափան պատրաստեալ *ըստ Արարչին հրամայելն* բուսանին փթթին (Ագաթ., 332): *Ի բնէ* ուսեալ եմք և հաստատեալ յօրէնս յայս (Փարպ., 45):

2. *Վերախմաստավորված (դարձվածային) կայուն կապակցություններ*: Ինչպէս նշվում է մասնագիտական գրականության մեջ, «Դարձվածքներ են այն կայուն բառակապակցությունները, որոնց բաղադրիչները, իրենց բուն իմաստից զրկվելով, նոր՝ այլաբերական-փոխաբերական իմաստ են արտահայտում: Դարձվածքները՝ իբրև լեզվական միավորներ, սովորական և կայուն կապակցություններից տարբերվում են ամենից առաջ իրենց իմաստով կամ ընդհանուր բովանդակությամբ»¹⁰:

Գրաբարի *վերախմաստավորված ածականական կայուն կապակցություններից* առանձնացվում են ինչպէս մասնակի, այնպէս էլ ամբողջական վերախմաստավորում ունեցող միավորներ: Ըստ որում, մասնակի վերախմաստավորված կառույցները կոչվում են միաբնեռ դարձվածային միավորներ (այսուհետև՝ ԴՄ), իսկ ամբողջական վերախմաստավորում ունեցող կապակցությունները՝ իդիոմներ¹¹:

Հմմտ. հետևյալ ածականական ԴՄ-ները, որոնք բնութագրվում են *միաբնեռ* կամ *միակողմ վերախմաստավորմամբ*¹². *Անաբարտ ըստ մարդկանէ* (չափազանց մաքուր. անաբարտ, անմեղ), *սքանչելի իբրև գտեսիլ հրեշտակաց* (սաստիկ գեղեցիկ), *իբրև զծաղիկ անցաւոր* (չափազանց արագ անցնող, խիստ անցողիկ), *միամիտք իբրև զաղաւնիս* (խիստ միամիտ. անմեղ), *ընչատեացք իբրև զանկարօտս* (նյութականն անտեսող. սաստիկ հավատավոր), *սրբասէրք իբրև զանմարմինս* (չափազանց մաքուր. անեղծ), *անաչառք իբրև զարդարադաստ* (խիստ արդար), *աներկիւղք իբրև զանմահս* (խիստ քաջ, խիստ մեծ հավատով զինված)¹³:

¹⁰ Տե՛ս Ալ. Ս. Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1990, էջ 302-303:

¹¹ Հմմտ. В. П. Жуков, Русская фразеология, էջ 8:

¹² Տե՛ս А. Г. Назарян, Фразеология современного французского языка, М., 1987, էջ 65:

¹³ Ինչպէս երևում է վերը բերված օրինակներից, դարձվածքների կազմում *ըստ* նախորդով և *իբրև* նախադրությամբ ձևավորված կառույցները որպէս դարձվածայնորեն կապված անդամներ, ածականով նշված հատկանիշներին հավելել են *սաստիկ, խիստ, չափազանց* իմաստները:

Հմմտ. *Ընչատեացք* են *իբրև զանկարօտս, սրբասէրք* են *իբրև զանմարմինս, անաչառք* են *իբրև զարդարադատս, աներկիւղք* են *իբրև զանմահս* (Եղ., 180):

Միաբնեռ ԴՄ-ներից դիտարկենք հետևյալ *մակբայական կայուն կապակցությունները*. *իբրև զօձ թունաւոր* (մեծ չարությամբ, խիստ չարակամորեն), *յամենայն սրտէ, ի սրտէ* (մեծ սիրով), *պարզ սրտիւք* (անկեղծությամբ), *ըստ օրինակի սուրբ առաքելոցն, ըստ առաքելոցն // մարգարէիցն նմանութեան* (պատվիրանները կատարելով, բարիք սփռելով. սրբորեն), *սրտի մտօք* (անկեղծորեն, սիրով, բարությամբ): Հմմտ. Իսկ սուրբքն *ըստ օրինակի սուրբ առաքելոցն*՝ գնային խնդրութեամբ յերեսաց ատենին (Փարպ., 81): *Մրտի մտօք* ծառայեցէ՛ք իբրև Աստուծոյ և մի իբրև մարդկան (Եղ., 11):

Հետևյալ *ածականական կառույցները* հատկանշվում են *լրիվ վերախմաստավորումով*՝ հանդես գալով որպէս *իդիոմներ* կամ *իդիոմատիկ արտահայտություններ*¹⁴: Ընդամին, այդ կարգի կապակցությունները գրաբարի դարձվածանու մեջ համեմատաբար սակավադեպ են. *պէս գունակ Բաբելովնի* (խառնաշփոթ, խառնիճադանջ), *իբրև զԵրուսաղէմ* (հիասքանչ, հրաշալի): Հմմտ. *Իբրև զԵրուսաղէմ* զարմանալի յօրինեալ (Երգ. Զ. 3):

Մակբայական կայուն կապակցություններում ևս, թէև ոչ հաճախադեպ, սակայն հանդիպում են *իդիոմատիկ արտահայտություններ*, հմմտ. *բացու գլխով* (անամոթաբար)¹⁵, *իբրև զարծաթ ի բովս* (թրծվելով. մաքրագործվելով), *օրինակաւ երկնային զարդու* (խիստ պատվական՝ պաշտամունքի արժանի լինելով): Հմմտ. Ի վարդապետսն յինքն և ի ճանապարհորդութիւն ուսմանն, *օրինակաւ երկնային զարդու* (Խոր., 343):

Բ. Հատկանշային կայուն կապակցությունների իմաստային (թեմատիկ) խմբերը: Ընդհանրապէս դարձվածային իմաստների մեջ կարևորվում է կայուն կապակցությունների իմաստաբանական դասակարգումն այդ կարգի կառույցներում դրսևորված հասկացությունների ու երևույթների բացահայտման հայեցակետից¹⁶: Քրիս-

¹⁴ Հմմտ. Ա. Մ. Սուքիասյան, Ս. Ա. Գալստյան, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Ե., 1975, էջ 7-9:

¹⁵ *Բացու գլխով* կապակցությունը բազմիմաստ է, ընդ որում իր առաջին՝ *գլխաբաց* իմաստով այն հանդես է գալիս որպէս վերախմաստավորում չունեցող միավոր:

¹⁶ Դարձվածքների իմաստային դասակարգման վերաբերյալ տե՛ս Ե. Հ. Գևորգյան, Հայերենի դարձվածքները, Ե., 1969, էջ 25: Տարբեր խոսքիմասային իմաստներով արժեքավորվող ԴՄ-ների իմաստային (թեմատիկ) դասակարգման մասին հանգամանորեն

տոնեական վարդապետությանն առնչվող գրաբարյան հատկանշային կայուն կապակցություններում ի հայտ են գալիս իմաստային տարբեր խմբեր ու ենթախմբեր, որոնց էլ կանդրադառնանք ստորև:

1. *Ածականական կայուն կապակցությունների իմաստային (թեմատիկ) խմբերը*: Այս կարգի կառույցներում տարբերակվում են անձի, իրի, երևույթի կամ վերացական հասկացության հատկանիշներ ցույց տվող կապակցություններ, որոնք էլ իրենց հերթին կարելի է ենթարկել իմաստային ներքին խմբավորման:

ա) *Անձի հատկանիշ ցույց տվող կայուն կապակցություններ*: Այսօրինակ կառույցներում հիմնականում առանձնացվում են *անձի ներքին հատկանիշ* ցույց տվող կապակցություններ, որոնցում էլ տարբերակվում են հավատացյալին և անհավատին բնութագրող միավորներ:

Հմտ. *հավատավոր քրիստոնյային բնութագրող* հետևյալ կապակցությունները. *քան զհարսն* (խիստ խոնարհ՝ համեստ), *իբրև զմանուկս* (չափազանց մաքուր. հոգով անապական), *քան զսուրբ առաքեալն Քրիստոսի* (խիստ հավատավոր), *քան զհրեշտակս* (խիստ մաքուր՝ բարի. առաքինի)¹⁷, *սրբասէրք իբրև զանմարմինս* (չափազանց մաքուր. անեղծ), *անաչառք իբրև զարդարադատս* (խիստ արդար դատող. անաչառ), *աներկիւղք իբրև զանմահս* (հավատով զինված, անվեհեր), *ընչատեացք իբրև զանկարօտս* (սյութականն անտեսող. հոգևորով ապրող), *միամիտք իբրև զաղաւնիս* (սաստիկ միամիտ. անեղծ), *ուխտաւոր Աստուծոյ* (Աստծո ուխտին հետևող. պատվիրանները պահող), *լի մտօք, իմաստուն մտօք* (կատարելապես խելացի), *ծանօթ երկիւղին Աստուծոյ* (աստվածավախ): Հմտ. անձի ներքին հատկանիշ ցույց տվող կայուն կապակցությունները խոսքային միջավայրում. Եւ արարին Բեսելիել և Եղիաբ և ամենայն այր *իմաստուն մտօք* (Ելք. ԼԳ. 1): Այր ազնուական բնութեամբ և *ծանօթ երկիւղին Աստուծոյ* (Ղեւ., 128):

տե՛ս Ս. Գ. *Աբրահամյան*, Հայոց լեզու, բառ և խոսք, Ե., 1978, էջ 148-151, Սյ. Ս. *Մարգարյան*, նշվ. աշխ. էջ 252, *Ա. Դ. Назарян*, նշվ. աշխ., էջ 65, *Л. П. Смит*, Фразеология английского языка, М., 1959, էջ 6-7:

¹⁷ Գրաբարում այդ կարգի կապակցությունները քերականորեն բազմիմաստ են. ձևաբանական մակարդակում դրսևորում են ածական // մակբայ տարածություն շարահյուսական միջավայրում հանդես գալով համապատասխանաբար որոշչային և պարագայական գործառնություններով:

Հին հայերենում երբեմն հանդիպում են *անհավատին բնութագրող* կայուն կապակցություններ. *ապառաժ սիրտ* (դաժան, անհոգի. անհավատ), *նման Յուդայի* (դավաճան)¹⁸, *կոյր մտօք, մտօքն աղքատագոյն* (մտքով աղքատ. աստվածային հավատին անհաղորդ): Հմմտ. Եթե ոք կարի առաւելեալ իցէ աշխարհական մեծութեամբ, և *մտօքն աղքատագոյն*, այնպիսին ողորմելի է քան զբազումս (Եղ., II յեղանակ):

բ) *Երևույթի և վերացական հասկացության հատկանիշ ցույց տվող կայուն կապակցություններ*: Այսօրինակ կառույցներում տարբերակվում են ընդհանրապես մաքրությունն ու բարությունը բնորոշող, ինչպես նաև կյանքն ու մահը բնութագրող կապակցություններ:

Մաքրությունն ու բարությունն են հատկանշում հետևյալ կապակցությունները. *մեծագոյն քան զիմաստութիւն* (չափազանց ճշմարիտ, խիստ բարձր. վսեմ), *որպէս զնշխարս նահատակելոց սրբոց* (սրբազան, սրբասուրբ), *մեծ // բարձր քան զամենայն բարձութիւն սրբոցն* (խիստ բարձր. պատվավոր), *նման Աստուծոյ* (խիստ իմաստուն՝ արդարադատ): Հմմտ. *Մեծ և բարձր* է պատիւ կաթողիկէ եկեղեցւոյ քան զամենայն բարձութիւն սրբոցն (Ագաթ., 389): Կատարեալ իմաստասէրն *նման է Աստուծոյ* (Անյ., 40):

Կյանքն ու մահն են բնութագրում *պէս զունակ Բաբելոնին* (խառնիճադանջ, անհասկանալի), *բունն իբրն զմահ* (անխուսափելի, անհաղթահարելի), *իբրն զծաղիկ անցաւոր* (խիստ անցողիկ, ոչ մշտնջենական) կապակցությունները:

Դիտարկենք խնդրո առարկա միավորների հետևյալ կիրառությունները. *Բունն է իբրն զմահ* սեր (Երգ. Ը. 6): Մինչչեւ եղեալ իցէք *իբրն զծաղիկ անցաւոր* (Սոփ. Բ. 2):

գ) *Առարկաների (անձի, իրի, երևույթի կամ վերացական հասկացության) արտաքին հատկանիշ ցույց տվող կայուն կապակցություններ*: Այս կարգի միավորները հատկանշվում են ներխուսքիմասային բազմիմաստությամբ՝ դրսևորելով ինչպես անձի, այնպես էլ իրի, երևույթի կամ վերացական հասկացության արտաքին հատկանիշներ, ինչպես նաև խոսքաշարում բնութագրվում են բառիմաստային լայն կապակցելիությամբ. *սքանչելի իբրն զտեսիլ*

¹⁸ *Նման Յուդայի* կապակցությունը ևս դրսևորում է ած. // մկբ. երկարժեքություն՝ *դավաճանաբար* իմաստով դասվելով մակբայների շարքը:

հրեշտակաց (չափազանց գեղեցիկ), *իբրև զԵրուսաղէմ* (խիստ գեղեցիկ. հրաշալի), *կարմիր ըստ նմանութեան տեառնանման խաչին* (ասես տիրոջ սուրբ արյունով շաղախված. արնագույն), *նման Եդեման դրախտին* (հիանալի, հիասքանչ): Հմմտ. Խարիսիք *կարմիրք* էին ... *ըստ նմանութեան տեառնանման խաչին* (Ագաթ., 384): Այս յորդաբուղի աղբերաց շնորհ, *նման Եդեման դրախտին* աղբեր գորմանէ ասէ (Փարպ., 179):

2. *Մակբայական կայուն կապակցությունների իմաստային (թեմատիկ) խմբերը*: Մակբայի արժեք ունեցող խնդրո առարկա կառույցներում առավել կամ պակաս չափով ի հայտ են գալիս ընդհանրապես մակբայներին բնորոշ իմաստային բոլոր խմբերը:

ա) *Ձևի մակբայական կայուն կապակցություններ*: Այս կարգի մակբայական կառույցներում մեծ մասամբ ի հայտ են գալիս առարկայի ընթացային հատկանիշի ներքին-որակական հատկանիշ ցույց տվող, ինչպես նաև այդօրինակ թե՛ արտաքին, թե՛ ներքին հատկանիշ արտահայտող կապակցություններ:

Առարկայի ընթացային հատկանիշի ներքին-որակական հատկանիշ ցույց տվող կայուն կապակցություններն իրենց հերթին կարելի է ենթարկել իմաստային ներքին խմբավորման՝ նրանցում առանձնացնելով թեմատիկ հետևյալ ենթախմբերը.

1. *Օրենքով, հավատքով, հրաշքով. ըստ կարգի* (կարգի համաձայն), *ըստ օրինաց* (օրենքի համաձայն), *ըստ Արարչին հրամայել* (Աստծո հրամանի՝ պատվիրանի համաձայն), *ի ձեռն հաւատոց* (հավատքով), *ի ձեռն հրեշտակաց* (հրաշքով), *իբրև սահանք հոգեւորք* (հոգին բարությամբ համակելով): Հմմտ. *Իբրև սահանք հոգեւորք* ... ի վերուստ իջեալ ի վերայ կուտակին (Ագաթ., 279):

2. *Բարությանը, մաքրությանը, հոգատարությանը. բարով իմն* (բարությամբ), *ի սրտէ, սրտի մտօք* (անկեղծությամբ, սիրով), *օրինակաւ երկնային զարդու* (խիստ պատվական՝ պաշտամունքի արժանի լինելով), *որպէս ծնող* (խնամքով, հոգատարությամբ), *իբր զտէր* (տիրաբար պաշտպանելով), *ըստ օրինակի սուրբ առաքելոցն* (մաքրությամբ, հոգատարությամբ. սրբորեն), *պարզ սրտիւք* (մաքուր սրտով), *մերկ ի մեղաց* (մեղքերից զերծ լինելով): Հմմտ. Մեք *պարզ սրտիւք* յօժարամիտք եղեաք յասմ ամենայնի (Ա. Մնաց. ԻԹ. 17): *Մերկ ի մեղաց* զկեանս մեր տնօրինեսցուք (Սրգ.):

3. *Անամոթաբար, չարականորեն, դավաճանաբար. բացու գլխով* (անամոթաբար), *օրինակ իմն չարագոյն գազանի* (չար ու դաժան կերպով), *իբրն զԲաբելոնի հնոցին բոց* (ահարկու կերպով), *իբրն զօձ թունաւոր* (սաստիկ չար կերպով), *առ աչս* (աչառությամբ)¹⁹, *մերկ գլխով* (անխոհեմ՝ անիրավ կերպով), *իբրն զանխորհուրդս* (անխոհեմաբար), *նման Յուդայի* (դավաճանաբար): Հմմտ. Որոշեալ ճեղքեսցի և նա *նման Յուդայի* (Փարպ., 53): Ոչ փոփոխեմք զբանս մեր, որպէս երբեմն խօլացեալք *իբրն զանխորհուրդս*՝ և այժմ զղջացեալ ապաշաւեմք իբրն զվնասակարս (ն.տ., 98):

4. *Հնազանդվելով, ենթարկվելով, խոնարհաբար. իբրն զգառն* (խիստ հնազանդ կերպով), *իբրն ոչխարք մոլորեալք* (խիստ անօգնական՝ ենթարկված վիճակում), *իբրն զճառայ* (ստրկամտորեն, ծառայաբար), *իբրն զմեռեալ անյուսալից* (անհույս՝ անօգնական վիճակում): Հմմտ. Նստեալ կանանց ողբային արտասուալից *իբրն զմեռեալ անյուսալից* (Շար.):

Առարկայի ընթացային հատկանիշի թե՛ ներքին, թե՛ արտաքին հատկանիշ ցույց տալու ներունակությամբ են օժտված հետևյալ կապակցությունները. *յոզիս ապաստան* (մահամերձ վիճակում), *իբրն զարծաթ ի բովս* (թրծվելով, կատարելագործվելով), *բարձրագլուխ կամակարութեամբ* (բարձր ու երևելի լինելով): Հմմտ. Վասն որոյ և աստուածապաշտութիւնն *բարձրագլուխ կամակարութեամբ* երևելի լինէր յաշխարհին Հայոց (Եղ., I յեղանակ):

բ) *Ժամանակի մակբայական կայուն կապակցություններ*: Այդօրինակ կառույցներում կարելի է տարբերակել երկու ենթախումբ:

Գործողության ժամանակային սկզբնակետ են ցույց տալիս հետևյալ կապակցությունները. *ի բնէ* (հիմքից, սկզբից), *յառաջ քան զմարմնով գալուստն Քրիստոսի*, *յառաջ քան զՆոյ*, *յառաջ քան զլինելն Աբրահամու*, *յառաջ քան զլինելն աշխարհի* (անհիշելի ժամանակներից, շատ վաղուց): Հմմտ. *Յառաջ քան զլինելն Աբրահամու* եմ ես (Ագաթ., 369): Զոր ունէի առ քեզ *յառաջ քան զլինելն աշխարհի* (ն.տ.):

Գործողության կամ այլ հատկանիշի մշտատևություն է ցույց տալիս *մինչև յաւիտեան* (հավերժաբար) կապակցությունը: Հմմտ.

¹⁹ *Առ աչս* կապակցությունը բազմիմաստ է. ունի նաև *աչքի երևույթի համար* իմաստը:

Եւ ոչ պակասեցէ անունդ քո ի մարդկանէ՝ առ ի յիշելոյ զքեզ առաջի Աստուծոյ *մինչև յաւիտեան* (Յուդիթ. ԺԳ):

զ) *Չափ ու քանակի մակբայական կայուն կապակցություններ*: Քննարկվող միավորների իմաստային այս խմբում ևս ի հայտ է գալիս երկու ենթախումբ:

Հատկանիշի չափը մասի և ամբողջի հարաբերությամբ է ցույց տալիս տարբերակային *ըստ արժանի // արժանեաց* (արժանիքի համաձայն՝ չափով) կապակցությունը: Հմմտ. Լոկ արտասուօք և *ըստ արժանի* սաղմոսիւք և օրհնութեամբ ... զմեռեալսն յուղարկէին (Բուգ., 193):

Չափի իմաստը հատկանիշի սաստկացումով են ցույց տալիս հոմանշային հետևյալ կապակցությունները. *ի վերայ համբերութեան մարդոյն, մինչեւ ի մահ, արեան // արեամբ չափ, զահ տեառն գիտելով չափ, մինչեւ ի մահ, ոգւով չափ, մահու չափ* (անչափ, անքանակ, չափազանց, խիստ, սաստիկ): Հմմտ. Պարտ էր կրօնաւորին *արեամբ չափ* հակառակ կալ ընդդէմ մարմնական ցանկութեանց (Եզն., 310):

դ) *Տեղի մակբայական կայուն կապակցություններ*: Հին հայերենի մեզ հետաքրքրող կառույցներում հազվադեպ են այդօրինակ միավորները, հմմտ. *ընդ երկնիւք, ընդ աստեղաւք* (երկնքի ներքո. աշխարհում, կյանքում):

Այսպիսով, հանգում ենք հետևյալ եզրակացությունների.

1. Գրաբարի կայուն կապակցություններում զգալի տեսակարար կշիռ ունեն քրիստոնեական վարդապետությանն առնչվող կապակցություններն ընդհանրապես և հատկանշային (ածականական և մակբայական) կառույցները մասնավորապես:

2. Ըստ իմաստային տիպերի՝ քննարկվող կապակցություններում ի հայտ են գալիս վերաիմաստավորում չունեցող կամ ոչ փոխաբերական և վերաիմաստավորված միավորներ: Ըստ որում, ոչ փոխաբերական կայուն կապակցություններին բնորոշ են կայունությունը և պատրաստի վերարտադրելիությունը, իսկ վերաիմաստավորված միավորներին՝ դարձվածայնորեն կապված անդամի (անդամների) առկայությունը կամ ողջ կառույցի նորիմաստավորումը: Հինհայերենյան վերաիմաստավորված հատկանշային կապակցություններում ըստ այդմ առանձնացվում են միաբնեռ ԴՄ-ներ և իդիոմներ:

3. Գրաբարի խնդրո առարկա կապակցությունները, հատկանշվելով անվանողական գործառնությով, կարող են հանդես գալ իմաստային (թեմատիկ) տարբեր խմբերում և ենթախմբերում: Ածականական կայուն կապակցություններում առանձնացվում են անձի, իրի, երևույթի և վերացական հասկացության հատկանիշներ ցույց տվող միավորներ: Մակբայական կայուն կապակցություններում առանձնացվում են տեղի, ժամանակի, ձևի, չափ ու քանակի իմաստներով մասնավորում արտահայտող միավորներ:

4. Քրիստոնեական վարդապետությանն առնչվող հատկանշային կայուն կապակցությունների իրացումները խոսքային միջավայրում առավել դիպուկ են արտահայտում այդօրինակ կառույցների գնահատողական-հուզարտահայտչական բնութագիրը և պատկանելությունը բարձր՝ գրքային ոճին:

5. Այդ կարգի կապակցությունների իմաստաբանական ուսումնասիրությունը կարևորվում է ընդհանրապես քրիստոնեական դաստիարակության առումով, ինչպես նաև եկեղեցի, դպրություն և առաքելություն փոխմիասնության հաստատման տեսանկյունից:

Համառոտագրություններ

- Ազարթ.* – Ազարթանգեղայ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1909:
Անյ. – Դաւիթ Անյաղթ, Սահմանք իմաստասիրութեան, Ե., 1960:
Բուգ. – Փաւստոսի Բուգանդացոյ Պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1883:
Եզն. – Եզնկայ Կողբացոյ Բագրեւանդայ եպիսկոպոսի Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826:
Եղ. – Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Երևան, 1957:
Խոր. – Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913:
Շար. – Չայնքաղ Շարական, Վաղարշապատ, 1888:
Սոփ. – Մարգարէութիւն Սոփոնեայ // Աստուածաշունչ մատենան Հին և Նոր կտակարանաց, Երևան, 1997:
Սրգ. – Մեկնութիւն եօթանց թղթոց Կաթողիկեայց, արարեալ երանելոյն Սարգսի շնորհալից վարդապետի, Պոլիս, 1743:
Փարպ. – Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց և Թուրք առ Վահան Մամիկոնեան, Տփղիս, 1904:
 Մյուս Աստվածաշնչի համառոտագրություններն ըստ ընդունված կարգի. *Դատ.*, *Ելք.*, *Երգ երգոց*, *Ղեւ.*, *Մնաց.*, *Յուդիթ*, *Սիրաք.*,

Л. Н. Аветисян. Семантика качественных устойчивых сочетаний, связанных с христианским архимандритством в грабаре. Среди качественных устойчивых сочетаний (в дальнейшем: УС) грабара, связанных с христианским архимандритством, различаются адъективные и адverbальные сочетания. В статье по синхронному анализу рассматриваются вопросы семантики такого рода УС в грабаре.

Среди качественных УС, связанных с христианским архимандритством, различаются семантически переобразованные (частично или целостно) или непереосмысленные сочетания характеризующиеся воспроизводимостью.

Семантически переобразованные качественные УС грабара включают: 1. унилатеральные УС, 2. идиомы. Качественные УС грабара, связанные с христианским архимандритством, обладают широкими номинативными возможностями. Они могут быть распределены по тематическим группам. Смысловые особенности древнеармянских качественных УС, связанных с христианским архимандритством, проявляются в речевой среде и ярко выражают особенности духовной культуры и языкомышления армянского христианина.

L. N. Avetisyan. The semantics of qualitative stable compounds relating to the Christian archimandrity in old Armenian. Among qualitative stable compounds (therefore SC) relating to the Christian archimandrity of old Armenian adjectival and adverbial compounds are distinguished. In the level of old Armenian on synchronic basis the questions of semantics of qualitative SC relating to the Christian archimandrity are scrutinized in the present article.

Among qualitative SC of old Armenian relating to the Christian archimandrity semantically transfiguring (partly or fully) or non-metaphorical SC are distinguished. They are characterized with redy reproduction. The semantically transfiguring qualitative SC of old Armenian relating to the Christian archimandrity are include: 1. unilateral SC, 2. idioms. The qualitative SC of old Armenian relating to the Christian archimandrity have wide nominative possibilities. They can be divided due to the thematic groups. The semantic specifications of qualitative SC of old Armenian relating to the Christian archimandrity are expressed in the speech environment and more brightly demonstrate the characteristics of clerical culture and linguothinking of Christian our nation.

**ՀՈՄԱՆՇՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ
ԽՈՍՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՄԱՍՏԱՅԻՆ
ԵՆԹԱԴԱՇՏՈՒՄ**

Բանասիր. գիտ. թեկնածու Ռ. Յ. ԴՈՒՆՈՅԱՆ

Հոմանշությունը տարբեր ծավալներով այսօր ևս ուսումնասիրվում է լեզվի գրեթե բոլոր մակարդակներում՝ բառային, ձևաբանական, շարահյուսական, ոճական, բնագրի (տեքստի), որը բազմաբնույթ և հարուստ լեզվական երևույթ լինելով պայմանավորված՝ ամեն անգամ ունի նոր բացահայտումների կարիք: Տվյալ դեպքում մեր նպատակն է քննության առնել հոմանշությունը՝ իբրև ձևաբանաստային փոխհարաբերության մի տեսակ, դիտարկել այն ըստ բառիմաստային դրսևորման, իմաստային (թեմատիկ) խմբերի մեջ:

Խոսքային գործունեության իմաստային ենթադաշտում (այսուհետև՝ ԽԳԻԵ), ի թիվս այլ երևույթների, մեկնաբանման կարիք ունի նաև հոմանշությունը (հետազոտվող նյութը ԽԳԻԵ-ի և իմաստային (թեմատիկ) խմբերի բայերի հոմանշային դրսևորումներն են¹, որը հնարավորություն կտա սահմանելու և դասակարգելու ԽԳԻԵ-ի բառիմաստային խմբերի (այսուհետև՝ ԲԻԽ) հարացուցային հարաբերակցությունը, նրանց հատումները և իմաստային առնչությունները, փոխադարձ պայմանավորվածությունը, գործառության առանձնահատկությունները, և ըստ այդմ՝ տվյալ մակարդակում վեր հանել բայական բառապաշարի իմաստային խմբավորումների համակարգային կապերը և փոխհարաբերությունները²:

Հոմանշությունը լեզվական միավորների (բառ, մասնիկ, ածանց, ձևույթ, դարձվածք, քերականական կառույց) ձևաբանաստային փոխհարաբերության տեսակ է (ձևով տարբեր, իմաստով մերձ)³: Հոմանիշ են կոչվում միևնույն հասկացությունն արտահայտող այն միավորները, որոնք, իրար մոտ իմաստներ ունենալով հանդերձ, տարբերվում են իրենց ոճական կիրառությամբ, հուզարտահայտչական երանգավորմամբ, գործառությամբ և այլ միավոր-

¹ Տե՛ս *Ս. Մ. Սուքիասյան*, Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, Ե., 2003 (օրինակները հիշյալ բառարանից առանց հղումների):

² ԽԳԻԵ-ում ներառվում են ասացական, մտածական, զգացական և վարքի արտահայտման ԲԻԽ-երը:

³ Տե՛ս *Հ. Զ. Պետրոսյան*, Հայերենագիտական բառարան, Ե., 1987, էջ 419:

ների հետ կապակցվելու ունակությամբ⁴: Հոմանիշները՝ որպես միևնույն հասկացությունը տարբեր կողմերից արտացոլող լեզվական միավորներ, խմբավորվում են՝ ձևավորելով հոմանշային շարք, որի անդամները կարող են լինել միաբնույթ կամ տարաբնույթ (համադրական/հարադրական, դարձվածային/բառակապակցական և այլն)⁵:

Յուրաքանչյուր հոմանշային շարք ձևավորվում է ընդհանուր միասնականացնող բաղադրիչի (հիմնաբառ) հիման վրա, որը հոմանշային շարքի տարբեր անդամներում լրացվում է միմյանց չբացառող, այլ մեկը մյուսին ճշգրտող կոնկրետ տարբերակիչ բաղադրիչներով՝ դրանով հանդերձ լրացնելով և հարստացնելով հիմնաբառը⁶: Վերջինս արտահայտում է շարքը միավորող բոլոր անդամների ընդհանուր իմաստը, ոճականորեն չեզոք է, գործառությամբ ակտիվ. այն նաև հասկացության (կոնցեպտ) անվանումն է:

Հոմանշային շարքի անդամներն ունեն ինչպես ընդհանրություններ, այնպես էլ տարբերություններ: Ընդհանրությունը պայմանավորված է նրանով, որ հիմնաբառի ընդհանուր իմաստը տարբալուծված է հոմանշային շարքի յուրաքանչյուր անդամի մեջ՝ տարբեր համամասնություններով, օրինակ՝ *գովել* – գովաբանել, դրվատել, բարեբանել (գովասանական / խրախուսական խոսք ասել՝ չափի մեջ), գովերգել, երգել, ներբողել (ներբողի, երգի, ոտանավորի միջոցով). չափը կախված է իրադրությունից, բայց սովորական գովեստից ավելին է (փառաբանել, փառագոչել՝ փառք տալով, օրհներգությամբ գոհունակություն հայտնելով), թմբկահարել (հրապարակալ), շեփորել (կրկնելով), ջատագովել, երկինք հասցնել (հարկ եղածից ավելի), խնկարկել (շողոքորթելու նպատակով) և այլն:

Իմաստային տարբերությունները խարսխվում են ոճական, կիրառական, նրբիմաստային հատկանիշների վրա, օր.՝ *խնդրել* – աղերսել, թախանձել, պաղատել (սաստիկ խնդրել), հայցել (հետամուտ լինել, պահանջել) (*գրք.*), աղաչել, բերան (գլուխ՝ երես՝ վիզ) ծռել, դեմ ընկնել, ոտ ու ձեռ ընկնել (*խսկց.*), երեսը գոմշի կաշի անել, երեսը բոշի երես շինել. ոտքերը լիզել (*հսրկ./գռհկ.*), կողկողել,

⁴ Տե՛ս *Ս. Ս. Մուքիսյան*, Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1999, էջ 122:

⁵ Գործածվում են նաև *բույն*, *փունջ* տերմինները. մենք նախընտրում ենք *շարք* տերմինը: Տե՛ս նաև *Ս. Ս. Մուքիսյան*, նշվ. աշխ., Ե., 1999, էջ 126:

⁶ Հոմանշությունը հենց այս հատկությամբ է իմաստային աղերսներ ունենում իմաստային դաշտերի, ԲԻՄ-երի հետ:

ողորթել (*հնց.*), առաջարկել, պահանջել, հրավիրել, ուզել, մուրալ, հարցնել (*կիրռ.*), աղոթել (աղոթքի միջոցով), ոտքերն ընկնել (նվաստանալով), օձի պես գերեկնալ (քծնելով խնդրել) (*նրբիմ.*):

Ընդհանուր առմամբ, հարացուցային հարաբերությունների վերլուծության համար անհրաժեշտ նախապայման է լեզվամիավորի իմաստային կառուցվածքը, այսինքն՝ նրա բաղադրիչ լինելը (իմա՝ բառաիմաստային տարբերակների առկայությունը՝ միննույն բառի՝ տարբեր, մեկից ավելի իմաստներով գործածվելու հատկությունը): Թեև ԲԻԽ-ի որևէ իմույթի սեռային իմակը կրկնվում է բառաիմաստային բոլոր տարբերակներում, բայց դրանք, իրենց հերթին, ըստ տեսակային իմակների, ի հայտ են բերում նաև իմաստային հակադրություններ, և այդ հակադրամիասնությունն էլ ծնում է հարացույց, ենթահարացույց, խումբ, ենթախումբ, շարք, ենթաշարք⁷:

Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ իմաստային ընդհանրությունների և տարբերությունների շնորհիվ հոմանշային շարքը իմաստային հարուստ աղերսներ է դրսևորում իմաստային դաշտերի և ԲԻԽ-երի հետ:

Հոմանշային շարքում հասկացույթը ներկայանում է նաև տարբեր աստիճանավորումներով՝ իմաստի սաստկացմամբ կամ նվազմամբ՝ դրսևորելով՝

1) *տեղեկատվական ներգործության ուժգնացման աստիճանը*, օր.՝ *ահագանգել*-իմացնել-տեղյակ պահել-նախազգուշացնել-կանխազգուշացնել-զգուշացնել-ազդարարել-աղետագուժել.

2) *մտավոր ընդհանուր և կոնկրետ գործողությունների հարաբերակցություն*, օր.՝ *ստեղծել* (ընդհանուր)-արարել (արվեստի որևէ գործ)-կերտել (շենք, կոթող)-հորինել (սուտ).

3) *հուզական երևույթի աստիճանական ուժգնացման աստիճանը*, օր.՝ *ծիծաղել*-խնդալ - ժպտալ (թեթևակի) - ծիծ(ա)ղկտալ (քնքշորեն, նազանքով) - փոթկալ - փխկացնել - փխկալ (հանկարծակի) - ծիծաղը բռնել (սկսել) - հռհռալ - կարկաչել - կշկչալ - քրքջալ - քահ - քահել (բարձր) - ճխալ - (ուրախությունից) - ծիծաղից թուլանալ / պայթել / պատռվել / ուշաթափվել / մեռնել.

⁷ Տե՛ս Ռ. Յ. Դոխոյան, Ասացական բայերի բառաիմաստային խումբը արդի հայերենում, Ե., 2014, էջ 22-23:

4) *հուզական վիճակի տարբեր աստիճաններ*, օր.՝ *վախենալ* – *վախվորել* – *երկյուղել* – *երկնչել* – *վեհերել* – *սիրտը վախ ընկնել* – *դողալ* – *սահմոկել* – *սարսափել* – *փշաքաղվել* – *սարսռալ* – *քստմնել* – *ցնցվել* – *զարհուրել* – *սոսկալ* – *երեսի գույնը գնալ* – *սիրտը փոքում ձիավոր դառնալ* – *ահաբեկվել* – *ահագնել* – *լեղին ջուր կտրել*.

5) *վարվելակերպի աստիճանական ուժգնացման աստիճանը*, օր.՝ *սպառնալ* – *սաստել* – *երկյուղ ներշնչել* – *վախեցնել* – *մատ թափ տալ* – *բռնոնք ցույց տալ* – *ձեռք բարձրացնել* – *դանակ քաշել* – *նիզակ / սուր ճոճել* – *հանդիմանել* – *սպառնալիքներ թափել* – *ահաբեկել* – *պատուհասել / պատժել* /.

6) *մեղմասությունների և կոպտասությունների (գոհկ./ հարկբ., ծծկբ. և այլն) հարաբերակցություն*, օր.՝ *լալ* – *ոռնալ*, *խմել* – *կոնծել*, *սպանել* – *և ևս անել և այլն*⁸:

Ինչպես վերը նշվեց, հոմանշային շարքերի հիմնաբառերը որակվում են իբրև հասկացություններ, որոնք աշխարհի լեզվական պատկերի ենթաշերտերն են և դիտարկվում են իբրև աշխարհի լեզվաընկալման արտացոլման ու մեկնաբանման միջոցներից մեկը: Քանի որ հոմանիշներն արտացոլում են օբյեկտիվ աշխարհի հատկությունները, լեզվի կառուցվածքայնության, նրա հաղորդակցական համակարգի առանձնահատկությունները, այսինքն՝ իրականության հասկացութալորման գործընթացը⁹, հետևաբար ԽԳ-ան հոմանշային շարքերի համադրումը, ըստ իմաստաբանության, շարահյուսության և գործաբանության, թույլ է տալիս բացահայտելու այն բառ-հասկացությունների (մեր դեպքում՝ *ասել / խոսել*, *մտածել*, *զգալ*, *վարվել*) գործառական առանձնահատկությունները, որոնցով անվանվում են գործունեության տարբեր տեսակներ¹⁰, մասնավորապես ԽԳԻԵ-ի ԲԻԽ-երի ենթահարացույցները, խմբերը, ենթախմբերը, շարքերը, ենթաշարքերը:

Ենթադաշտում հոմանշությունը ի հայտ է բերում *ներհոմանշային* և *վերհոմանշային* կապեր: ԲԻԽ-երի միջուկային բայերի հոմանշային շարքերի անդամների միջև առկա *ներհոմանշային* կապերը ձևավորում են տվյալ ԲԻԽ-ի խմբերը, ենթախմբերը, շար-


⁸ Աստիճանավորման տեսակները, իհարկե, թվարկվածներով չեն սահմանափակվում:

⁹ Տե՛ս նաև *Л. А. Слепцова*, Синонимические средства выражения концептосферы «Деятельность» в русской и английской языковой картине мира (автореферат. канд. дис.), Калининград, 2008:

¹⁰ Տե՛ս նույն տեղում:

քերն ու ենթաշարքերը: Այսպես, *ասել* միջուկային բայի հոմանշային շարքում ներառված են *արտահայտվել* - *արտաբերել* - *արտասանել* - *ձայն հանել* - *վրա բերել* - *փսփսալ* (կամացուկ՝ ականջին, գաղտնի) - *ականջի մեջ զուռնա փչել* (բարձրաձայն) - *երգել* - *բերանից դուրս թոցնել* (միամտաբար) - *դուրս տալ* (ավելորդ բաներ, գաղտնիք և այլն) - *խոսել* - *խոսք բանալ* - *պատմել* - *հաղորդել* - *հայտնել* - *իրազեկել* - *տեղեկացնել* - *դատել* (դատողություններ անել, կարծիք հայտնել) - *միտքը / զգացմունքը խոսքով արտահայտել* - *անվանել* - *կոչել* - *առարկել* հոմանշային բայ-անդամները, որոնք իրենց բազմիմաստության շնորհիվ կազմավորում են տվյալ հարացույցի իմաստային հյուսվածքը: Դրանք *ասացական* ԲԻՄ-ի հարացույցում ձևավորում են *հաղորդման (հաղորդել), հաղորդակցման (հաղորդակցել), դատողական (դատել / դատողություններ անել (բարձրաձայն)), դրդման* (ասել՝ անձին դրդելու, որևէ գործողության մղելու նպատակով / առաջարկելու, հարկադրելու, խնդրելու, հիշեցնելու, ներշնչելու, գովաբանելու և այլ միջոցների շնորհիվ), *բնութագրական (պատմել*՝ բնութագրական ձևով հաղորդելով որևէ բան) ենթահարացույցները (տե՛ս գծապատկեր 1)¹¹: Իսկ հոմանշային շարքի մյուս անդամներից, օր.՝ *դուրս տալ*-ը ձևավորում է *հաղորդման ենթահարացույցի բուն հաղորդման խմբի* բովանդակագուրկ խոսքի հաղորդման շարքը, *անվանել*-ն ու *կոչել*-ը՝ *անվանման խումբը*, *փսփսալ*-ը *բնութագրական ենթահարացույցի չորրորդ խմբի երկրորդ ենթախումբը*՝ ձայնի ցածրության իմաստահավելիչով, *երգել*-ը *նույն ենթահարացույցի չորրորդ ենթախումբը*՝ խոսքը երաժշտական ձայնով հաղորդելու իմաստահավելիչով և այլն (տե՛ս գծապատկեր)¹²:

Գծապատկեր 1




¹¹ Տե՛ս Ռ. Յ. Դոխոյան, նշվ. աշխ., էջ 31-65:

¹² Ներհոմանշային կապերը թեև հարուստ են և բազմաճյուղ, բայց աշխատանքի ծավալը նկատի ունենալով, այսուհետև կխոսենք միայն միջուկային բայերի մասին, որոնք ձևավորում են ենթահարացույցները՝ խմբերի, ենթախմբերի, շարքերի, ենթաշարքերի:

Մտածել միջուկ-բայի հոմանշային շարքում ներառված են խորհել-խորհրդածել-խոկալ-մտորել-դատել-մտմտալ-մտախոհել-մտահայել-որոճալ-միտք բերել-միտք դնել-միտքը շարժել-մտքից անց կացնել-մտքում ասել-մտքում ունենալ-մտքերին անձնատուր լինել - մտքի մեջ ընկնել - մտքին զոռ տալ - տերտերի հացը կտրել (վերլուծել՝ հետևություններ անել) – կշռադատել – կարծել – ենթադրել - պատկերացնել – երևակայել – համարել – ասել – կարծիք ունենալ – անդրադառնալ – նկատի ունենալ – աչքի առաջ ունենալ – հոգալ – անհանգստանալ – մտահոգվել – մտատանջվել հոմանշային բայ-անդամները: Դրանք մտածական ԲԻՄ-ի հարացույցում ձևավորում են բուն մտածական (մտածել), ըմբռնման (ըմբռնել, հասկանալ), իմացական (իմանալ), ստեղծագործական (ստեղծագործել), մտածողության միտումնավորության կերպի (դիտավորություն ունենալ), դատողության (դատել), հիշողության (հիշել) ենթահարացույցները (տե՛ս գծապատկեր 2)¹³:

Գծապատկեր 2




Զգալ միջուկային բայի հոմանշային շարքում ներառված են զգայել – ընկալել (արտաքին աշխարհից զգայարաններով տպավորություն ստանալ)–ապրել (հոգեպես, հոգեկան տպավորություն՝ ապրում ունենալ)–տածել (որևէ վերաբերմունք ունենալ)–գիտակցել – ըմբռնել – իմանալ հոմանշային բայ-անդամները: Դրանք զգացական ԲԻՄ-ում ձևավորում են զգայական ընկալումների (զգայել՝

¹³ Տե՛ս Ռ. Յ. Դոխոյան, Մտածական բայերի իմաստային դասակարգումը արդի հայերենում, Հայերենագիտական միջազգային տասներորդ գիտաժողովի նյութեր (Երևան, 7-9 հոկտեմբերի, 2015թ.), Ե., 2015, էջ:

տեսնելու, լսելու, , ճաշակելու, շոշափելու, ցավա-/ջերմազգայության միջոցներով), *բուն զգացականների (զգալ՝* ինտելեկտուալ, բարոյական, գեղագիտական հայեցակետերից), *հոգեվիճակի / տրամադրության* (ուրախանալ, երջանկանալ, երագել, կարոտել, տխրել, հանգստանալ, հոգնել, բարկանալ ևն հոգեվիճակների միջոցով), *կամքի (ինքնատիրապետել՝* ցանկությունը, ձգտումը, ծուլությունը, համառությունը, տոկունությունը, արիությունը, վախը ևն վերահսկելու միջոցով), *հոգեկան ներգործության (ներգործել՝* հրապուրելու, համոզելու, դրդելու, հիպնոսելու, հարձակվելու (ագրեսիայի) միջոցներով) ենթահարացույցները (տե՛ս գծապատկեր)¹⁴:

Գծապատկեր 3



Վարվել միջուկային բայի հոմանշային շարքում ներառված են *վերաբերվել*(մեկին, մի բանի, մեկի նկատմամբ որևէ վերաբերմունք ցուցաբերել)-*տնօրինել – գործել* (որևէ եղանակով) – բանեցնել – *գործածել* հոմանշային բայ-անդամները: Դրանք *վարքարտահայտման* ԲԻԽ-ում ձևավորում են *հանրային (գործել՝* գնահատելու, արդարության հաստատման, աշխատասիրության, ծուլության, բարեգործության, չարագործության միջոցով), *բարոյական/անբարոյական* (հարաբերվել ինչպես բարոյական՝ սիրո, հարգանքի, պատասխանատվության, ընտանեկան, այնպես էլ անբարոյական՝ շվայտության, անամոթության, անառակության, հարաբերությունների միջոցով), *անձնային (վարվել՝* առաքինություն (մեծահոգություն, առատաձեռնություն, արիություն, ամոթ, խիղճ, զղջում, հնազան-

¹⁴ Տե՛ս Ռ. Յ. *Դոկտրին*, Զգացական բայերի իմաստային դասակարգումը արդի հայերենում // Մբեղյանական ընթերցումներ, ակադ. Մ. Մբեղյանի ծննդյան 150-ամյակին նվիրված հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումների ժողովածու (Երևան, 2015 թ., հոկտեմբերի 14-15) Ե., 2016:

Ըստ Լ. Թեյլանի՝ հոմանշությունը բառերի իմաստային կառուցվածքը բաղադրող հարաբերություններից մեկն է, և ՀՇ-ում միավորված բառերից յուրաքանչյուրը նաև այլ կարգի հարաբերությունների մեջ է իմաստային տվյալ դաշտը կազմող բառերի հետ, և այդ հարաբերություններից էլ ձևավորվում է տվյալ բառի իմաստը¹⁶։ Այդ են վկայում ենթադաշտում յուրաքանչյուր ԲԻՄ-ի մեջ գործող ինչպես *ներհոմանշային*, այնպես էլ տարբեր ԲԻՄ-երի մեջ առկա *վերհոմանշային* կապերը, որոնք բայական բազմիմաստության շնորհիվ իմաստային հարուստ և տարակերպ փոխկապակցվածությամբ հատումների առիթ են դառնում՝ համալրելով ենթադաշտի ԲԻՄ-երի եզրային հատվածները, ինչպես նաև ապահովելով դաշտի համակարգության սկզբունքը։

Ստորև ներկայացնենք ենթադաշտի տարբեր ԲԻՄ-երի միջև առկա *արտահոմանշային* կապերը, օր.՝ *ասացական* ԲԻՄ-ի *արտահայտվել* հիմնաբառով հոմանշային շարքը (խոսել – ասել – բանախոսել – ելույթ ունենալ – արտացոլվել – մարմնավորվել – պատկերվել – պատկերանալ – արտացոլում գտնել – դրսևորվել – երևան գալ – հայհոյել) *ելույթ ունենալ* հարադրությամբ և *հայհոյել* բայով հատվում է *վարքի արտահայտման* ԲԻՄ-ն, *արտացոլվել / պատկերանալ* և այլն բայերով՝ *մտածական* ԲԻՄ-ին։ *Մտածական* ԲԻՄ-ի *աղավաղել* հիմնաբառով հոմանշային շարքը (խեղաթյուրել – խարդախել – եղծել – խախտել – խաթարել – աղարտել / խոսքը, գրվածքը և այլն / - աղճատել-այլանդակել - այլափոխել) հատվում է *վարքի արտահայտման* ԲԻՄ-ին։ *Ջգացական* ԲԻՄ-ի *արտասվել* հիմնաբառով հոմանշային շարքը / լալ - հեկեկալ - հեծկլտալ – ողբալ - կականել - կոծել -/ *ողբալ, կականել, կոծել* բայերով հատվում է *ասացական* ԲԻՄ-ին։ *Վարքի արտահայտման* ԲԻՄ-ի *աշխատել* հիմնաբառով հոմանշային շարքը (գործել - բանել – զբաղվել – պարապել – ծառայել – պաշտոնավարել - աշխատասիրել – ջանալ – հոգնել - վաստակել - դատել - շահել և այլն) հատվում է *մտածական* ԲԻՄ-ին և այլն։

Այսպիսով, ԽԳ-ը հասկացությունորտ է, որը ներառում է այդ գործունեության շղթայի իրացման բոլոր օղակները՝ նաև հոմանշային շարքերի շնորհիվ փոխապայմանավորելով և իրականաց-

¹⁶ Տե՛ս Լ. Թեյլան, Արդի հայերենի քերականության հարցեր (հոդվածների ժողովածու), Ե., 2016, էջ 69։

նելով վերոնշյալ գործունեությունը: Ուստի հոմանշային շարքերի իմաստային-կառուցվածքային յուրահատկությունների հետազոտումը ԲԻՆ-երում և իմաստային դաշտերում հիմք կարող է դառնալ բառային տարբեր խմբավորումներում լեզվական միավորների համակարգայնության, իմաստային և շարակարգային (կապակցելիություն, արժույթայնություն) փոխհարաբերությունների ու հատումների բացահայտման և պարզաբանման, լիարժեք յուրացման, ինչպես նաև հնարավորություն ընձեռել իմաստային նույն տարբերակումներ և ճշգրտումներ, ոճական նրբերանգների բացահայտումներ, հուզագգացական գնահատումներ կատարելու՝ նպաստելով բառապաշարի իմաստային որոշակիացմանն ու կանոնակարգմանը:

Р. Ю. Дохойан - Проявления синонимии в семантическом подполе речевой деятельности современного армянского языка.- В статье изучаются проявления синонимии, (наличествующие в семантическом подполе речевой деятельности современного армянского языка), которая позволяет определить и классифицировать парадигматические связи и отношения, сечения и семантические связи, взаимообусловленность и особенности функционирования лексико-семантических групп (говорения, мышления, чувства, поведения) вышеупомянутого подполя. В статье преследуется цель выявить, каким образом на полевом уровне будут проявляться системные связи и взаимообусловленность семантических групп глагольной лексики.

R.U. Dokhoyan. The displays of synonymy in the semantic subfield of speech activity in modern Armenian. - The displays of synonymy available in the semantic subfield of speech activity are studied in the article which enable to define and classify the paradigmatic connections and relations of the word-semantic groups of above mentioned subfield (verbs of saying, thinking, feeling, behavior), their crossings and semantic links interagreement, the particularities of function, in the result discovering the system links and interrelations of semantic groups of verbal vocabulary in the field-level.

ԳՐԱԿԱՆ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ ՄԵՐՈՆՔ // ՁԵՐՈՆՔ ԲԱՌԵՐԻ ԽՈՍՔԻՄԱՍԱՅԻՆ ԱՐԺԵՔԻ ՀԱՐՅԸ

Բանասիր. գիտ. թեկնածու Վ. Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Արդի հայերենի թե՛ գրական և թե՛ խոսակցական տարբերակներում լայն գործածություն ունեցող *մերոնք* և *ձերոնք* բառերի խոսքիմասային պատկանելության հարցը ուշադրության է արժանացել բազմաթիվ լեզվաբանների կողմից, որն իր արտացոլումն է գտել հայերենագիտական համապատասխան աշխատություններում, ինչպես նաև այս կամ այն չափով ներկայացվել է հայերենի բառապաշարն ընդգրկող բառարաններում: Չնայած դրան՝ անձնական դերանունների սեռականի ձևերից բաղադրված վերը նշված բառերի խոսքիմասային պատկանելության հարցն առ այսօր չարունակում է մնալ վիճելի և տարակարծությունների տեղիք տվող:

Մեր աշխատանքի նպատակն է ուսումնասիրել հարցի պատմությունը հայերենի քերականական աշխատություններում, համադրել և ներկայացնել տարբեր քերականների տեսակետներն ու հիմնավորումները, բացահայտել վերը նշված բառերի ընդգրկվածությունը հայերենի բառապաշարն ընդգրկող բառարաններում, ինչպես նաև պարզել գրական արևելահայերենում բառերի գործածության հաճախականության մոտավոր պատկերը:

Ըստ «Արևակ» ԱԱԿ էլեկտրոնային շտեմարանի տվյալների (պարունակում է 110 մլն բառամթերք, 19-րդ դ. կեսերից մինչև այսօր հրատարակված բնագրեր)՝ *մերոնք* (ուղիղ ձևով) բառն ունի 2739 ընդհանուր բնագրային և 1112 բնագրային գործածություն, *ձերոնք*-ը՝ 317 և 173 տեքստային գործածություն¹:

Շատ քերականներ այդ բառերը ներկայացնում են որպես հավաքական գոյականներ², ոմանք էլ՝ որպես դերանուններ՝ առանց տեսակը նշելու³: Որոշ քերականներ էլ բառերը ներկայացնում են

¹ Տե՛ս www.eanc.net/EANC/search/?interface_language=am.

² Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1976 (*մերոնք*), էջ 922, (*ձերոնք*), էջ 1002: Մտ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան (հմմտ. *ձերոնք, իմոնք*) հ. 3, Ե., 2010, էջ 312: Ժամանակակից հայերենի քառահատոր բացատրական բառարանում *մերոնք*-ի խոսքի մասը չի նշվում (հ. 3, Ե., 1976, էջ 525), իսկ *ձերոնք*-ը նշվում է որպես հոգնակի գոյական (բրբ.) (էջ 416):

³ Ս. Աբրահամյան, Ն. Պառնայան, Հ. Օհանյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 2, Ե., 1974, էջ 101 («Դերանուն» բաժինը՝ Ս. Աբրահամյանի):

որպես փոխանուն ստացական դերանուններ: Այդպես է վարվում Ալ. Մարգարյանը՝ բառերի շարքը լրացնելով *իմը-իմոնք, քոնք-քոնոնք, մերը, ձերը* միավորներով: Լեզվաբանը նաև իրավացիորեն նշում է, որ անձնական դերանունների փոխանվանական այդ ձևերը տակավին հիմնավոր ու ճիշտ պատասխան չեն ստացել, և պահանջ է դնում պարզելու, թե իրապես լեզվական ինչ կամ ինչպիսի իրողություններ են դրանք⁴:

Մ. Ասատրյանը «Ժամանակակից հայոց լեզու» աշխատության մեջ գրում է. «Կան նաև *ՈՆՔ* ձևով կազմված բառեր դերանունների սեռական հոլովաձևերից, օրինակ՝ *մերոնք, ձերոնք*: Ժողովրդական – բարբառային են *իմոնք-քոնոնք* և այլ ձևերը»⁵: Բառերի խոսքիմասային պատկանելությունը չի նշվում, միաժամանակ դրանք առանձնացվում են գոյականներից:

Ներկայացնելով դերանվան յոթ տեսակ՝ Ալ. Մարգարյանը գրում է. «Բայց միաժամանակ հարկ է նշել, որ պատմական զարգացման բոլորովին այլ ընթացք են ունեցել գրաբարի ստացական դերանունները՝ *իմ-իմք, մեր-մերք, իւր-իւրք, քո//քոյ-քոյք, ձեր-ձերք*: Դրանք ստացականություն, պատկանելություն են ցույց տվել և եթե գրաբարում թե՛ առանձնաբար, թե՛ գոյականների հետ հոլովվել են եզակի ու հոգնակի թվով (օր.՝ *իմ տուն//տուն իմ, իմոյ տան//տան իմոյ-իմում տան//տան իմում-(զ)իմ տուն-(զ)տուն իմ- ի տանէ իմմէ- իմմէ տանէ, իմով տամք// տամք իմով* և այլն), ապա նոր հայերենում՝ աշխարհաբարում, տեղի տալով անձնական՝ հատկապես սեռական 1-ին և 2-րդ դեմքի դերանունների սեռական հոլովաձևերին՝ դադարել են այդպիսիք ստացական դերանուններ լինելուց:

Եվ իրոք, փաստերը ցույց են տալիս, որ ժամանակակից հայոց լեզվում ստացական դերանվան սոսկ յուրատեսակ դեր են կատարում *ես, դու, մենք, դուք* անձնական դերանունների սեռական հոլովաձևերը, երբ փոխանվանական նշանակությամբ են գործածվում, հմմտ. *իմ-իմը-իմոնք, քո-քոնք-քոնոնք, մեր-մերը- մերոնք, ձեր-ձերը- ձերոնք*⁶: Ինչպես տեսնում ենք, խնդրո առարկա բառերի շարքը լրացվել է *իմը-իմոնք, քոնք- քոնոնք, մերը, ձերը* բառերով, որոնք ավելի հաճախ բարբառային ձևեր են համարվել: Այնուհետև

⁴ Ալ. Մարգարյան, Հայոց լեզվի քերականություն, Եր., 2004, էջ 309:

⁵ Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, Ե., 2002, էջ 53:

⁶ Ալ. Մարգարյան, նշվ. աշխ., էջ 308:

դրանց գործածության բազմաթիվ օրինակներ է բերում և գրում. «Թե ի՞նչ խոսքի մասի են պատկանում կամ ի՞նչ խոսքիմասային իմաստ են արտահայտում անձնական դերանունների՝ սեռականների փոխանվանաբար գործածվող այդ ձևերը, տարբեր կերպ է մեկնաբանվել հայ լեզվաբանական գրականության մեջ: Ոմանք դրանք չեն զատել դերանուններից և կա՛մ սեռականի փոխանվանական ձևեր, կա՛մ սոսկ դերանուններ են համարել՝ չնշելով տեսակը (Ս. Աբրահամյան և ուրիշներ, Ժամ. հայոց լեզու, 2-րդ հատոր, էջ 101): Ոմանք էլ անտեսել են *իմը-իմոնք, քոնը-քոնոնք, մերը, ձերը* ձևերը և դերանուն են համարել միայն վերջիններիս հոգնակիները (*մերոնք, ձերոնք*), իսկ ոմանք էլ, հատկապես բառարաններում, իբրև գոյականներ են ներկայացրել, դրանցից բացի, նաև *իմոնք*-ը»⁷:

Այնուհետև Մարգարյանը եզրակացնում է՝ «Անձնական դերանուններից սերող այդ ձևերը բոլոր դեպքերում դերանուններ են և, իբրև այդպիսիք, հատկանշվում են դրանց իսկ հատուկ խոսքամասային իմաստով. *իմը-իմոնք, քոնը-քոնոնք, մերը-մերոնք, ձերը-ձերոնք* զուգադիր ձևերը ընդհանուր, չտարբերակված առարկայական և ներունապես էլ պատկանելության, ստացականության իմաստ են արտահայտում, ուստի և դերանվան մի առանձին տեսակ են հանդիսանում և իրավամբ էլ կարող են կոչվել *փոխանուն ստացական դերանուններ*: Իբրև դերանվան մի առանձին տեսակ, դրանք հարաբերակցվում են գոյականներին և հոլովվում են՝ եզ. թվում -ի, հոգնակի թվում -ց հոլովմամբ»⁸: Ապա հոլովում է բառերը՝ այս խմբի մեջ մտցնելով նաև *իրենը* և *իրենցը* ձևերը, որոնք, սակայն, կազմվում են տրականից:

Ս. Աբրահամյանն իր «Արդի հայերենի դերանունները» աշխատության մեջ, նշելով, որ պրոֆ. Հ. Աճառյանն ընդունում է ստացական իբրև դերանվան առանձին տեսակ, այնուհետև մեջբերում է նրա հետևյալ ձևակերպումը՝ «Ստացական դերանուն է կոչվում այն բառը, որ ցույց է տալիս, թե առարկան երեք (կամ ավելի) դեմքի դերանուններից ում է պատկանում. օր.՝ այսինչ ձին իմն է» (Հր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 2, Ե., 1954, էջ 139), ապա գրում է. «Պարզ է, որ *իմն* դերանունը *ես* դերանվան փոխանուն սեռականն է: Այդ հաստատում է նաև Հ. Աճառյանը: Որ

⁷ Նույն տեղում, էջ 309:

⁸ Նույն տեղում:

ստացական կոչվող դերանունները արդի հայերենում դերանվան առանձին տեսակ չեն, այդ մասին խոսվել է վերևում, և դա երևում է հենց այդ դերանունների վերոհիշյալ սահմանումից, որը փաստորեն հանդիսանում է անձնական դերանվան սեռական հոլովի բնորոշում: Այդ պատճառով էլ դերանվան այս տեսակի գոյությունը արդի հայերենում վաղուց մերժված է քերականների կողմից»⁹:

«Ժամանակակից հայոց լեզու» աշխատության մեջ Ս.Աբրահամյանը գրում է. «Յ հոլովման են պատկանում նաև մի շարք դերանունների հոգնակիներ՝ *իմոնք-իմոնց, քոնոնք-քոնոնց, մերոնք-մերոնց, ձերոնք-ձերոնց, իրենք-իրենց, սրանք-սրանց, նրանք-նրանց, որոնք-որոնց, ոմանք-ոմանց*, ինչպես և որոշ յուրահատկությամբ՝ *կին* գոյականի հոգնակին՝ *կանայք-կանանց*»¹⁰: Այսպիսով, Ս. Աբրահամյանը ընդունում է բառերի դերանուն լինելը, պարզապես չի նշում տեսակը՝ ստացական դերանունները որպես առանձին տեսակ չընդունելու պատճառով:

Աճառյանի տեսակետներին մենք կանդրադառնանք ավելի ուշ, իսկ այժմ տեսնենք, թե ինչպես է ներկայացնում հայերենի դերանունները Հ. Հարությունյանն իր «Ածական անուն. դերանուն» գրքում: Նա առաջարկում է դերանունները բաժանել հետևյալ 3 տեսակների՝ որոշ հարցերում, ինչպես ինքն է գրում, հետևելով ռուս լեզվաբաններին.

Առարկայանիշ կամ գոյական դերանուններ, որոնք ցույց են տալիս առարկա՝ *ես (մենք), դու (դուք), ամեն ինչ, նա (նրանք), մերոնք, ձերոնք, սա, դա, միմյանց, իրար, մեկմեկու, ամենքը, ամեն ոք, ամեն ինչ, մեկը, ոչ մեկը, ոչինչ, ոչ ոք, ոմանք, ով (ովքեր), ինչ (ինչեր), որոնք*:

Ածականանիշ կամ ածական դերանուններ՝ *այս, այդ, այն* և այլն:

Մակբայանիշ կամ մակբայ դերանուններ՝ *այսպես, այդպես* և այլն¹¹:

Այստեղ կարևոր է այն, որ մեզ հետաքրքրող բառերը որպես դերանուն են ներկայացվում: Վերոհիշյալ աշխատության «Դերանվան ձևաբանական առանձնահատկությունները» բաժնում Հ. Հա-

⁹ Մ. Գ. Աբրահամյան, Արդի հայերենի դերանունները, Ե., 1956, էջ 178:

¹⁰ Մ. Աբրահամյան, Ն. Պառնասյան, Հ. Օհանյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 2, էջ 101:

¹¹ Հ. Ա. Հարությունյան, Ածական անուն. դերանուն, Ե., 1976, էջ 71:

րությունյանը գրում է. «*Մերոնք* և *ձերոնք* դերանունները հոգնակի են, որոնք կազմված են անվանական -*ոնք* հոգնակերտով, որը դրվել է սեռականի ձևի վրա, և նշանակում են առաջին կամ երկրորդ դեմքերին վերաբերող, մոտ անձ, առարկա, -*ոնք*-ը փաստորեն նաև գոյականի հոգնակիությունը, հավաքականությունն է ցույց տալիս»¹²:

Նշված բառերի խոսքիմասային պատկանելության հարցին անդրադարձել է նաև Ֆ. Խլդաթյանը. մանրամասնորեն քննելով դերանունների և գոյականների իմաստային առանձնահատկությունները՝ իրավացիորեն կարծում է, որ դրանք պետք է համարել դերանուններ¹³: Իսկ դրանց տեսակի մասին գրում է. «*Մերոնք* և *ձերոնք* բառերը իրենց բառային քերականական առանձնահատկություններով և, նամանավանդ, առարկայական իմաստի արտահայտման բնույթով անձնական դերանուններ են, ուստի պետք է հայերենի խոսքի մասերի համակարգում նրանց հատկացնել իրենց օրինական տեղը»¹⁴: Իր հետագա աշխատություններում անձնական դերանունները բաժանում է հետևյալ ենթատեսակների՝ դիմային (*ես, դու, ինքք, մենք, դուք, իրենք*), հատկացական (*մերոնք, ձերոնք*), ցուցական (*նա, նրանք*), սաստկական (*ես ինքս, դու ինքդ, նա ինքը, մենք ինքներս, դուք ինքներդ, նրանք իրենք*)¹⁵: Ուշագրավ է այն, որ խնդրո առարկա բառերը ներկայացված են որպես առաջին և երկրորդ դեմքերի դերանուններ, մինչդեռ դրանք երրորդ դեմքի են: Այնուհետև գրում է. «Աբեղյանը, հետևելով օտար լեզուների ավանդույթներին, *իմ, քո, մեր, ձեր* սեռական հոլովածները համարում է ստացական ածական: Այս տեսակետն ընդունելություն չգտավ»¹⁶:

Գ.Ջահուկյանը գտնում է, որ «Իրադրական և կոնտեքստային իմաստը բնորոշ է նաև մի շարք այնպիսի բառերի համար, որոնք, ինչպես *ինչ*-ը, հոլովվում են անվանական տիպի հոլովմամբ: Դրանք մասամբ ինքնին առարկայանիշ են (*միմյանց, իրար, մեկ-մեկու*), մասամբ առարկայանիշ են դառնում փոխանունաբար (*մեր-ոնք, ձեր-ոնք, որ-ոնք, մի քանիսը, մեկը, ոչ մեկը*)¹⁷: Այնուհետև գրում է. «Ինչպես վերևում նշվեց, դերանվանական հոգնակին ոչ

¹² Նույն տեղում, էջ 76:

¹³ Ֆ. Խլդաթյան, «Մերոնք» և «ձերոնք» բառերի մասին // «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում», 1-2, 1968, էջ 99-102:

¹⁴ Նույն տեղում, էջ 101:

¹⁵ Ֆ. Խլդաթյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. Գ, Ե., 2007, էջ 114-115:

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ Գ.Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Ե., 1974, էջ 215:

միայն ձևով, այլև իմաստով հիշեցնում է *անք, ենք, ոնք* վերջավորություններով կազմությունները, այսինքն՝ վերջիններիս նման լրացական բնույթ ունի՝ *մենք = ես + այլ անձինք (դու, դա, դուք, նրանք)*, *դուք = դու + այլ անձինք (նա, նրանք)*, *իրենք = ինքը + այլ անձինք*», այսինքն՝ Ջահուկյանը նույնպես դրանք որպես դերանուն է ներկայացնում¹⁸:

Խնդրո առարկա բառերը դերանուն համարելու միտում կա նաև համեմատաբար վերջին տարիների աշխատանքներում, թեև նշվում է, որ դրանք երկակի բնույթի են: Յու. Ավետիսյանի և Հ. Ջաքարյանի գրքում նշվում է. «1-ին և 2-րդ դեմքերին են հարաբերակցվում 3-րդ դեմքի *մերոնք, ձերոնք* բառերը, որոնք մատնանշում են խոսողի կամ խոսակցի անունից հանդես եկող խումբ՝ բացառյալ խոսողը կամ խոսակիցը (Միրելի՛ս, *ձերոնք* արդեն գնացել են: *Մերոնք* իմ մասին մոռացել են): Անեզական այս բառերը ենթարկվում են *ց* հոլովման: Դրանք սովորաբար համարվում են գոյականներ, երբեմն՝ դերանուններ»¹⁹:

Ինչպես տեսնում ենք, խնդրո առարկա բառերի խոսքիմասային պատկանելության հարցը սերտորեն կապված է արդի հայերենում ստացական դերանունների՝ որպես առանձին տեսակ ընդունելու կամ չընդունելու հետ:

Ստացական դերանունների հարցին անդրադարձել են մի շարք հայերենագետներ, որոնց տեսակետների ամփոփ շարադրանքը տվել է Մ. Մինասյանն իր «Հայերենի ստացական դերանունները» հոդվածում՝ այն միտումով, որ արդի հայերենում այդպիսիք չկան²⁰:

Ներկայացնելով հայ քերականների դիտարկումները գրաբարի ստացական դերանունների՝ իբրև առանձին տեսակ ընդունելու վերաբերյալ՝ Մ. Մինասյանը եզրակացնում է. «Սակայն քանի որ գրաբարում ստացական դերանունները մի անգամ ծագած լինելով անձնական դերանունների սեռական հոլովաձևերից՝ իբրև ինքնուրույն բառեր, գոյականի հետ գործածվելիս դարձյալ ենթարկվում են հոլովման և ստացականություն կամ պատկանելություն են ցույց տալիս և նախադասության մեջ հատկացուցիչ են ոչ միայն իրենց

¹⁸ Նշվ. աշխ., էջ 215:

¹⁹ Յու. Ավետիսյան, Հ. Ջաքարյան, Հայոց լեզու. ձևաբանություն, Ե., 2008, 126:

²⁰ Մ. Պ. Մինասյան, Հայերենի ստացական դերանունները // «Պատմա-բանասիրական հանդես», 4, 1959, էջ 153-167:

ուղիղ կամ անձնական դերանվան սեռական հոլովի ձևով, այլ նաև դերանվան սեռական հոլովի ձևով, այլ նաև իրենց թեք հոլովաձևերում, ապա դրանք իրավամբ կազմում են դերանունների առանձին տեսակ՝ ստացական դերանուններ»:

Հեղինակը չի անդրադառնում հիշյալ բառերի քննությանը և դիտարկումների շեշտը դնում է ստացական դերանունների ծագման, դրանց տարահիմք հոլովման, ինչպես նաև հատկացուցիչ – հատկացյալի համաձայնության վրա:

Այս երևույթին անդրադարձել է նաև Հ. Աճառյանը. «Ստացական դերանուն է կոչվում այն բառը, որ ցույց է տալիս, թե այսինչ առարկան երեք (կամ ավելի) դեմքի դերանուններից ու՛մ է պատկանում: Օր.՝ *այս ձին իմն է*: Այս նախադասության մեջ խոսքի առարկան *ձին* է. *իմն* բառը ցույց է տալիս, որ այդ առարկան առաջին դեմքին (*ես*) է պատկանում, ուստի *իմն* դերանուն է:

Ըստ այսմ ստացական դերանունը իր ծագման բուրգից անմիջապես կապված է, նախ՝ անձնական դերանունների երեք (կամ ավելի) դեմքերից մեկի հետ և, երկրորդ՝ այդ կապը պատկանելությունն է: Եվ որովհետև պատկանելությունը գլխավորապես արտահայտվում է սեռական հոլովով, ուստի ստացական դերանուններն էլ անձնական դերանունների սեռականներն են՝ լեզուների մեկ մասի մեջ»²¹: Այնուհետև ներկայացնում է ցեղակից և ոչ ցեղակից, հին և նոր բազմաթիվ լեզուներ, որոնցում ստացականները սերում են անձնական դերանունների սեռականներից:

Աճառյանը ներկայացնում է գրաբարի ստացականները. «Գրաբարի մեջ ստացական դերանուններն են *իմ, քո, մեր, ձեր, իւր*: Այս բոլորը անձնական դերանունների սեռականներն են՝ անկախ բառ դարձած և առանձին հոլովման ենթակա»²²: Այնուհետև գտնում է, որ գրաբարի ստացականները միջին հայերենում անփոփոխ մնում են՝ *իմ, քո, մեր, ձեր*, իսկ 3-րդ դ. համար իբրև ստացական է ծառայում անդրադարձ դերանվան սեռականը՝ *իր, իրենց* և քիչ անգամ *իրեն*, որ գրաբարում էլ *իրենան* ձևով միայն իբրև անձնական կամ անդրադարձ է գործածվում և ստացականի արժեք չունի²³: Աճառյանը հետաքրքիր դիտարկում ունի դրանց բարբառային գոր-

²¹ Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, համեմատությամբ 562 լեզուների, հ.2, Ե., 1954, էջ 241:

²² Նույն տեղում, էջ 283:

²³ Նույն տեղում, էջ 289:

ծածուկությունների վերաբերյալ՝ գրելով. «Ինչպես միջին հայերենում, նույնպես և արդի բարբառներում գրաբարի ստացականները անփոփոխ պահված են, բայց բարբառներում նրանք այնպես են աճել ու զարգացել, որ բազմաթիվ նորանոր ու տարօրինակ ձևերի էլ են հասել»²⁴: Աճառյանը ստացականները ներկայացնելիս նախորդ փուլերը չի հակադրում աշխարհաբարին և որևէ կերպ չի ժխտում դրանց գոյությունը. «Ասացինք արդեն, որ ստացականները՝ ինչպես միջին հայերենում և բարբառներում, նույնպես և աշխարհաբար գրական լեզվի մեջ գրաբարից շատ տարբերություն չունեն»²⁵:

Այնուհետև անվանի լեզվաբանը ներկայացնում է ստացականների թվային յուրահատուկ դիրքերը, ինչպես նաև երկու գրական լեզուներում դրանց ժողովրդախոսակցական տարբերակները, ապա ավելացնում է. «Ժամանակակից հայերենում ստացականը կարող է լինել թե՛ ածական և թե՛ դերանուն: Ածական է, երբ պատկանում է հաջորդ գոյականին և այն ժամանակ դրվում է միշտ գոյականից առաջ և մնում է անփոփոխ՝ ինչ թվով ու հոլովով էլ լինի գոյականը, իսկ գոյականը ստանում է որոշիչ հոդ»²⁶:

Ստացականը, ըստ Աճառյանի, դերանուն է, եթե գործածված է բայի հետ կամ առանձին. այս դեպքում անպատճառ ստանում է որոշիչ հոդ (ը կամ ն): Այսպես՝ *խմբ, քոնք, մերք, ձերք*: Այնուհետև հոլովում է միայն եզակիի ձևերը և գրում, որ հոգնակին կազմվում է *-ոնք* մասնիկով: *Մերոնք, ձերոնք* դերանունները հոլովում է միայն արևմտահայերենի մասը ներկայացնելիս՝ *մերոնք, մերոնց, մերոնցմե, մերոնցմով*²⁷: Ըստ այսմ՝ Աճառյանը ընդունում է ստացական դերանունները որպես անկախ բառեր, և այս մասին, ինչպես արդեն նշել ենք, գրում է նաև Ս. Աբրահամյանը:

Բառերը որպես դերանուն է ներկայացնում նաև Հովհ. Բարսեղյանը՝ գրելով. «...Այս դերանուններից *խրենք, մերոնք, ձերոնք, ո՞րք (որոնք), (մի) քանիսը, ամենքը, մեկը (մեկն ու մեկը, ամեն մեկը)* առարկայանիշ են դարձել փոխանունաբար: Այդպես, ստանալով որոշիչ հոդ, փոխանունաբար գոյական դերանվան նշանակություն են ձեռք բերում նաև *ամեն, ողջ, ամբողջ, յուրաքանչյուր,*

²⁴ Նույն տեղում, էջ 290:

²⁵ Նույն տեղում, էջ 338:

²⁶ Նույն տեղում, էջ 338-339:

²⁷ Նույն տեղում, 343:

բոլոր, նույն, մյուս ածական դերանունները»²⁸: Այնուհետև խոսելով գոյական անունների և գոյական դերանունների հոլովման տարբերությունների մասին՝ գրում է. «Ըստ էության այս ձևերից երեքը՝ *սրա, դրա, նրա*, տրականից տարբերվում են միայն **ն** մասնիկով, ուրեմն առանձին հոլովածն չեն, իսկ մյուսները (*իմ, քո, մեր, ձեր, իր*) Մ. Աբեղյանի, Հ. Աճառյանի, այլև Գ. Ջահուկյանի համար ստացական դերանուններ են»²⁹:

Իբրև ամփոփում նկատենք, որ հայ քերականները հիմնականում ընդունում են արդի հայերենի ստացական դերանունների առկայությունը, մասամբ հիմք են համարում դրանց սերումը անձնական դերանուններից: Սակայն դրանց՝ սեռականից ծագած լինելը բնորոշ է ոչ միայն հայերենին, այլև այլ լեզուների ևս, և դրա հիմնավորումը, ինչպես տեսանք, շատ համոզիչ կերպով տալիս է Հ. Աճառյանը: Կարծում ենք՝ գրական արևելահայերենում այդ դերանունները պիտի ընդունվեն որպես առանձին տեսակ՝ ստացական դերանուններ անվանումով՝ դրվելով իրենց տեղում, ինչպես դա ընդունված է հայերենի նախորդ փուլերի, նաև գրական արևմտահայերենի և բարբառների, ինչպես նաև օտար լեզուների (ռուսերեն, անգլերեն և այլն) դերանունները սովորելու առումով, որոնցում դրանք առանձին տեսակ են համարվում:

В. А. Нерсисян. Вопрос о частеречной принадлежности слов *մերոնք* и *ձերոնք* в восточноармянском языке. Вопрос о частеречной принадлежности слов *մերոնք, ձերոնք*, частоупотребляемых в литературном и разговорном вариантах современного армянского языка, являлся предметом исследования многих лингвистов и нашел свое отражение в соответствующих трудах. В той или иной степени эта проблема затрагивалась в словарях, содержащих лексику армянского языка. Несмотря на это, вопрос о частеречной принадлежности вышеназванных слов, образованных от форм родительного падежа личных местоимений, до сих пор остается спорным.

Некоторые грамматисты относят эти слова к собирательным существительным, другие — к местоимениям без указания на их разряд, третьи считают их субстантивированными притяжательными местоимениями.

V. Nersisyan. The Issue of the Part of Speech of the words *մերոնք* and *ձերոնք* in the Western Armenian Language. The issue of the part of speech of the words *մերոնք, ձերոնք*, widely used in the literary and colloquial variants of contemporary Armenian, has

²⁸ Հ. Բարսեղյան, Հայերենի խոսքի մասերի ուսմունքը, Ե., 1980, էջ 509-510:

²⁹ Նշվ. աշխ., էջ 510-511:

been in the focus of attention of many linguists and has been reflected in corresponding researches. It has been presented in certain dictionaries containing the word stock of the Armenian language as well. In spite of this fact the issue of the part of speech of these words derived from the forms of the Genitive Case of Personal Pronouns is still argumentative and continues to arise various opinions.

Some grammar researchers consider these words to be collective nouns, others – pronouns without mentioning their type. Besides, there are scholars who consider them to be substantivized possessive pronouns.

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ. СООБЩЕНИЯ. REPORTS.

ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԻՄԱՍՏ ՈՒՆԵՑՈՂ ԽՈՍՔԻ ՄԱՍԻ ԿԱՊԱԿՑԱԿԱՆ ԴԵՐԸ ՏԵՔՍՏՈՒՄ

Բանասիր. գիտ. թեկնածու Ս. Գ. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Ոչ նյութական խոսքի մասերից է կապը: «Կապերը, - գրում է ակադ. Ս. Աբրահամյանը, -վերաբերական իմաստ ունեցող բառեր են, որոնք դրվելով այլ բառերի (գոյականների, առարկա նշանակող դերանունների, գոյականաբար գործածված բառերի) վրա՝ ցույց են տալիս նրանց ստորադասական, լրացական հարաբերությունը և դրանով իսկ կապում գերադաս անդամի հետ»¹:

Կապը կապվող բառի հետ միասին ձևավորում է նախադասության անդամ, որը ստորադասական հարաբերությամբ կապվում է նախադասության գերադաս անդամի հետ:

Սակայն տեքստում կապական կապակցությունը դառնում է նաև կապակցման միջոց, եթե նրա իմաստը կապվում է առանձին (ինքնուրույն) նախադասության (նախադասությունների), պարբերության հետ՝ արտահայտելով տարբեր լրացական հարաբերություններ:

Բերենք մի հատված Իսահակյանի «Հիշատակարանից». «*Իմ մեջ միշտ երկու մարդ է ապրել. նորմալ, գործող, սովորող, հետաքրքրվող, ուրախացող, ապրող, մյուս մասը՝ տխուր, անգործ, միշտ սևեռուն, միշտ կրծող-ցավեցնող, միշտ արթուն, չարչարող և խանգարող ու մեռցնող: Դրա համար ինձնից դուրս չեկավ այն, ինչ որ կարող էր լինել՝ ի նկատի ունենալով իմ մեջ ամբարված կարելիությունները*»:

«Հիշատակարանից» հաղորդվող բովանդակությունը հաղորդային պլանում է, իսկ հաղորդակցային պլանում այն տեղեկություններն են, որոնց պատճառը մարդու էության հակասությունն է՝ *նորմալ, գործող և անգործ, չարչարող*:

¹ Ս. Աբրահամյան, Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, Ե., 1965, էջ 288-89:

Երկրորդ պարբերությունը առաջին պարբերության հետ կապված է պատճառային հարաբերությամբ՝ *դրա համար* կապական կապակցության միջոցով, որը պատճառի պարագա է: *Համար* կապի պատճառի իմաստի ձևավորմանը նպաստում է նախորդ պարբերությունը: Երկու պարբերությունների միջև կապակցական դեր է կատարում նաև *իմ մեջ* կապական կապակցության կրկնությունը:

Բերենք մի օրինակ՝ Նար-Դուսի «Սպանված աղավնի» վիպակից, որտեղ երկխոսության ժամանակ *համար* կապը նպատակի հարաբերությամբ է կապված նախորդ նախադասությունների հետ՝ ձևավորելով նպատակի պարագա՝ *դրա համար*, որը միաժամանակ կապակցական դեր ունի: Այսպես՝

- Գիտե՞ք, երեկ մի բան էի ուզում խնդրել ձեզ, բայց չհամարձակվեցի, - ասաց ժպտալով և կարմրեց:

- Ի՞նչ:

- Ուզում էի խնդրել, որ թույլ տաք ինձ գամ ձեզ հետ, տեսնելու, թե ինչպես եք որս անում:

- *Դրա համար* թույլտվություն հարկավոր չէ, այլ պետք է ուղղակի վեր կենալ ու գալ, - ասացի:

Զափ ցույց տվող կապով չափի պարագան համեմատության եղանակով հարաբերություն է արտահայտում նախորդ պարբերության հետ՝ դառնալով կապակցման միջոց:

Այսպես՝ «Նախքան ճեմարանը թողնելը, հյուրընկալները մեզ առաջնորդում են «Վասպուրական» սրահի առաջին հարկում գտնվող սրահները, որոնք թանգարան էին կոչվում: *Տիրեցնելու չափ* անշուք էր այս թանգարան կոչվածը»: (Ս. Կապուտիկյան, Երկեր):

Երկու պարբերությունները կապակցվում են նաև *թանգարան* բառի կրկնության միջոցով:

Բակունցի Երկերի առաջաբանում գրված է «Այս ըմբռնումն էլ, հավանականորեն, *Բակունցին* կանգնեցրեց *Աբովյանի* կյանքի վիպական պատկերման խնդրի առաջ: *Մինչև վերջ* *Բակունցը* հանդես եկավ Աբովյանի հարյուրամյա «առեղծվածին» նվիրված աշխատությամբ (1932), որն ունի հետևյալ վերնագիրը՝ «Խաչատուր Աբովյանի անհայտ բացակայումը» (գրված արխիվային նոր վավերագրերի և անհայտ նամակների հիման վրա)»:

Այս հատվածում երկու պարբերությունները կապված են ժամանակային հարաբերություն արտահայտող *մինչև* կապով, որը կապվող բառի հետ (մինչև վեպը) ժամանակի պարագա է ձևավորում և կապակցվում նախորդ պարբերության հետ: Այստեղ կապակցական դեր ունեն նաև *Բակունց* և *Աբովյան* բառերի կրկնությունը:

Բերենք ևս մի հատված Բակունցի Երկերի առաջաբանից.

«Հայ գրականության պատմության» էջերում Ակսել Բակունցի համար շատ կային նվիրական, սիրելի անուններ. 5-րդ դարի պատմագիր Եղիշեից մինչև 20-րդ դարի մեծ բանաստեղծ Եղիշեն նրան բաշխել են իրենց հոգու լույսն և ժողովրդանվիրումի սրբազան պատգամները, ժողովրդագիտության ու հայրենասիրության դասերը:

Չնայած «հայոց մեծերի» բերած նպաստին, Բակունցի համար ամենապաշտելի կերպարը եղել է ազգային ինքնության գյուտարարն ու ազգային վերածնության համբավաբերը՝ *Խաչատուր Աբովյանը*, որի վառած կրակները մեկ հարյուրամյակ անց բոցավառվեցին նաև Բակունցի հոգու մեջ: *Իր հզոր նախորդի պես* Ակսել Բակունցը ևս այրվեց սիրո և նվիրումի, հավատարմության և երազի, տազնապի և հերոսության բոցերի մեջ, մի անգամ ևս հաստատելով իր մոխիրներից վերակենդանացող թռչունի «հրաշալի հարության» լեզենդը:

Բերված հատվածում կապով կապակցումը կատարվում է պարբերությունների միջև և պարբերության ներսում՝ նախադասությունների միջև: Այսպես երկրորդ պարբերությունը առաջին պարբերության հետ կապված է զիջման հարաբերությամբ, որը *չնայած*՝ *կապական* կապակցության միջոցով ձևավորել է զիջման պարագա՝ կապակցական դերով: Երկրորդ պարբերության ներսում երկրորդ նախադասությունը՝ *պես* կապով նմանության համեմատության եղանակով, ձևի հարաբերությամբ կապված է նախորդ նախադասության հետ՝ ձևավորելով ձևի պարագա՝ *իր նախորդի պես հզոր* կապական կապակցությամբ, որտեղ կապակցումը կատարվում է նաև շրջաօղակով (Խաչատուր Աբովյանի և իր նախորդի):

Ահա մի հատված Դ. Դեմիրճյանի «Լուսանկար» մանրապատումից.

«Ես այնպես զգացի, որ նրա հետ կարելի էր դիմանալ կյանքի բոլոր ձախորդություններին: *Նրա հետ* կարելի էր ստեղծագործել, տանել պայքարի բոլոր պերիպեթիաները: *Նրա հետ* կարելի էր աշխարհին ըմբռնել իր ողջ խորությամբ: Տխուր օրեր չէին լինի: Նա ինքը մի անսպառ ուրախություն կլիներ... Եվ ինչ կլինի՝ եթե պատահեմ նրան...

Հը...»:

Երկրորդ և երրորդ նախադասությունները նախորդ նախադասությունների հետ կապված են միասնության հարաբերությամբ: *Նրա հետ* կապական կապակցությունները, ձևավորելով միասնության պարագա, միաժամանակ կապակցման դեր են կատարում նախադասությունների միջև: Այստեղ կապակցման դեր ունի նաև *նրա հետ*-ի կրկնությունը: Այս հատվածում կապակցական դեր ունի նաև քերականական միջոցը՝ կախման (...) կետերի կրկնությունը:

Բակունցի «Բնան, Բնան» պատմվածքից քաղված հատվածում տարածական հարաբերությամբ են կապված երկու պարբերությունները՝ ձևավորելով տեղի պարագա (արևի տակ), միաժամանակ կապակցական արժեք ունեն:

«Արևը նեղացնում էր: Տիգրանը փափախով սրբեց քրտինքը, արխալուղը հանեց: Ուսին գցելուց առաջ մի անգամ էլ նայեց անտառին, որից բարակ թելերով կապել էր փողի փալասը: Թելերից երկուսը կախ ընկած մնացել էին:

Արևի տակ ավելի շատ հոգնեց: Փորձում էր ոտքերը գետնից բարձր վերցնել, բայց չէր կարողանում»:

Բացառման հարաբերությամբ են կապված հետևյալ հատվածների կից նախադասությունները (առանց նրան) և պարբերությունները (առանց հոգնելու և վիատելու), որոնք ունեն կապակցական արժեք:

«Բայց մի գանձ էլ կա, որ լավ անունից էլ, հարաբերությունից էլ, իսկից էլ վեր է: *Առանց նրան* էս բոլորը համարյա թե սարսափելի ու կործանարար կլինեին մարդու համար: *Առանց նրան* աշխարհը կթառամեր ու կամայանար: Էս գանձը-խղճմտանքն է» (Հ. Թումանյան, Անգին քարը)

Կամ՝ «Մինչդեռ Ադամ շնչասպառ վազում էր՝ շուտով հասնելու գեղեցիկ քարերի ձորը: Երբ հասավ, եռանդով սկսեց հավաքել երփներանգ խիճերը:

Առանց հոգնելու և վհատելու մագլցում էր ժայռերը և ծեր-պերից ատամներով պոկում էր քարերը՝ վիրավորելով մատներն ու ոտքերը, բայց ոգի առած այն հեռապատկերով, թե ինչպիսի հաճույք պիտի ընծայե չքնաղ Լիլիթին» (Իս., Լիլիթ):

Հավելման հարաբերությամբ են կապված հետևյալ հատվածի կից նախադասությունները (բացի բնական այրերից)։

«Հետաքրքիր են քարանձավները, որոնք Նարեկացու ճգնա-րանն են եղել: *Բացի բնական այրերից*, բարձրադիր ապառաժի մեջ փորված են ինը սենյակներ՝ բաժանված երկու հարկերի միջև. հինգը՝ ներքևում, չորսը՝ վերևում» (Թել, նյութ. ժողովածու):

Վերաբերության հարաբերությամբ են կապված հետևյալ պարբերությունները Բակունցի «Խոնարհ աղջիկը» պատմվածքում, որտեղ *նրա մասին* կապական կապակցությամբ վերաբերության խնդիր է ձևավորվում։

«-Չորագյուղում մի որսորդ կա, վիզը ծուռ Անտոն են ասում: Հիմա էլ մնում է, թեպետ բավական ծեր է: Նրա աչքերը լավ չեն տեսնում, դրա համար էլ որսի չի գնում:

Նրա մասին Օհան ապերը շատ էր պատմում: Անտոնը մի անգամ անտառում արջի հետ է կռիւ կացել, արջը ջարդել է նրա հրացանը, կռացել է, որ գերանը վերցնի Անտոնին խփելու, բայց նա սպանել է արջին»:

Հայտնի է՝ *ի* նախդիրը արդի հայերենում գործածվում է քա-րացած կապակցության մեջ կամ կապվող բառերի հետ (ի պատիվ նրա, ի փառս հայրենիքի և այլն):

«Առյուծն այժմ գազանանոցում էր:

Ի ցույց էր դրված մի մեծ ու կլոր բարձր վանդակում, որ մինչև իսկ, կարծես նրան ծաղրելու համար, փոքրիկ քարերից չնչին, խաղալիքի նմանող ժայռ էին կազմել մոտը սյունի պես կերտված, ցանցառ տերևներով, մանրիկ ճյուղերով ճղճիմ ծառ տնկել, ծառի տակը՝ ջրի ավազան, վանդակում հատակի վրա՝ ծովի չոր ավազ»... (Վրթ. Փափագյան, Առյուծի մահը):

Երկու պարբերությունները կապակցված են *ի ցույց էր դրված* քարացած կապակցության միջոցով: Երկու նախադասություններ է կապակցում *ի* նախդիրը՝ կապվող բառի հետ (ի տարբերություն...), Բակունցի Երկերի առաջաբանում բերված հատվածում:

«Բակունցյան նոր ակնարկների մեծ մասը տպագրվեց «Անձրև» գրքում. դրանց մեջ էին «Քեռի Դավոն», «Ձորերի լույսը», «Անձրևը» և այլն: *Ի տարբերություն վաղ շրջանի գյուղական նոթերի տխուր հնչերանգների՝ նոր ակնարկները շնչում են կյանքի հերոսների՝ դաշտավարին և բանվորին համակած հավատի զգացողություններով*»:

Այսպիսով՝ նախադասության մեջ կապը՝ կապվող բառի հետ միասին, նախադասության անդամ է ձևավորում՝ տարբեր լրացական հարաբերություններով կապվելով գերադաս անդամի հետ: Տեքստում կապը՝ կապվող բառի հետ միասին, կապակցական դեր է կատարում, եթե նրա իմաստը կապվում է առանձին (ինքնուրույն) նախադասության (նախադասությունների) և պարբերության հետ՝ արտահայտելով տարբեր լրացական հարաբերություններ (բնորոշը պարագայական հարաբերությունն է):

А. Г. Барсегян. Связная роль нематериальных частей речи в тексте. В предложении предлог, будучи связанным с управляющим компонентом словосочетания, формирует часть речи, соединяясь с управляющим компонентом словосочетания различными дополнительными отношениями. Предлог в тексте, вместе с управляющим компонентом, играет связную роль, если его значение связано с отдельным предложением (предложениями) и абзацем, выражая различные дополнительные отношения (типичными являются обстоятельственные отношения).

A. G. Barseghyan The cohesive role of non-material part of speech in the text. In the sentence the preposition, together with the associated word, forms a part of speech, connecting with a superior part with various supplementary relations. The preposition in the text, together with the associated word, plays a cohesive role if its meaning is related to a separate (self-contained) sentence (s) and paragraph, expressing various supplementary relations (the typical are adverbial relations).

**ՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆԻ ԲԱՐԴ ԲԱՌԵՐԻ
ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ԽՈՍՔԻՄԱՍԱՅԻՆ ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹՅԱՆ
ՈՐՈՇՄԱՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Բանասիր. գիտ. թեկնածու Ս. Հ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
sirarpikarapetyan@ysu.am, ԵՊՀ

Հայերենում և անգլերենում ամենատարբեր հիմքերով բաղադրությունների քննությունը կատարելիս բաղադրիչների խոսքիմասային պատկանելության որոշումը հաճախ առաջացնում է դժվարություններ. դրանք չեն ծագում միայն այն դեպքերում, երբ բարդությունների բաղադրիչները նաև անկախ գործածությամբ են հանդիպում, և չկան փոխանցումներ խոսքի մասերի միջև: Հայերենում բարդության բաղադրիչների խոսքիմասային պատկանելությունը դժվար է որոշել, օրինակ՝ այն դեպքում, երբ առկա է անվանաբայական արմատական համանունություն, այսինքն՝ համընկնում են բարդության բայական մաքուր արմատն ու գոյականը¹:

Սույն հոդվածում ներկայացնում ենք այն դեպքերը, որոնցում խոչընդոտներ են լինում հայերենի և անգլերենի բարդությունների բաղադրիչների խոսքիմասային պատկանելությունը որոշելու հետ կապված:

Անգլերենում բառակազմական գործուն եղանակ է խոսքիմասային փոխանցումը (կոնվերսիան), ուստի գոյականական և բայական արմատները հաճախ դժվար է տարբերել համանունության կամ տարաբժեքության պատճառով: Օր.՝ *workbook* բառում *work* արմատից առաջին հայացքից դժվար է հասկանալ՝ արդյոք ունենք «աշխատելու մասին տետր», թե՞ «աշխատանքային տետր» իմաստը: Սա նշանակում է, որ խոսքիմասային փոխանցմամբ ստեղծվում է նոր բառ, որը թեև արտահայտության պլանում մնում է անփոփոխ, սակայն բովանդակության պլանում կրում է փոփոխություններ, որոնք պատճառ են դառնում խոսքիմասային նոր իմաստի ձևավորման, ձևաբանական և շարահյուսական յուրահատկությունների ձեռքբերման²: Բերված օրինակից երևում է, որ խոսքի

¹ Տե՛ս Լ. Ս. Հովսեփյան, Գրաբարի բառակազմությունը, Ե., 1987, էջ 138:

² Տե՛ս Ս. Հայրապետյան, Ոչ գծային բառաստեղծումը հայերենում, Ե., 2011, էջ 4:

մասերի փոխանցումները կարող են տեղի ունենալ նաև առանց բառակազմական միջոցների:

Հայերենում և անգլերենում նման դժվարությունների ենք հանդիպում նախևառաջ *բայ + գոյական (verb+noun)* և *գոյական + բայ (noun+verb)* կաղապարներով բաղադրությունները քննելիս: *Բ+Գ* կաղապարով բարդություններ են հայերենում, օր.՝ *աշխատաժամ, գրամեքենա, ընթերցասրահ, խեղդկապ, խոստովանականք, հանդուրժամիտ, հավաքավայր, հերձադանակ, ճեմասրահ, մարզակումբ, շարժառիթ, ցայտադրյուր* և այլն: Թվարկված բարդություններից մի քանիսում առաջին բաղադրիչն անվիճելիորեն բայահիմք է, ինչպես՝ *խեղդկապ, հանդուրժամիտ, հերձադանակ, ցայտադրյուր* և այլն. դրանց առաջին բաղադրիչները *խեղդել, հանդուրժել, հերձել* և *ցայտել* բայերի հիմքերն են, սակայն, օրինակ, *աշխատաժամ, խոստովանականք, հանդուրժամիտ, հավաքավայր, ճեմասրահ, մարզակումբ* բարդությունների սերող հիմքերում առկա է անվանաբայական արմատական համանունություն: Օրինակ՝ *մարզակումբ* բառը կարող է երկակի վերլուծություն ունենալ՝ *մարզանքի ակումբ* և *մարզվելու ակումբ, հավաքավայր* բառը՝ *հավաքի վայր* և *հավաքվելու վայր*:

Անգլերենում *V+N (բայ + գոյական) / Verbal Stem+N (բայահիմք + գոյական)* կաղապարով բարդություններ են, օրինակ, *lickspittle* «քծնող մարդ», *passport* «անձնագիր», *pinchpenny* «ժլատ», *scarecrow* «խրտվիլակ», *scofflaw* «զանցառու», *showroom* «ցուցասրահ», *stop-bank* «ամբարտակ», *stoplight* «լուսակիր», *washbasin* «լվացարան» և այլն: Այս կաղապարով, օրինակ, *crashpad* «ժամանակավոր քնատեղ», *guidebook* «տեղեկագիրք», *handlebar* «ղեկ», *playboy* «կնամուլ երիտասարդ», *showroom* «ցուցասրահ» բարդությունները կարող են ընկալվել ոչ թե որպես *V+N*, այլ *N+N* կաղապարով կազմություններ, քանի որ կան նաև *crash* «թնդուն, շառաչուն», *guide* «գրոսավար», *handle* «կոթ, բռնակ», *play* «խաղ» և *show* «ցուցադրություն» գոյականները: Այս բոլոր դեպքերում գործ ունենք կոնվերսիայի հետ, որը անցումն է մի խոսքի մասից որևէ այլ խոսքի մասի և ամենաարդյունավետ բառակազմական եղանակն է անգլերենում:

Կոնվերսիայի եղանակով կարող է անցում տեղի ունենալ, օրինակ, գոյականից բայի՝ *chat > (to) chat* «զրույց»- «զրուցել» *«father-(to) father* «հայր»- «հայրություն անել», բայից՝ գոյականի՝

(to)drive>drive «վարել- վարելը», (to) find–find«գտնել» –«գտածո», (to) win– a win «հաղթել» - «հաղթանակ», ածականից՝ գոյականի՝ poor > the poor «աղքատ» - «աղքատները», old > the old «ծեր» - «ծերերը», գոյականից՝ ածականի՝ wool> woollen «բուրդ- բրդյա», ածականից՝ մակբայի՝ hard > hard «դժվար» «դժվարությամբ, ջանադրորեն»:

Հարկ է նշել, սակայն, որ կոնվերսիայով հիմնականում գոյականներից են բայեր կազմվում³: Կոնվերսիան կոչում են նաև zeroderivation՝ գրոյական ածանցում, քանի որ երբ փոխվում է բառի խոսքիմասային իմաստը, այն որևէ արտաքին, այսինքն՝ ձևական փոփոխության չի ենթարկվում, որը նշանակում է՝ բառի հիմքը, արմատն ու քերականական ձևը համընկնում են հնչակազմով, գրելաձևով, և միայն արտաքին միջոցները (հոդերը, նախդիրները կամ համատեքստը), ինչպես նաև բառի՝ փոփոխության ենթարկված ձևաբանական ու շարահյուսական առանձնահատկությունները կարող են օգնել՝ տարբերելու, ասենք, ածականը գոյականից կամ բայը գոյականից և այլն:

Հայերենում կոնվերսիան այդ աստիճանի գործուն չէ, ինչպես անգլերենում, բայց այդ եղանակով, օրինակ, աղեղնավոր, ծերունի, մեծամեծ ածականներից ստացվել են համապատասխան գոյականները, բարձր, ահռելի, միահամուռ ածականներից՝ համապատասխան մակբայները⁴: Կոնվերսիայի՝ անգլերենում ավելի արդյունավետ բառակազմական եղանակ լինելը բացատրվում է նրանով, որ անգլերենում մեծաթիվ են արմատական, անաճանց բառերը, որոնք չունեն խոսքիմասային պատկանելությունը մատնանշող ցուցիչներ, ինչպես նաև համեմատաբար փոքրաթիվ են բառահարաբերական ձևայիններն ու քերականական ձևերը⁵:

Արմատական համանունություն կա նաև $Q+F$ ՝ $N+V$ կադապարում. այս դեպքում արդեն դժվար է որոշել բարդության բաղադրող հիմքի խոսքիմասային պատկանելությունը: $Q+F$ բարդություններ են, օրինակ, ազգախնամ, աղեղակիր, արևածագ, բառագետ, ծնծղահար, կաթնավաճառ, հայաթափ, հայտատու, մահատարած, մահուղապատ, սրտակեր, օրինաճանաչ և այլն: Անվանաբայական արմատական համանունության պատճառով $Q+F$ բաղադրությունը

³ Տե՛ս A. Cowie, Semantics, Oxford, 2009, էջ 19:

⁴ Տե՛ս I. Խաչատրյան, Լեզվաբանության ներածություն, Ե., 2008, էջ 162:

⁵ Տե՛ս T. Арбекова, Лексикология современного английского языка, М., 1977, էջ 42:

հաճախ ըմբռնվում է որպես *Գ+Գ* կառույց. *ձեռագործ* բառը կարելի է մեկնաբանել և՛ որպես *ձեռքով գործված*, և՛ *ձեռքի գործ*, *խողովակաշար* բառը՝ և՛ որպես *խողովակներով շարված*, և՛ *խողովակների շարք* և այլն: Առաջին դեպքում բաղադրիչների միջև առկա է *խնդրային* հարաբերություն, իսկ երկրորդ դեպքում՝ *հատկացուցիչ-հատկացյալի* հարաբերություն:

Այսպիսով, *Գ+Բ* կաղապարով բարդություններում հիմքերի խոսքիմասային պատկանելությունը որոշելիս պետք է հաշվի առնել բաղադրիչների բառակազմական իմաստները և դրանց միջև եղած շարահյուսական հարաբերությունը, օրինակ՝ *երջանկափայլ* բառում համընկնում են *փայլ* գոյականը և *փայլ* բայական մաքուր արմատը, սակայն բառը բառակազմական վերլուծության ենթարկելիս ակնհայտ է դառնում, որ այս բառի մեջ *փայլ-ը* ոչ թե գոյական է, այլ բայարմատ, քանի որ նշանակում է Տերջանկությունից փայլող՝ շողացող⁶, և բացի այդ՝ *երջանկություն* և *փայլել* բառերը միմյանց հետ խնդրային հարաբերության մեջ են:

Կան *Գ+Բ* կաղապարով այնպիսի բարդություններ, որոնց առաջին բաղադրիչներն ածականական ծագում ունեն, սակայն բարդության մեջ գոյականացած են, այսինքն՝ հանդես չեն գալիս իրենց բուն խոսքիմասային իմաստով, ինչպես՝ *դառնաբեր (դառնություն բերող)*, *խորաչափ (խորություն չափող)*, *քաղցրաբուխ (քաղցրություն բխող)* և այլն: Քանի որ գոյականացումը կոնվերսիայի ձևով հատուկ է եղել հայերենին նրա զարգացման բոլոր փուլերում, ուստի սա ածականի կոնվերսիայի՝ գոյականացման արդյունք է, այլապես այստեղ հնարավոր կլիներ նաև բառակազմական գաղտնի քայլ վերականգնել, այսինքն՝ գոյականակերտություն կամ որևէ այլ ածանցի կցում և հետագա անկում՝ բառաբարդման հաջորդող քայլի ժամանակ⁶:

Անգլերենում *N+V* կաղապարով կան բազմաթիվ բայեր, որոնց կազմությունը կա՛մ կոնվերսիայի, կա՛մ հետադարձ բառակազմության (*backformation*) հետևանք է: Հետադարձ բառակազմությունը բառի մեջ գոյություն ունեցող կամ ենթադրյալ ածանցի (հիմնականում վերջածանցների) անկման միջոցով բառեր կազմելու եղանակ է, որի հիմքում ընկած է համաբանությունը: Բառակազմական այդ եղանակի ամենավաղ օրինակներից է *to beg* «մուրալ,

⁶ Տե՛ս *Լ. Հովսեփյան*, նշվ. աշխ., Ե., 1987, էջ 152:

աղաչել» բայը, որ ստացվել է *beggar* «մուրացկան» բառից. *beggar-ը* փոխառություն է հին ֆրանսերենից՝ *bégarde*, որն անգլիացիները սխալմամբ համարել են ածանցավոր բառ և *teach-teacher, advertise - advertiser* ու նման այլ ձևերի համաբանությամբ հանելով դրա ածանցը՝ կազմել են *beg* բայը⁷: Հետագայում այս երևույթը տարածում է ստացել՝ ընդգրկելով անգլերենի համանման բոլոր կառույցները:

Բարդ բայերը հիմնականում կազմվում են համապատասխան բարդ գոյականների գոյականակերտ և դերբայական կամ ածականական վերջածանցների անկման եղանակով⁸, ինչպես՝ *lipreading* «շրթունքների շարժումներից ասածը հասկանալը»- *lipread* «շրթունքների շարժումներից ասածը հասկանալ», *sunbathing* «արևայրուք»- *sunbathe* «արևայրուք ընդունել», *shoplifter* «խանութ թալանող»-*shoplift* «խանութ թալանել», *bibliography* «մատենագիտություն»- *bibliograph* «մատենագիտություն ներկայացնել», *logrolling* «փոխադարձ ծառայության մատուցում»- *logroll* «փոխադարձ ծառայություն մատուցել», *sightseeing* «տեսարժան վայրերի այցելություն»- *sightsee* «տեսարժան վայրեր այցելել» և այլն: Կան նաև կոնվերսիայով կազմված *N+V* կաղապարով բարդ բայեր, ինչպես՝ *to telecopy* «հեռապատճեն (ֆաքս) ուղարկել»: Թեև նշված կառույցները չեն կազմվել անմիջապես *N+V* կաղապարի հետևողությամբ, այլ հետադարձ բառակազմության եղանակով, սակայն արդյունքում, միևնույն է, դրանք հանգում են *N+V* կաղապարին, ինչպես՝ *housekeeper = housekeep = house + keep* «տնտեսվարել»: Այս կառույցները *N+V* կաղապարի տակ քննելով՝ մենք տվյալ դեպքում կարևորում ենք ոչ թե դրանց կազմության պատմական գործընթացը, այլ դիտարկում ենք դրանք լեզվի ներկա, համաժամանակյա կտրվածքով: Անգլերենում այս կաղապարի դեպքում ձախակողմյան բաղադրիչների խոսքիմասային պատկանելությունն ակնհայտ է. բոլոր դեպքերում էլ դրանք գոյականներ են:

Արմատական համանունության նույնպիսի խնդիր է առաջանում նաև այն ժամանակ, երբ *Q+U* կաղապարում համընկում են *բայական* և *ածականական* հիմքերը: Օրինակ՝ *արտասովախառն*,

⁷ Տե՛ս Չ. Դյուբենց, Современный английский язык. Лексикология, М.- Ростов-на-Дону, 2010, էջ 72: *Գ. Գիրունյան*, Անգլերենի բառագիտության հիմունքներ, Ե., 2009, էջ 136:

⁸ Տե՛ս V. Adams, Complex Words in English, London and New York, 2013, էջ 101:

անձրևախառն բառերում դժվար է պարզել՝ արդյոք *խառն*-ը «խառն» ածականն է՝ *արտասուքի հետ խառն, անձրևի հետ խառն*, թե՞ «խառնել» բայի հիմքը՝ *արտասուքին խառնված, անձրևին խառնված*: Նույն կերպ նաև *բուսագուրկ, ճյուղագուրկ, բարոյագուրկ* բառերի դեպքում դժվար է որոշել՝ արդյոք ունենք *գուրկ* ածականը, թե՞ *գրկվել* բայի հիմքը:

Թե՛ հայերենում և թե՛ անգլերենում բարդության հիմքերի խոսքիմասային պատկանելությունը որոշելիս դժվարություն է առաջանում նաև *ածականական* հիմքը *մակբայականից* տարբերակելիս: Ածականն ու մակբայը հայերենում հաճախ ձևաբանորեն տարբերակված չեն: Դրա պատճառն այն է, որ որակական ածականների բառիմաստի մեջ համատեղվում են և՛ առարկայի հատկանիշի, և՛ գործողության հատկանիշի իմաստները⁹, ինչպես՝ *տխուր մարդ, գեղեցիկ պայուսակ* և *տխուր քայլել, գեղեցիկ երգել*: Հետևաբար հնարավոր է, որ շփոթություն առաջանա բարդության կազմի մեջ մտնող բաղադրիչը ածական կամ մակբայ համարելիս:

Հայագիտության մեջ կարծիք կա, որ *մակբայ* խոսքի մասը բառակազմությանն ավելի քիչ է մասնակցում, իսկ գոյականի հետ այն առհասարակ կապակցություն կազմել չի կարող, այլ կերպ ասած՝ «...մակբայ լրացում վերցնող բոլոր գոյականները կամ բայանուններ են, կամ եղել են բայանուն...»¹⁰: Սակայն դեռևս գրաբարի համար առանձնացվել են *Մ+Գ* կաղապարով կազմություններ, ինչպես՝ *յառաջաբան, յառաջաբաժին, յարաժամ, յաւէտահրաշ* և այլն¹¹:

Մ+Գ կաղապարով մեր առանձնացրած բարդություններից են, օրինակ՝ *առաջագլուխ, հապճեպաքայլ, կամացձայն, կանխարգելք, մոտագդեցություն, շատգրություն, ցածգլուխ* և այլն:

Անգլերենում *Adv+N* կաղապարում որոշակի դժվարություններ կան մակբայը նախդրից տարբերելիս: Բանն այն է, որ նույն բառն անգլերենում միաժամանակ կարող է լինել *մակբայ, նախդիր* և *ածական*, օրինակ՝ *down* բառը կարող է լինել և՛ նախդիր՝ *down the street* «փողոցն ի վար», և՛ *մակբայ*՝ *liedown* «պառկել», և՛ *ածական*՝ *to feel down* «վատ զգալ»: Ստացվում է, որ օրինակ՝ *Adv+N* կաղապարը կարող է նաև չտարբերվել *Prep+N* կաղա-

⁹ Տե՛ս *Մ. Ասատրյան*, Ժամանակակից հայոց լեզու: Ձևաբանություն, Ե., 1983, էջ 358:

¹⁰ Տե՛ս *Մ. Գալստյան*, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Ե., 1978, էջ 21-22:

¹¹ Տե՛ս *Լ. Հովսեփյան*, նշվ. աշխ., էջ 154:

պարից, քանի որ վերջինիս իրացմանը մեծ մասամբ մասնակցում են տեղ ու ժամանակ ցույց տվող նախդիրները, որոնք կարող են նաև որպես տեղի ու ժամանակի մակբայներ ընկալվել: Սա է պատճառը, որ *Adv+N* կաղապարն անգլերենում բառակազմական տեսանկյունից անկենսունակ է: *Adv+N* կաղապարով (նրանք, որոնցում սերող հիմքը բուն մակբայ է) մեզ հանդիպած համադրական բարդությունները փոքրաթիվ են, օրինակ՝ *oftentimes* «հաճախ», *nowadays* «ներկայումս, այս օրերին» և այլն:

Հիմքերի խոսքիմասային պատկանելությունը որոշելիս բախվում ենք նաև *Գ+Մ* կաղապար առանձնացնելու կամ չառանձնացնելու խնդրին: Որոշ լեզվաբանների համոզմամբ գոյականի հետ, որպես գերադաս բաղադրիչ, թվականը, դերանունը և մակբայը¹² բարդություններ չեն կազմում: Դա բացատրվում է այդ խոսքի մասերի բառիմաստով և ձևաբանական հատկանիշներով. դրանց բառիմաստը լրացումներ չի պահանջում, ուստի դրանք որպես լրացյալ հանդես չեն գալիս և բարդություններ էլ չեն կազմում¹³:

Մենք առանձնացրել ենք *տյառնընդառաջ* բարդությունը, որն առաջին հայացքից կարող է ընկալվել որպես *Գ+Մ* կաղապարով բարդություն, քանի որ *ընդառաջ* բառը *մակբայ* խոսքի մաս է, սակայն բարդության իմաստն է «տիրոջն ընդառաջ գնալ», որ նշանակում է՝ բարդության բաղադրող հիմքն այստեղ բայական իմաստ ունի: Գրաբարում եղել են *ակն յանդիման* և *թոքառաջ (թ)* բարդությունները, սակայն հարկ է նշել, որ վերջինի երկրորդ բաղադրիչը կարող է նաև գոյական համարվել՝ «առաջամաս» իմաստով¹⁴:

Անգլերենում որպես մակբայ կարող են ընկալվել *N+Prep* կաղապարի իրացմանը մասնակցող նախդիրները, քանի որ մակբայներն ու նախդիրները հաճախ ձևով համընկնում են: Բուն մակբայները որպես բաղադրող հիմք մեր համոզմամբ չեն մասնակցում գոյականական սերող հիմքով բարդությունների կազմությանը:

Այսպիսով, լինելով հասարակական համակարգ՝ կենդանի լեզուն՝ իբրև հաղորդակցության միջոց և գիտակցության ձև, կրում է

¹² Տե՛ս *Լ. Հովսեփյան*, նշվ. աշխ., էջ 155:

¹³ Տե՛ս *Լ. Խաչատրյան*, Բառակազմական և ձևաբանական կաղապարները ժամանակակից հայերենում, Ե., 2011, էջ 20:

¹⁴ Տե՛ս *Լ. Հովսեփյան*, նշվ. աշխ., էջ 155:

բազմազան փոփոխություններ¹⁵, շարունակ համալրվում բառային նոր միավորներով, որոնք կազմվում են՝ ելնելով ժամանակակից աշխարհում գիտության, տեխնիկայի և նորագույն տեխնոլոգիաների զարգացմանը զուգընթաց առաջ եկած նոր հասկացություններ ու երևույթներ անվանելու անհրաժեշտությունից: Լեզվի վրա իրենց ազդեցությունն են թողնում նաև պատմական տեղաշարժերը, նվաճումները, այն փոխվում է այնպես, «...ինչպես բույսն է փոխում իր ներքին կազմությունը հողի, կլիմայի և այլ արտաքին գործոնների ազդեցության տակ»¹⁶: Սա նշանակում է, որ թե՛ նշված լեզուների բառային կազմը և թե՛ խոսքի մասերի համակարգը անընդհատ տեղաշարժվում են՝ հանգեցնելով խոսքի մասային փոխանցումների, բառի մաստի փոփոխությունների՝ որպես արդյունք բերելով արմատների համանունություն կամ տարաբեքություն:

С. О. Карапетян. Трудности в определении категориальной (частеречной) принадлежности компонентов сложных слов в армянском и английском языках. В настоящей статье анализируются трудности при определении принадлежности компонентов сложных слов к той или иной части речи в армянском и английском языках. Представлены те основные модели, состоящие из разных частей речи, в которых есть корневая омонимия основ. Автор особо подчеркивает корневую омонимию в следующих моделях: *глагол (глагольная основа) + существительное, существительное + прилагательное, наречие + существительное, существительное + глагол (глагольная основа)*. Приводятся такие примеры сложных слов в обоих языках, где есть конверсия.

S. H. Karapetyan. Difficulties in Determining the Part of Speech Meanings of Armenian and English Compound Words. The article examines the difficulties of revealing the part of speech meanings of the components of Armenian and English compound words. It analyzes patterns composed of different parts of speech in which there is root homonymy. The author particularly underlines the root homonymy in the following patterns; *verb/verbal stem+noun, noun+adjective, adverb+noun, noun+ verb/verbal stem*. In both languages there are examples of compound words in which conversion occurs.

¹⁵Տե՛ս Վ. Համբարձումյան, Լեզվի զարգացման արտաքին և ներքին գործոնների մասին // «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում», 1978, 4, էջ 50:

¹⁶Տե՛ս Ֆ. դը Մոսյուր, Ընդհանուր լեզվաբանության դասընթաց, Ե., 2008, էջ 41:

ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԿՐԿՆԱՍԵՌ ԲԱՅԱԿԱՆ ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բանասիր. գիտ. թեկնածու Հ. Ս. ՉԱՔՅԱՆ

Ժամանակակից հայերենը պատկանում է այն լեզուների թվին, որոնք բառակազմական մեծ հնարավորություններ ունեն։ Բառաբարդման գրեթե անսպառ միջոցները՝ բառակազմական կաղապարների ու բաղադրական հիմքերի բազմազանությամբ, ածանցների հարստությունն ու ածանցական բառակազմությունների գրեթե անսահմանափակ հնարավորությունները թույլ են տալիս ազատորեն կազմել նոր բառեր ու դրանցով հարստացնել մեր լեզվի բառապաշարը¹։ Նորաբանությունների էական առանձնահատկությունը այն է, որ նրանք անմիջականորեն կապված են նոր հասկացությունների հետ։ Լեզվի դերը տվյալ դեպքում այդ կարգի հասկացությունների համար պարտադիր կերպով համապատասխան նշան ստեղծելն է։ Նոր բառերը կազմվում են լեզվի միջոցներով, բառակազմական գործող կաղապարներով²։ Փայերենի բառակազմական միջոցներով կազմվող նորաբանությունները վերաբերում են կյանքի բոլոր բնագավառներին և ընդգրկում են հատկապես կենցաղի, հասարակական-քաղաքական կյանքի, գիտության և տեխնիկայի, մշակույթի և արվեստի բոլոր բնագավառներն ու ճյուղերը։ Նոր բառերը լեզվի տվյալ փուլում հանդես են գալիս իբրև նորաբանություններ, ապա, ընդարձակելով իրենց կիրառության սահմանները, անցնում են բառապաշարի ակտիվ շերտին և դառնում համագործածական բառեր։

Նորաբանությունների մեջ որոշակի թիվ են կազմում բայերը, որոնց մեջ կան նաև կրկնասեռ բայեր³։ Մեր լեզվում վաղուց նոր

¹ *Էդ. Աղայան*, Բայակազմությունը ժամանակակից հայերենում // *Տեղեկագիր*՝ հասարակական գիտությունների, 1965, էջ 154։

² Նորաբանությունը պատմական հասկացություն է։ Այն, ինչ լեզվի տվյալ փուլում նորաբանություն է համարվում, պատմական այլ շրջանում որպես այդպիսին այլևս չի գիտակցվում և չի ընդունվում։ Այս տեսակետից հատկանշական է, որ որոշ նորաբանություններ լեզվի զարգացման ընթացքում հնանում են և լեզվից դուրս են մնում (տե՛ս *Ա. Մուքիսյան*, Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1999, էջ 162)։

³ Կրկնասեռ է բառարանային միավոր հանդիսացող այն բայական բառույթը, որի հասկացության ծավալում համատեղվում է տարբեր սեռերի (ներգործական և չեզոք, ներգործական և կրավորական, կրավորական և չեզոք և այլն) գաղափար՝ առանց բառական-քերականական լրացուցիչ փոփոխությունների։ Ի տարբերություն կրկնասեռության մյուս տեսակների՝ նր/չր կրկնասեռությունը հատուկ է հայերենի պատմա-

արմատներ, այդ թվում նաև բայական արմատներ չեն առաջանում, սակայն հաճախ զանազան հասկացություններ բայական խոսքի-մասային նշանակության յուրահատկությամբ արտահայտելու կարիք է զգացվում: Այս պահանջով էլ լեզուն օգտվում է խոսքի մասային այլ արժեք ունեցող բառերից և հատուկ մասնիկավորումով նոր բայեր է կազմում⁴:

Հասարակական նոր հարաբերությունների, նոր գործառույթների իրականացման հասկացություններ են արտահայտում, օրինակ, հետևյալ նորակազմ կրկնասեռ բայերը՝ *անդամակցել-նր, չր- 1. անդամակցից դարձնել, 2. անդամակցից դառնալ* (ԱՀԲԲ, Ա, 51, ԺՀԼԲԲ, Ա, 84), *դատավարել-նր-1. վարել դատը, դատական գործընթացը, չր- 2. դատի մեջ մտնել* (ԱՀԲԲ, Ա, 280, ԺՀԼԲԲ, Ա, 479), *զանգահարել- նր- 1. զանգ հնչեցնել, հեռախոսով խոսել, չր- 2. Ջանգի, զանգահարություն ձայն հանել* (ԱՀԲԲ, Ա, 361, ԺՀԼԲԲ, Բ, 6), *սամունքել-նր, չր-գեղարվեստորեն արտասանել կամ ընթերցել* (ԱՀԲԲ, Ա, 111, ԺՀԼԲԲ, Ա, 186) և այլն:

Նոր բայեր կազմելու համար լեզուն իբրև բառակազմական ատաղձ օգտագործում է անուն խոսքի մասերը և բայական մասնիկավորումով կազմում բայական բառույթներ: Կառուցվածքային-բառակազմական տեսակետից նորակազմ կրկնասեռ բայերի սերող հիմքերի էական առանձնահատկությունը այն է, որ դրանք գերազանցապես բաղադրյալ բառեր են՝ կազմված բարդման և ածանցման եղանակներով, բառակազմության բաղադրիչ տարրերով՝ արմատներով, հոդակապով, ածանցներով: Պարզ սկզբնահիմքեր ունեցող կրկնասեռ բայերը, ի տարբերություն գրաբարի և միջին հայերենի կրկնասեռ բայերի, շատ փոքր թիվ են կազմում⁵:

կան զարգացման բոլոր փուլերին՝ որպես սեռի քերականական կարգի առանձնահատկություններից մեկը: Արդի հայերենի կրկնասեռ բայերը ներկայանում են երեք շերտով՝ *գրաբարյան, միջինհայերենյան* և *արդիհայերենյան*: Բուն արդիհայերենյան կրկնասեռ բայերը բաժանվում են երկու խմբի. առաջին խմբում *սեռային տեղաշարժերով պայմանավորված կրկնասեռ բայերն* են, որոնք արդի հայերենում կրել են հասկացության ծավալի տարատեսակ փոփոխություններ. բառիմաստի փոփոխությունը հանգեցրել է քերականական հատկանիշների փոփոխության: Երկրորդ խմբում *նորակազմ կրկնասեռ բայերն* են, որոնք կազմվել են՝ ա) գրաբարից ժառանգված պարզ կամ բաղադրյալ հիմքերով, բ) արդիհայերենյան նորակազմ հիմույթներով, գ) փոխառյալ բառերով:

⁴ Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, Ե., 1962, էջ 70:

⁵ Տե՛ս Հ. Զաքյան, Հին հայերենի կրկնասեռ բայերը, Գյումրի. 2015: Նույնի՝ Միջին հայերենի կրկնասեռ բայերը, Գյումրի, 2016:

Պարզ սերող հիմքերով կրկնասեռ բայական նորաբանություններ. Կրկնասեռ բայերի պարզ սերող հիմքերը գրաբարից ժառանգված *արմատական բառեր* են կամ *նորագույն փոխառություններ*⁶:

Գրաբարից ժառանգված *ձյուն, ամպրոպ, գարուն, արեգակ, արև, ծիածան, կոհակ, ցնցուղ* և անվանական այլ բառայիններով արդի հայերենում բայական մասնիկավորումով բաղադրվել են կրկնասեռ բայեր՝ *ձյունել, ամպրոպել, արնել* և այլն⁷:

Խնդրո առարկա սերող հիմքերը իրենց կենսունակությամբ, ակտիվությամբ և գործառությամբ նույնը չեն: Դրանք կարող են լինել հին հայերենում գործածված բառեր, որոնցից մասնիկավորված այլ կազմություններ գրաբարյան մատենագրության մեջ չկան: Օր.՝ *ամբարտակ, կնճիռ, արմունկ, ցնցուղ* բառերը գրաբարում այլ կազմություններ չեն բաղադրել, իսկ աշխարհաբարում սերող հիմք են դարձել շուրջ 40 նոր բառերի, այդ թվում՝ կրկնասեռ բայերի համար⁸:

Որոշ դեպքերում սերող հիմքերը հին հայերենում ունեն գործածության բարձր հաճախականություն, բաղադրել են բազմաթիվ նոր բառեր, բայց կրկնասեռ բայերի կազմության համար սերող հիմք են դարձել միայն արդի հայերենում: Օրինակ՝ հին հայերենում *արեգակ, գարուն, ձյուն* և *արև* անվանական բառայիններով

⁶ Նկատենք, որ սերող հիմք դարձած նորագույն փոխառությունները փոքր թիվ են կազմում (նման բառայիններ աշխարհաբարը չի ժառանգել նախորդ շրջաններից): Դրանք հիմնականում ռուսերենից անցած միջնորդական փոխառություններ են, այսպես կոչված միջազգային բառեր, որոնք արդի հայերենում դարձել են նորանոր բաղադրությունների, ինչպես նաև կրկնասեռ բայերի բաղադրիչներ: Օր.՝ *զիզգազ* բառը արդի հայերենում ունի 1. *բեկյալ գիծ*, 2. *ծուռումուռ ճանապարհ*, 3. *ոլորանների շարք*, 4. *փոխ. դժվարությունների և հաջողությունների շարք*, 5. *փխբ. զիզգազաձև կեռեր ունեցող փոցի*, 6. *ած. զիզգազի նման նշանակություններ*: Այս սերող հիմքով արդի հայերենում կազմվել են *զիզգազաձև, զիզգազանման* ածականները, *զիզգազում* գոյականը և *զիզգազել* կրկնասեռ բայը՝ չբ-1. *կեռումեռ, ոլոր-մոլոր անցնել, նբ-2. Ձիզգազաձև փոցիսով փոցիսել, զիզգազներ առաջացնել* նշանակություններով:

⁷ Համապատասխան բնագրային օրինակների աղբյուրը *Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանն* է (Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Եր., 1972)՝ հետալսու՝ ԺՀԼԲԲ. *Ձյունել*-նբ, չբ- Դուրսն սկսել էր *ձյունել*: Ակասիաներն եզերքին *կը ձյունեին* ծաղիկներ (ԺՀԼԲԲ, Գ, 423): *Ամպրոպել*-նբ, չբ-Նրանց գլխին *ամպրոպեց* հրետանային հարված: -Ճիշտ է ասում նա, վախից եք ասում, քաշվում եք ինձնից,- *ամպրոպեց* տերը իր դստիկոնից (ԺՀԼԲԲ, Ա, 58):

⁸ *Ամբարտակ* (ՆՀԲ, Ա, 55, ԳԲ, Ա, 39), *ամբարտակել-նբ-1. ամբարտակով ամրացնել, չբ-2. բարձրանալ, վեր խոյանալ*, (ԱՀԲԲ, Ա, 31, ԺՀԼԲԲ, Ա, 51), *կնճիռն* (ՆՀԲ, Ա, 1005, ԳԲ, Ա, 662), *կնճռել -նբ-1. երեսին կնճիռներ գոյացնել, 2. փխբ. դժգոհություն ցույց տալ, 3. չբ. փխբ. գործը բարդանալ* (ԱՀԲԲ, Ա, 743, ԺՀԼԲԲ, Գ, 156), *ցնցուղ* (ՆՀԲ, Բ, 915, ԳԲ, Բ, 583), *ցնցուղել-նբ- 1. ցնցուղով ջուր ածել, սփռել, չբ- 2. անձրև մաղել* (ԱՀԲԲ, Բ, 1479, ԺՀԼԲԲ, Դ, 561) և այլն:

կազմվել են 50-ից ավելի բառեր, բայց *արեգակել, գարունել* և *արնել* կրկնասեռ բայերը կազմվել են միայն արդի հայերենում⁹:

Նկատենք, որ անվանական բառույթներն արդի հայերենում սովորաբար պահպանել են միայն գրաբարյան ձևը¹⁰ և բնիմաստը¹¹: Նորակազմության հասկացության ծավալն ընդարձակվել է՝ ի հաշիվ իմաստային նորաբանությունների և փոխաբերական գործածությունների: Ասվածից կարելի է ենթադրել, որ կրկնասեռ բայերի սկզբնահիմքերի գրաբարյան ժառանգություն լինելու հանգամանքը պետք է ընդունել պայմանականորեն, քանի որ սերող հիմքերի դերը ստ էության կատարում են արդի հայերենյան տարբերակները՝ իրենց իմաստային ծավալներով: Օրինակ՝ *գարուն* բառը գրաբարում ունի *տարվա չորս եղանակներից մեկը* իմաստը, իսկ արդի հայերենում՝ նաև *2. փիսք. բարեխառն եղանակ, 3. բնստ. Պատանեկություն, երիտասարդություն, 4. ժղ. Տարի, 5. բնստ. պայծառ, երջանիկ կյանք, 6. փիսք. ած. գարնան պես զվարթ, երջանիկ նշանակությունները*: Ակնհայտ է արդի հայերենյան տարբերակի և *գարունել* (*չբ-գարուն դառնալ, բացվել, նբ-կյանքը երջանիկ դարձնել*) նորակազմ կրկնասեռ բայի իմաստային ընդհանրությունը¹²:

Այսպիսով, շուրջ երկու տասնյակ կրկնասեռ բայեր արդի հայերենում կազմվել են գրաբարից ժառանգված պարզ սկզբնահիմքերով, որոնք, որպես անվանական բառույթներ, անկախ գործածություն ունեն թե՛ հին հայերենում, թե՛ արդի հայերենում:

Բաղադրյալ սերող հիմքերով կրկնասեռ բայական նորաբանություններ. հանդիպում են. *ա) Համատիպ բաղադրիչներ ունեցող սերող հիմքերով կրկնասեռ բայական նորաբանություններ.* Բայա-

⁹ *Արեգակ* բառով արդի հայերենում կազմվել են շուրջ 20, իսկ *արև* և *գարուն* բառերով՝ 50-ական բառեր, այդ թվում՝ կրկնասեռ բայեր՝ *արեգակել, արնել, գարունել*: ՆՀԲ-ն հիշատակում է *գիշեր* հիմնով 35 բառ, այդ թվում՝ *գիշերանալ* և *գիշերացուցանել* բայերը, բայց *գիշերել* (*չբ-1. գիշերը մնալ, նբ-2. գիշեր դարձնել, գիշերի վերածել*) կրկնասեռ բայը արդի հայերենյան նորակազմություն է՝ ի թիվս *գիշեր* սկզբնահիմքով 116 այլ բառերի և այլն:

¹⁰ Խոսքը, իհարկե, ուղղագրական փոփոխությունների մասին չէ, օրինակ՝ *ձիւն-ձյուն* և այլն:

¹¹ Խնդրո առարկա անվանական բառույթները տարժամանակյա կտրվածքում հազվադեպ են պահպանել հասկացության նույն ծավալը, օրինակ՝ *ամպրոպ* և *գանգուր* բառերը, որոնք թե՛ գրաբարում, թե՛ արդի հայերենում ունեն իմաստային նույն շրջանակը՝ *ամպրոպ-1. կայծակ և որոտ 2. փոթորիկ 3. փիսք. բուռն հուզում, 4. փիսք. վերահաս աղետ, փորձանք*, գանգուր-*ած.-ոլորուն, խուճուճ*: Գրաբարում այս երկու բառույթներով կազմվել են ընդամենը 6, իսկ արդի հայերենում՝ ավելի քան 50 բաղադրություններ, այդ թվում նաև, կրկնասեռ բայեր՝ *ամպրոպել, գանգրել*:

¹² *Գարունել* (ՆՀԲ, Ա, 532, ԳԲ, Ա, 310, Ա, 223, ԺՀԼԲԲ, Ա, 376):

կազմության համար տեսականորեն և պատմականորեն հնարավոր կազմությունները (արմատական բառեր, բայական բառակազմությանը չմասնակցած արմատներ, բաղադրյալ բառեր) ժամանակակից հայերենում գործող ընդհանուր օրինաչափություն դիտել չի կարելի¹³: Այժմ արմատներ չեն ստեղծվում, ուստի և արմատներից պարզ բայեր էլ չեն կազմվում: Կրկնասեռ բայեր սերած պարզ սկզբնահիմքերը, ինչպես նշեցինք, մեր լեզուն ժառանգել է հնից կամ կազմել է նորագույն փոխառություններից: Նույնը չի կարելի ասել բաղադրյալ սկզբնահիմքերի մասին. դրանք կարող են ժառանգված լինել լեզվի զարգացման նախորդ շրջաններից, կարող են լինել նաև արդի հայերենյան նորակազմություններ:

Գրաբարից ժառանգված բաղադրյալ սերող հիմքերից մի քանիսը արդի հայերենին են անցել իմաստային նույն ծավալով: Անվանական բաղադրության բայացումը իրականացել է խոսքիմասային նշանակության անցումով և համապատասխան մասնիկավորումով¹⁴: Օր.՝ *սրավար* ածականը ինչպես գրաբարում, այնպես էլ արդի հայերենում ունի նույն՝ *սրընթաց, արշավասույր* նշանակությունները, որոնք էլ անցել են *սրավարել* կրկնասեռ բային՝ *նբ, չբ-1. արագորեն վարել, քշել, 2. սրընթաց արշավել, ընթանալ*¹⁵: *Խելլամուտ* ածականը գրաբարում ունի *ուշիմ, խելացի, բանիմաց*, արդի հայերենում՝ *իրերի դրությունը լավ հասկացող, թափանցամիտ* նշանակությունները, իսկ *խելլամտել* նորակազմ կրկնասեռ բայը՝ *նբ, չբ- 1. հասկանալ, ըմբռնել, 2. խելլամուտ լինել, դառնալ* բառիմաստները և այլն: Ինչպես տեսնում ենք, կրկնասեռ բայերը անմիջականորեն կապված են իրենց հիմքում ընկած ձևային բառիմաստների հետ, և այստեղից էլ պարզ է դառնում նրանց մասնիկավորումը համապատասխան իմաստներով¹⁶:

Միշտ չէ, որ նորակազմ կրկնասեռ բայերը պահպանել են սերող հիմքերի հասկացության ծավալները: Նրանք արդի հայերենում սովորաբար ունեն նաև լրացական իմաստներ: Օր.՝ *թմբկահար* բառն ունի *թմբուկ խփող, իսկ թմբկահարել* կրկնասեռ բայը՝ *1. թմբուկ խփել, 2. փխբ. լուրը տարածել, 3. փխբ. գովաբանել,*

¹³ Տե՛ս *Էդ. Աղայան*, նշվ. հոդված, էջ 23:

¹⁴ Խոսքը երկհիմք (հոդակապով) բարդություն+ել կաղապարի և անուն խոսքի մաս-բայ խոսքիմասային փոխակերպման մասին է:

¹⁵ *Սրավարել* (ՆՀԲ, Բ, 757, ԳԲ, Բ, 483, ԱՀԲԲ, Բ, 1338, ԺՀԼԲԲ, Դ, 340):

¹⁶ *Խելլամտել* (ՆՀԲ, Ա, 937, ԳԲ, Ա, 565, ԱՀԲԲ, Ա, 573, ԺՀԼԲԲ, Բ, 505):

փառաբանել, 4. փխբ. մատներով մի բանի պարբերականորեն խփել, 5. փխբ. առհասարակ հարվածներ հասցնել, խփել, դռփել նշանակությունները¹⁷: *Խնկահոտ* բառն ունի *խնկի բույր*, *խնկի բույր արձակող* իմաստները, իսկ *խնկահոտել* կրկնասեռ բայը՝ ինչպես *խունկի բույր արձակել*, այնպես էլ *խունկի բույրով տոգորել*, *համակել* նշանակությունները և այլն¹⁸:

Այսպիսով, արդի հայերենյան նորակազմ կրկնասեռ բայերից շատերը կազմվել են հին հայերենից ժառանգված բաղադրյալ սկզբնահիմքերով: Այդ սկզբնահիմքերը՝ որպես անվանական բառույթներ, անկախ գործածություն ունեն ինչպես գրաբարում, այնպես էլ արդի հայերենում:

Խնդրո առարկա բայերի մյուս խմբում արդի հայերենյան նորակազմություններ են ոչ միայն կրկնասեռ բայերը, այլ նաև վերջիններիս սերող հիմքերը՝ *քնքշաբան քնքշաբանել*, *սիրաբան-սիրաբանել*, *ցողաշաղ-ցողաշաղել*, *թևահար-թևահարել*, *հորդազեղ-հորդազեղել*, *ալեծուփ-ալեծփել*, *ծեփաթափ-ծեփաթափել*, *թևագրոհ-թևագրոհել*, *շղթայակից-շղթայակցել*, *աղերսակից-աղերսակցել* և այլն: Բայանուն նորակազմությունները ունեն փոխկաղապարային կազմություն՝ «գոյական+բայ», «ածական+բայ», «մակբայ+բայ» ձևաբանական մասնակաղապարներով: Բայական կազմությունների վերջին բայական բաղադրիչը առանձին բայ է, իսկ անվանական բաղադրիչը՝ այդ բայի լրացումը: Ի տարբերություն նախորդ խմբի՝ այս դեպքում կրկնասեռ բայերի և նրանց զուգահեռ անվանական անկախ բառույթների հարաբերակցության որոշումը կապված է որոշակի դժվարությունների հետ¹⁹ (խոսքը այնպիսի բառազույգերի մասին է, որոնց ընդհանուր արմատը կա անկախ անվանական բառույթի ձևով՝ որպես նորաբանություն, և միաժամանակ գործածվում է համապատասխան բայական բաղադրության մեջ): Հաճախ դժվար է որոշել՝ բաղադրյալ հիմույթներից են

¹⁷ Գրական հոբելյարներին չեն գալիս անհաջող գործերն ու սխալները: Մառը *թմբկահարում էր* իր նոր ուսմունքը *թմբկահարելու* (գովաբանել, փառաբանել) (ԺՀԼԲԲ, Բ, 212):

¹⁸ Ոսկենկար բուսականներով *խնկահոտում են* այնտեղ հովիտներ (ԺՀԼԲԲ, Բ, 537):

¹⁹ Ա. Աբրահամյանը խոսքիմասային այլ արժեք ունեցող արմատական բառույթների և նրանց հետ ընդհանուր արմատ ունեցող բայական բառույթների միջև դիտարկում է երեք տիպի հարաբերակցություններ՝ ա) զուգահեռ ճյուղավորումներ հիմնային շրջանի ընդհանուր արմատից, բ) բայական բառույթների մասնիկավորում արմատական բառույթից, գ) արդեն մասնիկավորված բայական բառույթից արմատի առանձնանալը և ոչ բայական բառույթի վերածվելը (տե՛ս Բայը....., էջ 101)

սերվել կրկնասեռ բայերը, թե՛ հիմնություններն են հետագայում բայից անկախ գործածությունն ստացել: Մերոդ և բաղադրված բայերի, ինչպես նաև անվանական բառությունների հասկացության ծավալների համեմատական քննությունը վկայում է, որ խոսքիմասային փոխակերպումը հիմնականում ընթացել է բայահիմք-անուն խոսքի մաս ուղղությամբ²⁰: Օր.՝ *քնքշաբանել, ծաղրաբանել և կանխաբանել* նորակազմ կրկնասեռ բայերը բաղադրվել են *բանել* բայով, որը հին հայերենում կրկնասեռ բայ է և ունի *ասել, խոսել* նշանակությունները: Դժվար չէ նկատել, որ հիշյալ իմաստները անցել են նաև բարդ հիմնությով նորակազմ բայերին՝ մասնավորեցնելով *ասել, խոսել* իմաստները և պայմանավորելով նաև վերջիններիս կրկնասեռությունը²¹.

Մերոդ և բաղադրված բայերի կրկնասեռությունը արդի հայերենում հիմնականում պայմանավորում են նր և չբ տարբեր նշանակություններ, ինչպես, օրինակ՝ *շաղել* և *ցողաշաղել* բայերի դեպքում. *շաղել-նր- ցողել, 2. թրջել, 3. չբ-մանր անձրև տեղալ, ցողաշաղել- չբ- 1. ցող իջնել, դնել, 2. նր-ցողով շաղել* (ԱՀԲԲ, Բ, 1479, ԺՀԼԲԲ, Դ, 562): Ակնհայտ է, որ բաղադրյալ կազմություն ունեցող բայը ժառանգել է պարզ բայի միայն ներգործական սեռի նշանակությունը, իսկ չեզոք սեռի իմաստը ձևավորվել է նորակազմ բայի հասկացության շրջանակներում:

Կրկնասեռ նորակազմության հասկացության ծավալը որոշ դեպքերում սկզբնատիպ բայի իմաստային շրջանակից շատ ավելի նեղ է, օր.՝ *գրռռել* կրկնասեռ բայն ունի *նր, չբ-1. վճռական հարձակում ձեռնարկել, 2. խուժել, 3. փխր. համառ ջանքեր գործադրել, 4.*

²⁰ Բայական բառություններից հիմնությունների անջատվելու ու անկախ բառության վերածվելու համար բայական բառությոնը պետք է ներկայանա առարկայացված բնությոնով՝ միաժամանակ ձեռք բերելով քերականական համապատասխան նշանակություն (խոսքիմասային արժեքի անցում): Բայահիմք-գոյական հարաբերակցության որոշումը դժվարանում է նրանով, որ խոսքիմասային անցումը կատարվում է միայն արմատի իմաստային առումով, առանց մասնիկավորման:

²¹ *Քնքշաբանել-նր, չբ-1. քնքուշ խոսքեր ասել, 2. քնքուշ վերաբերմունք ցույց տալ, ծաղրաբանել-նր, չբ-1. մեկին հեզնանքով վերաբերվել, 2. զվարճախոսել, 3. ծաղրի առարկա դարձնել, կանխաբանել-նր, չբ 1. սկզբից ասել, կանխագուշակել*: Լեզվում անկախ գործածություն ունեն *քնքշաբան (ած.-1. Քնքուշ խոսքեր ասող, 2. Քնքշաբանություն պարունակող), կանխաբան-(ած. Նախօրոք ասող, գուշակող, կանխագուշակ), ծաղրաբան-(ած./գոյ Կատակախոս, զվարճաբան)* սկզբնահիմքերը: Ելնելով այն հանգամանքից, որ նույնը չենք կարող ասել *հանկարծաբանել և ցնորաբանել* կրկնասեռ բայերի անվանական սկզբնահիմքերի մասին, ենթադրում ենք, որ խոսքիմասային փոխանցումը կատարվել է բայահիմք-անուն խոսքի մաս ուղղությամբ: Մի դեպքում լեզուն կարիք է ունեցել և ստեղծել է համապատասխան անվանական բառություններ, մյուս դեպքում՝ ոչ:

փխբ. *հարցերով նեղել* իմաստները, նորակազմ *թնագրոհել բայը*՝ նբ, չբ-թնագրոհ կատարել նշանակությունը (ԱՀԲԲ, Ա, 432, ԺՀԼԲԲ, Բ, 179): *Հարել* ներգործական սեռի բայը ունի 1. *հարվածել, խփել*, 2. *միապաղաղ զանգված դարձնել*, 3. *քսվելով մարմինը տրորել*, 4. *մերսել*, 5. *հալեցնել*, 6. *սաստիկ ծեծել*, 7. *մաղել, հնձել*, 8. *Հարվածելով խայթել* նշանակությունները: *Թնահարել* կրկնասեռ նորակազմությունը պահպանել է սերող բայի *հարվածել* բնիմաստը՝ միևնույն ժամանակ ձեռք բերելով չեզոք սեռի նոր նշանակություններ. չբ-1. *թները թափահարել*, 2. *թներով օդին հարվածել*, 3. *փոխ. ճախրել, սավառնել*, 4. *նբ. ճակատային գծի երկայնքով հակառակորդի թները կրակի տակ առնել*, 5. *փխբ. ծեծել, հարվածել* (ԱՀԲԲ, Ա, 433, ԺՀԼԲԲ, Բ, 181) և այլն²²:

բ) *Առմիջուկային բաղադրիչներով սերող հիմքով կրկնասեռ բայական նորաբանություններ*. Արդի հայերենի նորակազմ կրկնասեռ բայերի մեջ որոշակի թիվ են կազմում առմիջուկային բաղադրիչներ (բառակազմական ածանցներ) ունեցող սկզբնահիմքերով կրկնասեռ բայերը²³: Այդ սկզբնահիմքերից շատերը՝ որպես անկախ անվանական բառույթներ, արդի հայերենին անցել են գրաբարից, թեև հազվադեպ են պահպանել հինհայերենյան իմաստային շրջանակը²⁴: Անվանական նույն բառույթը գրաբարում և արդի հայերենում սովորաբար ունի հասկացության ծավալի որոշակի, եթե ոչ ակնհայտ տարբերություններ: Նման դեպքերում նորակազմ կրկնասեռ բայի համար սերող հիմք է դառնում բաղադրության արդիհայերենյան տարբերակը՝ իր իմաստային շրջանակով, օր.՝ *դաշնակ* բառը գրաբարում ունի 1. *եղանակ*, 2. *օրինակ*, 3. *կերպ*, 4. *Միջոց, հնարք*, իսկ արդի հայերենում՝ 1. *եղանակ*, *երգ*, 2. *դաշնամուր*, 3. *(բնստ.) ներդաշնակություն* իմաստները: Հենց վերջիններս են

²² Ենթադրում ենք, որ *ցողաշաղել, թնագրոհել, ծեփաթափել, թնահարել* բայական բառույթներից *ցողաշաղ, թնագրոհ, թնահար* սկզբնահիմքերը ևս հետագայում են առանձնացել՝ վերածվելով անկախ գործածություն ունեցող անվանական բառույթների՝ *ցողաշաղ-ած.1. ցողով շաղված, թաթախված*, 2. *ցող շաղող, ծեփաթափ-ծեփը թափված, թնագրոհ- գոյ. (ռազմ.) թնային գրոհ, հարձակում, թնահար-ած. թշնամու թներին հարվածող (ջոկատ, զորամաս)* և այլն:

²³ Ըստ ածանցման՝ ժամանակակից հայերենի բայերի արտահայտած քերականական յուրահատուկ իմաստների բնութագրման մեջ ոչ բայական ածանցները արժեք չունեն: Դրանց անդրադառնում ենք ուղղակի սերող հիմքերի կազմությունները ներկայացնելու առումով:

²⁴ Օր/՝ *գերակա* բառը թե՛ գրաբարում, թե՛ արդի հայերենում ունի նույն նշանակությունները՝ *գոյ. 1.ամենից բարձր կանգնած, գտնվող, 2. գերադաս, գերազանց*, որոնք էլ անցել են *գերակայել* կրկնասեռ բային՝ *նբ, չբ- բարձր դիրք գրավել, գերիշխել*:

անցել են *դաշնակել* նորակազմ կրկնասեռ բային՝ նբ, չբ-1. *ձայները իրար հարմարեցնել*, 2. *փոխ. երգել, նվագել*, 3. *փխբ. հնչեցնել*, 4. չբ-ներդաշնակել:

Հուշարար ածականը գրաբարում ունի 1. *հիշեցնող*, 2. *Խորհրդատու*, 3. *զգուշացնող*, իսկ արդի հայերենում՝ 1. *թատրոնի աշխատակից, որ հուշում է դերասանի խոսքերը*, 2. *աշակերտ, ուսանող, որ դասը չիմացողին հուշում է տրված հարցի պատասխանը* նշանակությունները, որոնք էլ պայմանավորում են *հուշարարել* արդի հայերենյան կրկնասեռ բայի հասկացության ծավալը. նբ-հուշել, իբրև հուշարար թելադրել, չբ-հուշարարություն անել և այլն²⁵:

Արդի հայերենի կրկնասեռ բայական նորաբանությունների մեջ որոշակի թիվ են կազմում -*ոտ* բառակազմական ածանցով կրկնասեռ բայերը՝ *թունոտել, կնճռոտել, ձյունոտել* և այլն²⁶:

զ) *Բայերից բաղադրված կրկնասեռ նորաբանություններ*. Արդի հայերենում կրկնասեռ բայեր բաղադրող հիմքերը կարող են լինել նաև բայեր, օրինակ՝ *գործել-պատժագործել*: Նորակազմ բայերն ունեն N+ բայ կառուցվածքային կաղապարը (N=բայից տարբեր խոսքի մաս²⁷), ընդ որում՝ նախատիպ բայերը կարող են լինել ինչպես միասեռ, այնպես էլ կրկնասեռ: Միասեռ և նորակազմ կրկնասեռ բայերի զուգադրական քննությունը վկայում է, որ վերջիններս ունեն կապակցական ընդհանրություններ: Կրկնասեռ բայերը սովորաբար պահպանում են միասեռ բայերի սեռային հատկանիշը,

²⁵ Որոշ դեպքերում նորաբանություններ են ոչ միայն բայերը, այլև վերջիններիս սերող հիմքերը, օրինակ՝ *տերևատ* (տերևաթափ, տերևագուրկ), *ալելիետ* (ալիքներ ունեցող), *ներդաշնակ* (համահնչություն ունեցող, քաղցրահնչյուն) արդի հայերենյան նորաբանությունները սերող հիմք են դարձել *տերևատել* (նբ. 1. *տերևատ դարձնել*, 2. *տերևներից զրկել*, 3. չբ. *տերևաթափ դառնալ*), *ալելիետել* (նբ-1. *ալիքավորել*, 2. չբ- *ալեծփել*), և *ներդաշնակել* (նբ- 1. *ներդաշնակ ձայնով երգել*, չբ-2. *ներդաշնակ լինել, սագել*, 3. *հիմնական եղանակին համապատասխան եղանակներ հորինել*) արդի հայերենյան կրկնասեռ բայերի համար:

²⁶ Կարող է թվալ, որ այս բայերը ունեն իրենց ածանցագուրկ ձևերը՝ *ձյունել-ձյունոտել, կնճռել-կնճռոտել*: Այս ձևերի նմանությունը, սակայն, ձևական է. -*Ոտ* ածանցով տարբերակները չունեն բազմապատկական կերպային գաղափար: Նրանք կազմվել են *ձյունոտ* և *կնճռոտ* ածականներից և ոչ բայերից: -*Ոտ* ածանցով ածականներն ունեն որևէ հատկանիշով օժտված լինելու իմաստ, որը փոխանցվել է համապատասխան կրկնասեռ բայերին և վերջիններիս հասկացության ծավալում երկփեղկվել՝ պայմանավորելով կրկնասեռություն, օրինակ՝ *ձյունոտ-վրան ձյուն նստած, ձյունաթաթախ, ձյունոտել-նբ/չբ- 1. ձյունոտ դարձնել, 2. ձյունոտ դառնալ, սերոտ -1.սերով առատ, 2. շատ սեր պարունակող, յուղառատ, սերոտել-1. նբ- վրան սեր քսել, 2. չբ. սեր կապել, 3. վրան սեր քսվել* և այլն:

²⁷ Տե՛ս Լ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 53:

բայց միևնույն ժամանակ կարող են ձեռք բերել իմաստային նոր երանգ՝ նոր հատկանիշ: Հենց այս հիմունքով էլ ձևավորվում է կրկնաստեղություն: Նախատիպ բայերի կրկնաստեղ լինելու պարագայում քերականական այս հատկանիշը սովորաբար փոխանցվում է նաև նորակազմությանը: *Գործել* բայը գրաբարում ունի ներգործական սեռի 1. *աշխատանք կատարել*, 2. *մշակել (հողը, այգին)*, 3. *անել, կատարել*, 4. *առաջացնել, ծնել*, 5. *ներգործել, ազդել* նշանակությունները: Արդի հայերենում բայը կրկնաստեղ է՝ հետևյալ իմաստներով՝ 1. *չբ-գործունեությունն ծավալել*, 2. *բանել, ընթացքի մեջ լինել*, 3. *վարվել, գործողության դիմել*, 4. *նբ-հյուսել*, 5. *(հնց.) ազդել*, 6. *աշխատել*, 7. *(հնց.) մշակել (հողը)*, 8. *կազմում է հարադրություններ*: Կրկնաստեղ է նաև *պատժագործել* նորակազմությունը՝ 1. *պատիժը կիրառել*, 2. *չարագործությունը պատժել* իմաստային դիտվածքով²⁸:

Կրկնաստեղ բայերից շատերը արդի հայերենում կազմվել են բայակազմական համարվող *վեր, նախ, ընդ, արտ* (և այլ) նախածանցներով, որոնք ավելանում են սկզբնատիպ բայերին՝ *ծորել, բուրել, զեղել, վիժել, ծայթթել, իշխել* և այլն (այս բայերից շատերը գրաբարում կրկնաստեղ են): Նախածանցավոր և այդ ածանցից գուրկ նախատիպ բայերի խնդրառական համեմատությունը ի հայտ է բերում հետևյալ օրինաչափությունը. բայն առանց այդ ածանցի կարող է առնել այս կամ այն ձևով արտահայտված լրացում, իսկ երբ ավելանում է նախածանցը, այդ հատկությունն ավելի է ընդգծվում: Նախածանցավոր բայի մասնավոր իմաստով է պայմանավորված նաև հասկացության իմաստային ավելի նեղ ծավալը, օրինակ՝ *իշխել*-նբ, չբ-1. *իշխանությունը վարել, կառավարել*, 2. *տիրել*, 3. *բռնություն գործադրել*, 4. *փոխ. թագավորել*, 5. *փոխ. մտքերին տիրապետել*, 6. *փոխ. կլանել*, 7. *փոխ. բնութագրական լինել*, 8. *փոխ. տիրապետող լինել*, 9. *բարձրանալ, գերիշխել*-նբ, չբ-1. *գլխավորել*, 2. *գերակշռել*, 3. *տիրել, իշխել*: *Կշռել*-նբ 1. *ծանրությունը չափել*, 2. *որոշ միավորի չափով քաշել ու տալ գնորդին*, 3. *Հավասարակշռել*, 4. *կշիռ, ծանրություն ունենալ*, 5. *փխբ. կշռադատել*, 6. *որևէ բանի արժեքը գիտակցել*, 7. *փոխ. Համեմատել, գերակշռել*-նբ, չբ-1.

²⁸ Նույն խմբում են նաև հետևյալ բայերը՝ *հայել-մտահայել, շրջահայել, հղանալ-մտահղանալ, մթերել-հացամթերել* և այլն:

գլխավոր դեր ունենալ, 2. մեծամասնություն կազմել, 3. հարկ եղածից ավելին կշռել և այլն:

Ինչպես տեսնում ենք, սերված բայերի բառակազմական ածանցները սովորաբար մասնավորեցնում են սկզբնատիպ բայերի բառական-արմատական իմաստները: Դրանով են պայմանավորված սկզբնատիպ և բաղադրված բայերի խնդրառական ընդհանրությունները: Այդ ածանցները նաև իմաստահավելիչ դեր են կատարում, և հենց այդ իմաստահավելական դերն է, որ առաջացնում է խնդրառական տարբերություններ սերող (սկզբնաձևային) և սերված բայերի միջև, և ձևավորվում է կրկնասեռություն²⁹:

Արդիհայերենյան նորակազմ կրկնասեռ բայերից մի քանիսն ունեն կրկնավոր բայահիմքեր ³⁰, օր.՝ *ծափծափել, սուլսուլել* և այլն: Նախատիպ պարզ բայերի հետ վերջիններս համեմատությունը կարող է բացահայտել ինչպես բառիմաստային, այնպես էլ կերպային տարբերություններ³¹:

²⁹ Այս առումով որոշակիորեն տարբերվում են արտ- նախաձևացով կրկնասեռ բայերը: Սկզբնատիպ բայերի համեմատ (եթե վերջինս կրկնասեռ է) այս կազմությունները խնդրառական էական տարբերություններ հանդես չեն բերում և պահանջում են նույն լրացումները, օրինակ՝ *բուրել-նր, չք-1. հոտ արձակել, 2. հոտ տարածվել, արտաբուրել-նր, չք- 1. բուրել, 2. հոտ արձակել, վիժել-նր-1. պտուղը դուրս մղել, շարտել, չք- 2. հոսել, արտավիժել-նր, չք-1. ներսից ուժով դուրս շարտել, դուրս ժայթքել* և այլն: Եթե նախատիպ բայը միասեռ է, ապա նախաձևացավոր բայի կրկնասեռությունը պայմանավորող նոր նշանակությունը սովորաբար տարբերվում է սոսկ գործողության ուղղվածությամբ, օրինակ՝ *գեղել-նր- լիքը լցնել, սփռել, արտագեղել-նր-1. դուրս մղել, չք-2.դուրս թափվել, ծորել-չք-1.ծոր տալով հոսել, հալումաշ լինել, արտածորել- չք,նր -1. Դուրս ծորել, 2. Դուրս հոսեցնել* և այլն:

³⁰ Կրկնավոր բայերի կազմության առանձնահատկությունները կարևոր են առհասարակ բառակազմության տեսակետից, բայց ժամանակակից հայերենի բայի ձևաբանական կառուցվածքի մեջ որևէ յուրահատկություն չունեն. կրկնությունն այստեղ հանդես է գալիս իբրև բառահիմքի կազմության միջոց, որ հավասարապես կարող է գործադրվել նաև այլ խոսքի մասերի պատկանող բառեր կազմելիս (տե՛ս *Էդ. Աղայան*, նշվ. հոդվ., էջ 23):

³¹ Օր.՝ *ծափել -նր, չք-1. ծափահարել, 2. փխր. ծափահարությամբ ուրախություն արտահայտել, 3. փխր. իրար խփել, բախել, 4. փխր. ծափի ձայն հանել, ծափծափել-նր, չք- տնականորեն, շարունակաբար կամ շատերը ծափ տալ, սուլել-1.չք-բերանով սուր ձայն հանել, շվացնել, 2. որևէ կարգի հարմարանքով սուր ձայն հանել, 3. նր. որևէ կարգի հարմարանք ենչեցնել, 4. շվացնելով որևէ բան նվագել, 5. փխր. հոսանքով, ընթացքով սուլոցի նման ձայն արձակել, 6. փխր. բերանով սուլոց արձակել, 7. փխր. սուլոցով որևէ բան ազդարարել, սուլսուլել-տնականորեն կամ շատերը սուլել*: Ինչպես տեսնում ենք, կրկնավոր սկզբնահիմքով բայերն արտահայտում են գործողության տնականություն: *Օեքծեքել* և *ձայնձայնել* նորակազմությունները նախատիպ բայերի համեմատ ունեն միայն բառիմաստային տարբերություններ՝ *ծեքել-նր-խեղաթյուրել, աղճատել, ծոմռել, ծեքծեքել 1. նր-աղավաղել, աղճատել, ծոմռել, 2. չք-սեթևեթել, ձայնել- նր- ձայն տալ, կանչել, ձայնձայնել- նր, չք-1. հռչակել, լուրը տարածել, 2. գոռգոռալ, գոչել, 3. իրար կանչել, միմյանց ձայն տալ* և այլն:

Այսպիսով, կատարված տարժամանակյա քննությունը վկայում է, որ արդի հայերենն ունի շուրջ 80 կրկնասեռ բայական նորաբանություններ, որոնց սերող հիմքերը մի դեպքում գրաբարում և արդի հայերենում անկախ գործածություն ունեցող անվանական բառույթներ են, մյուս դեպքում՝ արդիհայերենյան նորաբանություններ:

Г. С. Забян. Глаголы- неологизмы двойственного залога в современноармянском языке. В современном армянском языке существует около 80-ти глаголов-неологизмов двойственного залога, исходные основы которых в одном случае в древнеармянском и современном языке выступают в качестве независимых именных лексем, в другом случае – в качестве неологизмов современноармянского языка. С точки зрения словообразовательной структуры значительной особенностью исходных основ глаголов-неологизмов двойственного залога является тот факт, что все они составные лексемы, образованные путем сложения.

H. S. Zakyan. Reciprocal verbs-neologisms in modern language. There are approximately 80 reciprocal verbs-neologisms in modern Armenian. In one case, their original basis appear as independent nominal lexemes, and in other case – as neologisms in modern Armenian. From the point of view of the word formation structure, a significant feature of original forms of reciprocal verbs-neologisms is that they are all composite lexemes formed through addition and affixation.

ՎԱՆԻ ԲԱՐԲԱՌԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԲԱՌԱՐԱՆԸ

«Վասպուրական» հայրենակցական միության ջանքերով ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությունը լույս է ընծայել բարբառագիտական ևս մեկ ուշագրավ ուսումնասիրություն՝ Հ. Թուրշյանի «Բառարան Վանի բարբառի» գիրքը¹: Այն, ինչպես նշվում է նաև ամփոփագրում, այդ բարբառի բառապաշարն ըստ հնարավորին ամբողջությամբ ընդգրկող առաջին տպագիր բառարանն է, պարունակում է շուրջ 6800 բառահոդված: Ամեն մի բարբառի բառապաշարի առումով դա մի զգալի քանակ է, որ գրեթե ամբողջական պատկերացում է տալիս բարբառի վերաբերյալ:

Հայերենի բարբառների գիտական ուսումնասիրության (մենագրություններ, հոդվածներ, գիտական զեկուցումներ և այլն), քարտեզագրման աշխատանքների նախապատրաստման ներկայիս փուլում նման տիպի՝ մեկ առանձին բարբառի բառապաշարի ամբողջացումը, ինչ խոսք, կարևոր է ամենից առաջ բարբառի հնչյունական, բառապաշարային, ինչպես նաև իմաստաբանական հատկանիշների վերհանման, ճշգրտման և գիտական հավաստիությամբ ներկայացման տեսանկյունից:

Վանի բարբառը, լինելով հայերենի բարբառների գանձարանի ամենահետաքրքիր, ամենահարուստ, ամենանվիրական և, ցավոք, արդեն կորուսյալ շերտերից մեկը, դեռևս ունի առավել մանրակրկիտ ուսումնասիրման կարիք: Ուստի միանգամայն ողջունելի է բարբառներին նվիրված յուրաքանչյուր հրատարակվող գիտական ուսումնասիրություն, մասնավորապես՝ տոհմիկ վանեցի, պատմաբան Հ. Թուրշյանի հիշյալ աշխատանքը:

Բարբառագիտական աշխատանքները, ընդհանուր առմամբ, լույս են սփռում հայագիտության, մասնավորապես հայոց պատմության, ազգագրության, բանահյուսության, ձեռագրագիտության և հարակից այլ բնագավառների խնդիրների լուսաբանման վրա,

¹ Հարություն Թուրշյան, Բառարան Վանի բարբառի, աշխատասիրությամբ Հայկանուշ Մեսրոպյանի, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2018, 252 էջ:

իսկ հայերենագիտության համար խիստ կարևոր աղբյուր են նաև քարտեզների բառապաշարն ընդգրկող նման բառարանները: Այս առումով գիտական մեծ արժեք ունի Հ. Թուրշյանի հիշյալ աշխատանքը, որտեղ ոչ միայն վստահելի աղբյուրից ներկայացված է Վանի քարտեզի ողջ բառամթերքը, այլև գլխաբառերին կից ներկայացված են Վանի և վանեցու առօրյան ներկայացնող օրինակներ, բանահյուսական եզակի նմուշներ:

Գրքի «Երկու խոսք» բաժնում աշխատասիրողն անդրադառնում է բառարանի հրատարակման կարևորությանը, սեղմ շարադրանքով ներկայացնում է Հ. Թուրշյանի կենսագրականը, գիտակրթական, մշակութային գործունեությունը, գիտական ժառանգությունը: Ձեռագիր աշխատանքի հրատարակության պատրաստման ընթացքում, բնականաբար, եղել են որոշակի դժվարություններ, որոնք հիմնականում հաղթահարված են: Բառարանի ձեռագիրը, գրված լինելով տասնամյակներ առաջ, որոշ տեղեր դարձել է դժվարընթեռնելի, մանավանդ բառերի հնչյունական որոշ նշանակումների դեպքում: Աշխատասիրողը այս առումով զգալի գործ է կատարել, որ գնահատելի է:

Բարբառային բառերի ներկայացման հարցում հատուկ նշանակություն ունի բառերի հնչական-արտասանական կողմի լիարժեք ապահովումը: Այս խնդիրը լիովին լուծված է սույն բառարանում. թե՛ ձայնավոր և թե՛ քաղաձայն հնչյունների տառադարձությունը, օգնում է ճիշտ ընկալելու բառի հնչական-արտասանական կողմը (ձայնավորի քմայնացում, ձայնեղ քաղաձայնների խլացում, լսվող չ-ի գրությունը և այլն): Բացի բառի բացատրությունից՝ գործածության օրինակները ևս բերվում են տառադարձված, որը կենդանի խոսքի վերաբերյալ պատկերացում ունենալու հնարավորություն է տալիս: Այս հատկանիշները քարտեզի ներկայացման պարտադիր պայման են, որ իրականացվել է բավականին հաջողված ձևով:

Հրատարակվել է նաև բառարանի հեղինակի «Առաջաբան»-ը, որում քննվում են տեսական և գործնական այնպիսի հարցեր, որոնք անմիջական կապ ունեն բառարանի ստեղծման հետ:

Գիրքը ամենայն բարեխղճությամբ և գիտական պատշաճ մակարդակով տպագրության է պատրաստել քարտեզագետ, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ավագ գիտաշխատող,

Բանասիրական գիտությունների դոկտոր Հայկանուշ Մեսրոպյանը՝
Բառարանը համալրելով Վանի բարբառի վերաբերյալ ձեռագիր այլ
աշխատանքներից քաղված անհրաժեշտ նյութերով, ըստ այդմ՝
աշխատանքին տալով գիտական պատշաճ մակարդակ և կա-
ռուցվածք:

Բառարանն անշուշտ կարող է օգտակար լինել ինչպես մաս-
նագետներին, այնպես էլ Վան-Վասպուրականով և Վանի բարբա-
ռով հետաքրքրվողներին:

Բանասիր. գիտ. թեկնածու Ա. Վարդանյան

«ՆՈՐ ԲԱՌԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ»-Ի ՆՈՐ ՊՐԱԿԸ

Գիրքը հեղինակային համատեղ աշխատանք է, ընդ որում՝ շարունակական հրատարակությամբ. որ լույս է տեսնում առանձին պրակներով շուրջ երեք տարի այն կազմում են ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի բառարանագրության բաժնի աշխատակիցները (բաժնի վարիչ, բ. գ. թ. Ա. Ս. Գալստյան)¹: Պետք է նշել, որ նման բառարանի ստեղծումը խիստ արդիական և կարևոր է ժամանակակից հայերենի ընդհանուր բառապաշարի նորակազմությունների բառարանային ամբողջացման առումով:

Սույն պրակն ընդգրկում է ավելի քան 1500 բառամիավոր, և, ինչպես նշվում է բառարանի ամփոփագրում, «ներկայացված են մամուլում, գեղարվեստական և գիտական գրականության մեջ շրջանառվող բառեր, որոնք գրանցված չեն բացատրական և նորաբանությունների բառարաններում»: Եթե նախորդ պրակների դեպքում առանձնացվող նյութը համեմատվում էր առկա յոթ բառարանների տվյալների հետ, ապա այս պրակում ընդգրկված նյութը ստուգվել է ժամանակակից հայերենի բացատրական և նորաբանությունների տասներեք բառարաններով, և ըստ այդմ տեղ տրվել այն բառերին, որոնք արձանագրված չեն եղել նշված որևէ բառարանում:

Բառարանն իր բնույթով բացատրական է: «Նոր բառեր. Գ պրակ»-ի նոր բառերը և նորակազմությունները բերվում են բառարանագրման ճանաչված սկզբունքով, այն է՝ յուրաքանչյուր բառահոդվածի դեպքում տրվում է գլխաբառը, վերջինիս քերականական նշումը և բնագրային կիրառությունից բխող բացատրությունը, այնուհետև բերվում է բնագրային այն հատվածը, որում գործածված է տվյալ բառը, իսկ ամենավերջում՝ գործածության աղբյուրը (բնագիրը և էջը):

Օգտագործված աղբյուրները բովանդակությամբ միանգամայն բազմազան են՝ գեղարվեստական ինքնուրույն և թարգմանական գրականություն, գիտական և հրապարակախոսական ժողովածուներ և մենագրություններ, ամսագրային հոդվածներ և այլն: Որքան

¹ Ա. Ս. Գալստյան, Ս.Ա. Գալստյան, Գ. Կ. Հովսեփյան, Ա. Գ. Սահակյան, Նոր բառեր, պրակ Գ, Ե., «Ասողիկ» հրատ., 2017, 156 էջ:

էլ տարօրինակ է, աղբյուրների ցանկում հանդիպում են այնպիսիները, որոնք լույս են տեսել առնվազն մի քանի տասնամյակ առաջ, ուստի նրանցում եղած նորակազմությունները պիտի տեղ գտած լինեին նախկինում երևան եկած բառարաններում, այնինչ դրանք նոր-նոր բառարանագրվում են այս պրակում, որը միանգամայն խրախուսելի է և շնորհակալ լինելու արժանի (օրինակ՝ Օ. դը Բալզակ, Երկերի ժողովածու, հհ. 5-7, Ե., 1957-1959, Հ. Մենկևիչ, Խաչակիրներ, Ե., 1957, Կ. Անդրեև, Արկած որոնողները, Ե., 1968, Զ. Խալափյան, Մեռնող հառնող, Ե., 1975 և այլն):

Բառարանն ունի սեղմ առաջաբան («Երկու խոսք»), քերականական և գործառական նշումների, օգտագործված աղբյուրների (գրքեր, ամսագրեր, լրագրեր) համառոտագրված ցանկեր, նշվում են համեմատության եզր բառարանները:

Կարծում ենք, որ բառահոդվածների նման կառուցվածքը գնահատելի է, բառարանային մշակումը՝ հստակ: Նման մոտեցման արդյունքում ձևավորվել է գիտական պատշաճ մակարդակ ապահովող մի աշխատանք, և կարելի է անվերապահորեն ասել, որ հեղինակները հետևողական են իրենց իսկ ընդունած սկզբունքների հարցում:

Իսկ ինչ վերաբերում է աշխատանքի գործնական նշանակությանն ու կիրառությանը, ապա այն կարող է օգտակար լինել բառագիտությամբ հետաքրքրվող մասնագետներին, ուսուցիչներին, ուսանողներին, ինչպես նաև թարգմանության և լրագրության ոլորտի մասնագետներին:

Բառարանում, մասնավորապես օգտագործված աղբյուրների ցանկում նկատվում են ինչ-ինչ վրիպումներ, որոնք բացառելի են հետազայում:

Ընդհանուր առմամբ կարելի է նշել, որ նման աշխատանքը իր թեմայով նորույթ է, և գիտական տեսակետից՝ որակյալ: Այն մեծապես նպաստում է ժամանակակից հայերենի բառապաշարի ամբողջացմանը և մշակմանը:

Բանասիր. գիտ. թեկնածու Մ. Սարգսյան

ԳՐՔԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ. КНИЖНОЕ ОБОЗРЕНИЕ. BOOK REVIEWS.

«Գիտական հոդվածների ժողովածու», Ե., «Առդիկ», 2017, 420 էջ: ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը լույս է ընծայել սույն ժողովածուն՝ նվիրված անվանի լեզվաբան ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գ. Ա. Ղափանցյանի ծննդյան 130-ամյակին: Մեծ է Գ. Ա. Ղափանցյանի ներդրումը հայագիտության բնագավառում՝ իբրև տեսաբան հետազոտող և գիտության ուսումնակրթական հմուտ կազմակերպիչ: Ժողովածուի մեջ կան հոդվածներ, որոնք ուղղակիորեն առնչվում են Ղափանցյանի լեզվաբանական հայացքներին վերաբերող այս կամ այն խնդրին:

Տպագրված հոդվածներն առանձնանում են իրենց թեմատիկայով՝ նվիրված ամենից առաջ Գ. Ղափանցյանի գիտական գործունեությանը, այլև յուրահատուկ տեսությունը (Տ. Դալայան, Գ. Մկրտչյան), այնուհետև քննության առարկա են ներկայիս հայագիտության տարբեր բնագավառների հարցեր: Եթե բավարարվենք միայն դրանց խմբավորմամբ, հեղինակների թվարկմամբ, ապա կնկատենք, որ հոդվածները վերաբերում են աշխարհաբարի հարցերին (Թ. Ասոյան), հայերենի բարբառներին (Ջ. Բառնասյան, Գ. Գևորգյան, Վ. Կատվայան, Ժ. Միքայելյան), արդի հայերենի կառուցվածքային բաղադրիչներին՝ հնչյունաբանությանը, բառապաշարին, քերականությանը և այլն (Դ. Գյուրջինյան, Հ. Զաքարյան, Ռ. Թոխմախյան, Ն. Հեքեքյան, Կ. Վեմյան, Ա. Քարտաշյան), հայոց լեզվի պատմությանը (Ս. Գրիգորյան, Հ. Թադևոսյան, Վ. Խաչատրյան, Օ. Խաչատրյան, Գ. Մխիթարյան), համակարգչային և թարգմանական լեզվաբանությանը (Ֆ. Հակոբյան, Ն. Սարգսյան, Ա. Քամայան), պատմահամեմատական և գուգադրական քերականությանը (Ա. Մկրյան, Ա. Պետրոսյան, Գ. Սիմոնյան, Ա. Վարդանյան), վերջապես՝ հայերենի ճյուղային տերմինաբանությանը (Հ. Սուքիասյան և Ն. Թոռունյան):

Հարկ չկա շեշտելու, որ անշուշտ կարևոր է գիտության արդի պայմաններում նման թեմաներով ուսումնասիրությունների ձեռնամուխ լինելը, սակայն որոշ դեպքերում (բարեբախտաբար՝ սակավ) հանդիպում են վաղուց ավանդական դարձած թեմաների վերարձարծումներ, այն էլ անհաջող փաստարկումներով, ոչ հավաստի մեկնաբանություններով, նույնիսկ սխալ եզրակացություններով: Դժվար է համաձայնել, օրինակ, Գ. Մկրտչյանի այն վերլուծություններին, որոնք վերաբերում են Գ. Ղափանցյանի ինքնօրինակ տեսությանը, որը մասամբ ժամանակին մերժվել է, իսկ կարևոր մասը առ այսօր մնում է ոչ լիովին

գնահատված, ուստի ընդունալության արժանացած, թեկուզ հիմնականի մեջ: Այնուհետև, խիստ տարակուսելի է Լ. Ավետիսյանի ծավալուն հոդվածի մեջ տեղ գտած մի շարք դրույթների քննարկումը, ընդ որում ներկայացված հին ուղղագրությամբ՝ դրան ոչ այնքան տիրապետելու աստիճանի: Չենք կարող չնկատել, որ հեղինակը բավականին վերամբարձ ձևով, վերլուծության մակերեսայնությամբ անդրադառնում է հայերենի ուղղագրության հիմունքներին՝ առանց ի վիճակի լինելու խորանալու հարցի էության մեջ, վաղուց հայտնի կովաններին որևէ հավելում անելու:

Գիտական տեղեկատվության արդի հնարավորությունների պայմաններում ամեն մի հոդված տպագրվելուց առաջ պիտի անցնի լուրջ գրախոսության ճանապարհ: Ժողովածուն երաշխավորված է խմբագրական խորհրդի կողմից, վերջինս, կարծում ենք, պիտի լինի ըստ էության. գտնում ենք, որ ըստ այդմ ոչ բոլոր աշխատանքները կարող էին հավակնել տպագրության:

Այսուհանդերձ, հարկ ենք համարում նշելու, որ ժողովածուն հիմնականում ներառում է լավագույն հոդվածներ, որոնցում քննության առնվող հարցերը, կարծում ենք, ստանում են իրենց բավարար լուծումը, կարևոր են և արդիական, որոշակի քայլ են հիշյալ բնագավառների հետագա առաջընթացի առումով, և դա այս ժողովածուի լույսընծայման կարևորության երաշխիք է: Ձեռքբերումները գոհացուցիչ են, և ավելորդ ենք համարում դրանց առանձին-առանձին անդրադառնալ: Հետագա ուսումնասիրություններում դրանց դիմելու կամ նկատի ունենալու հանգամանքը լիովին ցույց կտա դրանց կենսունակությունը առհասարակ հայերենի պատմության և կառուցվածքի մեջ:

Գիրքը լույս է ընծայվել «Ասողիկ» հրատարակչության կողմից, բավականին խնամքով, սակայն շատ սեղմ անոտացիայով:

Aram Barlézian, Dictionnaire français- arménien des locutions et expressions, 10000 entrées, Erevan, Éditions «Guitouton» ANS RA, 296 p.: Արամ Բարլեզիզյանը ճանաչված անուն է մեր գիտության մեջ, նա լավագույնս հայտնի է ֆրանսիական բանասիրության ոլորտում՝ իբրև հայ-ֆրանսիական լեզվական կապերի, ավելին՝ նույնպիսի մշակութային արժեքների վերհանման և գնահատության բնագավառում: Նա հմուտ մանկավարժ է, որ տասնամյակներ անընդմեջ ֆրանսերեն լեզու և ֆրանսիական մշակույթ է դասավանդում մեր երկրի ամենից հեղինակավոր, հայ ազգի լավագույն բարեկամ Վ. Բրյուսովի անունը կրող օտար լեզուների ինստիտուտում: Նա հեղինակ է մի շարք աշխատությունների, որոնց ավելանում է վերը նշված վերնագրով բառարանը: Այս աշխատությունը գալիս է լրացնելու հեղինակի «Հայերեն-ֆրանսերեն բառարանը», որ լույս է տեսել

տարիներ առաջ և, կարելի է ասել, նոր ժամանակներում ստեղծված երկլեզվյան լավագույն բառարաններից մեկն է, մասնավորապես լուրջ աշխատանք հայ-ֆրանսիական բառարանագրության մեջ:

Սույն «Dictionnaire français-arménien des locutions et expressions, 10000 entrées» («Դարձվածքների և արտահայտությունների ֆրանսերեն-հայերեն բառարան. 10000 միավոր») գիրքը, ինչպես «Նախաբան»-ում է նշվում, «հիմնականում ունի գործնական բնույթ», սակայն գտնում ենք, որ այն կարևոր է ֆրանսերենի բառապաշարի համապատասխան միավորների իմացության և հայերենի նույն միավորների համարժեքության տեսանկյունից:

Աշխատանքը կատարված է բարեխղճորեն, որ արդյունք է հեղինակի երկար տարիների անընդմեջ աշխատանքի: Բառահոգվածները կառուցված են երկլեզվյան բառարանագրության դասական սկզբունքներով, դրանք ամբողջանում են երկու և ավելի (շուրջ երկու տասնյակ, երբեմն ավելի) դարձվածային միավորներով և դրանց հայերեն համարժեքներով (հմտ. ամենալայն գործածության բառերը՝ բայ, գոյական և այլն, օրինակ՝ ֆրանս. dire «ասել» բերվում է շուրջ 30 միավորով և հայերեն համարժեքներով): Այդպիսով հեղինակը փաստորեն ներկայացնում է ֆրանսերենի բառագանձի այն հատուկ շերտը, որն առավել իմաստավոր է, բառային բազմիմաստությամբ աչքի ընկնող, որով սնվում է ամեն մի լեզվի, տվյալ դեպքում՝ հայերենի և ֆրանսերենի ոճական համակարգը, գործառության շրջանակը: Այն, թարգմանական լինելուց բացի, բացատրական է, որի մասին հատուկ հղում ունի հեղինակը. «Բառարանը, լինելով երկլեզվյան, նաև բացատրական է, քանի որ ֆրանսերեն և հայերեն դարձվածամիավորներն ուղեկցվում են նկարագրական ու հումանիշային բացատրություններով ու ճշգրտումներով»:

Այն հասցեագրված է ամենալայն խավերին՝ կրթության և գիտության բնագավառ, ուստի սպասելի է ավելի մեծ տպաքանակ. սա ընդամենը 300 օրինակ է:

Գիրքը տպագրել է ՀՀ ԳԱ «Գիտություն» հրատարակչությունը, այն աչքի է ընկնում տպագրական բարձր մակարդակով (օրինակելի ձևավորում, տառատեսակի ճիշտ ընտրություն, բառահոգվածների ստույգ բաշխում և առանձնացում, որակյալ թղթի օգտագործում և այլն):

Նվեր Սարգսյան. Հավելական հարաբերության արտահայտությունը հայերենում, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2017, 204: Լույս է տեսել ՀՀ ԳԱԱ Ն. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի արդի հայերենի բաժնի վարիչ, Բ. Գ. Թ.

դոց. Ն. Ժ. Սարգսյանի հիշյալ վերնագրով մենագրությունը, որն ամփոփում է հայերենի շարահյուսագիտության բնագավառում հեղինակի՝ տարիների ընթացքում մշակած տեսության, այն է՝ լեզվի շարահյուսական մակարդակում ինչ դեր ունեն հավելական հարաբերություն արտահայտող կապակցությունները, որոնք են նրանց լեզվական և ոճական առանձնահատկությունները:

Աշխատանքի երեք գլուխներից առաջինը նվիրված է, ինչպես հեղինակն է անվանում, հավելական կառույցների ընդհանուր բնութագրին, երկրորդը՝ դրանց տեսակներին և դասակարգման սկզբունքներին, իսկ վերջինը՝ ոճական արժեքին:

Ն. Սարգսյանը լեզվաբանության մեջ գիտական հակիրճ լեզվով ստեղծագործող գիտնական է:

Իր այս մենագրությունը վերաբերում է արդի հայերենի շարահյուսական մեկ ինքնուրույն միավորի՝ հավելական կառույցների լեզվական և ոճական արտահայտության սեղմ վերլուծությանը. նման մոտեցմամբ լեզվական միավորի ոճական կողմին անդրադառնալը, կարծում ենք, ավելին է և խիստ արժեքավոր, քան որ հանդիպում ենք այս կան այն հեղինակի լեզվին կից ոճի քննությանը, այն էլ վաղուց հնացած, այսպես կոչված, ծեծված կաղապարի (տրաֆարետի) մեջ:

Թեմային առնչվող այս կամ այն խնդրի քննարկումը կատարվում է տեսական լայն ընդգրկմամբ: Հայ և ռուս լեզվաբանության մեջ այդ թեմային մասնակիորեն կամ ուղղակիորեն անդրադարձած աշխատանքների նկատմամբ նա ունի իր հստակ կողմնորոշումը, նաև մոտեցումը, և ըստ այդմ առաջ է քաշում հայերենի հավելական կառույցների վերաբերյալ կոնկրետ հարցեր (օրինակ՝ շաղկապավոր հավելական կառույցների մեջ՝ համադասական, ստորադասական և հավելական շաղկապներով տեսակների հետ կապված), որոնք իրական են և հանգուցային:

Կատարվում է հավելական միավորների ճիշտ դասակարգում, ամենից առաջ՝ ըստ կառուցվածքի (հմմտ. Երգեց: *Վատ և տհաճ ձայնով*. Գեղեցիկ վայր է: *Նաև աղբյուրներ շատ կան* և այլն), ըստ նախադասության հիմնական մասին միանալու միջոցի՝ շաղկապավոր և անշաղկապ, գործածվում են գրեթե բոլոր շաղկապներով կառույցներ (հմմտ. Բայց գլուխը դատարկ է: *Ու գրպանը նույնպես*. Օրենքի ներկայացուցիչները սպասել չեն սիրում: *Իսկ առավել ևս՝ կանայք*. Մուրճի պոչն է երևում միայն, իսկ գլուխը թաղվել է կավահողում: *Ուրեմն մուրճը ահագին ծանր է* և այլն), ըստ շարահյուսական դերի (հմմտ. Հազար վարդեր կրակվեցին շուրջը կողքին, // *Հազար խաշխաշ, ու գարնան օր, ու ծիածան*. Անտառում արջեր կան, *վարազներ էլ, բորենիներ էլ* և այլն), ըստ արտահայտած իմաստի և դրսևորած շարահյուսական հարաբերության, ըստ հաղորդակցական տեսակների և եղանակավորության (հմմտ. Եվ կհարցնեմ ձեր

որպիսությունը, *նաև ինձ բարի հիշողաց*. Դժգոհ չեմ քեզանից: *Թեկուզ և կտրվեցիր ընդունելության քննություններից* և այլն):

Տեսական առումով նկատելի է, որ լեզվի շարահյուսական մակարդակում հավելական կառույցներն ունեն առավելապես ժողովրդախոսակցական ոճին բնորոշ երանգներ՝ հատկանիշներ: Նման կառույցները մեծապես գործածվում են լեզվի բանավոր տարբերակում, որը և գրականում դառնում է հաղորդակցական փաստ: Ոճական առումով նման միավորները խոսքին հաղորդում են աշխուժություն, անմիջականություն, ստեղծում տպավորություն և այլն:

Վ. Գ. Հ.

**«Մաշտոց» հայերենագիտական
էլեկտրոնային հանդես**

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան
լեզվի ինստիտուտը նախաձեռնում
է «Մաշտոց» հայերենագիտական
էլեկտրոնային հանդեսի հրապա-
րակումը:

Հայերենագիտական բազմալե-
զու հանդեսը նպատակ ունի
նպաստելու հայոց լեզվի համա-
կողմանի հետազոտությունների
իրականացմանը, արևելահայերե-
նի և արևմտահայերենի կանո-
նարկմանը, մերձեցմանն ու զար-
գացմանը, նորովի լուսաբանելու
հայ լեզվամշակույթին առնչվող
հիմ-նահարցերը:

Խմբագրական խորհուրդը հան-
դեսի առաջին համարում հրապա-
րակվելիք հոդվածների հայտեր ըն-
դունում է մինչև մայիսի 30-ը:

Հանդեսի ընդունելի լեզուներն
են հայերեն, անգլերեն, ֆրանսե-
րեն, գերմաներեն, ռուսերեն: Հան-
դեսը լույս է տեսնում տարին երկու
անգամ. հոդվածները գրախոսվում
են, ինչպես նաև դրանք հրապա-
րակվում են www.language.sci.am
կայքում:

Մագիստրոսական կրթական
նոր ծրագիր

Դեռևս 2017 թ. հունիսին ԳԱԱ Հ.
Աճառյանի անվան լեզվի ինստի-
տուտի Ընդհանուր և համեմատա-
կան լեզվաբանության բաժնի գիտ-
աշխատողներ Բ.Գ.Թ., Բ.Գ.Թ. Մ. Սար-
գսյանը, Տ. Դալալյանը և Սոնա

Միքայելյանը հանդես էին եկել
առաջարկությամբ՝ Լեզվի ինստի-
տուտին կից իրականացնել մա-
գիստրոսական կրթական ծրագիր:
Ինստիտուտի տնօրեն Վ. Կատվալ-
յանը, մեծ ոգևորությամբ ընդունե-
լով երիտասարդ աշխատակիցնե-
րի նախաձեռնությունը, Բ.Գ.Թ. Մ.
Սարգսյանին հանձնարարել էր
գրադվել ծրագիրն իրականացնելու
համար անհրաժեշտ գործերով:

Սույն թվականի ապրիլին Մ.
Սարգսյանը ներկայացրեց կրթա-
կան նոր ծրագրին համապատաս-
խան դասիչի բացման, ձեռք բեր-
ված պայմանավորվածություննե-
րի, ծրագրի առանձնահատկու-
թյունների մասին որոշ տվյալներ:
Նշեց, որ 2017-2018 թթ. ընթացքում
հանդիպել է ԳԱԱ գիտակրթական
կենտրոնի տնօրեն Ա. Սարգսյանի,
ուսումնական մասի պետ Ե. Զար-
գարյանի, փոխտնօրեն Ա. Միրզո-
յանի, Արտաքին կապերի բաժնի
պետ Ա. Հարությունյանի հետ, ձեռք
բերել մի շարք պայմանավորվա-
ծություններ՝ ծրագիրն իրականաց-
նելու, գիտական և մանկավար-
ժական պրակտիկաների կազմա-
կերպման, ուսանողների և դասա-
խոսների փոխանակման ծրագրե-
րի, դասախոսների վերապատ-
րաստման և տարաբնույթ այլ հար-
ցերի վերաբերյալ: Ծրագիրն իրա-
կանացվելու է ԳԱԱ լեզվի ինստի-
տուտի և ԳԿՄԿ փոխգործակ-
ցությամբ: Դասավանդելու են լեզվի

ինստի-տուտի փորձառու և վաս-տակաշատ մասնագետներ:

Մ. Սարգսյանը նշեց, որ ման-րամասն ուսումնասիրել է թե՛ տեղի, թե՛ արտասահմանյան բու-հերի մագիստրոսական ծրագրերը, դասավանդման մեթոդները, ու-սումնական պլանը: Այս ուսումնա-սիրությունները ցույց են տվել,

1. Հայաստանի որևէ բուհում, ցավոք, բուն լեզվաբանական ուղ-ղությամբ մագիստրոսական ար-դիական կրթություն չի մատուց-վում կամ մատուցվում է մասամբ:

2. Մագիստրոսը ավարտելիս ստանում է բանասերի կամ թարգ-մանչի որակավորում, բայց ոչ լեզ-վաբանի:

3. Չեն դասավանդվում արդիա-կան առարկաներ, մատուցվող նյութը չի համապատասխանում գիտության արդի չափանիշներին:

4. Մագիստրատուրայում դա-սավանդվող գրեթե բոլոր առար-կաները բակալավրիատի կրթա-կան ծրագրում ընդգրկված առար-կաների մեխանիկական կրկնու-թյունն են:

5. Ակադեմիայում առկա որևէ դասիչ լեզվաբանական կրթական ծրագրին չի համապատասխանում, քանի որ նույն դասիչի մեջ ընդ-գրկվում են միաժամանակ գրակա-նագիտական և լեզվաբանական բնագավառներ:

Մ. Սարգսյանը նշեց, որ իրենք կազմել են գիտության արդի մա-կարդակին և չափանիշներին հա-մապատասխան ուսումնական պլան, իրենց ծրագիրը ունի մի շարք առավելություններ.

1. Ավարտելիս տրվելու է լեզ-վաբանի որակավորում: Այսինքն՝ սա կտարբերվի բակալավրիատում տրվող որակավորումից, կընդլայնի մագիստրոսի թե՛ գիտելիքների շրջանակը, թե՛ աշխատելու, գործե-լու հնարավորությունը:

2. Մատուցվելու են լեզվաբանա-կան տարաբնույթ առարկաներ, որոնք ընդգրկվելու են լեզվաբանու-թյան տարբեր բնագավառները, մատուցվելու են գիտության նորա-գույն նվաճումները, կիրառվելու են արտասահմանյան փորձն ու մե-թոդները: Ուսումնական պլանում ընդգրկված են ոչ միայն բազային, հիմնական առարկաներ, այլև կամ ընտրական, հարակից բնագավառ-ների առարկաներ, որոնք ներկա-յացնում են արդիական գիտաճյու-ղերը, միջգիտակարգերը, մեթոդ-ները, լեզվաբանության զարգաց-ման միտումներն ու ուղղություն-ները, աշխարհի փորձը ևն:

3. Կրթական այս ծրագիրը պետք է պատրաստի ժամանակի պահանջներին համապատասխա-նող մասնագետների, որոնք պետք է ունենան ոչ միայն տեսական գի-տելիքներ, այլև կարողանան իրենց գիտելիքները կիրառել գործնակա-նում:

4. Ծրագիրը ընդգրկում է երկու հիմնական ուղղություն՝ բուն լեզ-վաբանական (ընդհանուր, տիպա-բանական, համեմատական, կիրա-ռական ևն) և լեզվի տարբերա-կային դրսևորման (ժամանակակից երկձյուղ գրական հայերեն, միջին հայերեն, գրաբար, բար-բառագի-տություն): Հետագայում ան-հրա-

Ժեշտության դեպքում սրանք կարող են դառնալ առանձին և ինքնուրույն ծրագրեր:

5. Լեզվի ինստիտուտը հնարավորություն կստանա ունենալու մասնագիտական պատրաստվածության տեսակետից ավելի որակյալ ասպիրանտներ և հայցորդներ: Իր կադրերին կպատրաստի իր չափանիշներին համապատասխան:

Ինստիտուտի տնօրեն Վ. Կատվալյանը լիափութ է, որ ծրագիրը հաջող ընթացք կունենա, և ապագա ասպիրանտներն ու հայցորդները կնախընտրեն մագիստրոսական կրթությունը ստանալ լեզվի ինստիտուտում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՈԴՎԱԾՆԵՐ

Վ. Գ. Համբարձումյան, Ստուգաբանություններ. <i>արտորալ</i> «շտապել. փութալ», <i>արտոյտ</i> «արտույտ (թռչուն)»	3
Ա. Ե. Պետրոսյան, Ստուգաբանություններ. <i>սաւս</i> «սեգ, պերճ», <i>սաւսի</i> «չինար, բարդի»	11
Ա. Վ. Գալստյան, Թատերական հուշերի լեզվակառուցվածքային հիմքերը.	18

ԲԱՆԱՎԵՃԵՎՔՆՆԱՐԿՈՒՄ

Մ. Ա. Սարգսյան, Համացանցային լեզու. լեզվական տարբերա՞կ, թե՞ խոսքի դրսևորում	31
Լ. Ն. Ավետիսյան. Քրիստոնեական վարդապետությանն առնչվող հատկանշային կայուն կապակցությունների իմաստաբանությունը գրաբարում	36
Ռ. Յ. Դոխոյան, Հումանշության դրսևորումները արդի հայերենի խոսքային գործունեության իմաստային ենթադաշտում	48
Վ.Ա.Ներսիսյան . Գրական արևելահայերենի <i>մերոնք</i> // <i>ձերոնք</i> բառերի խոսքիմասային արժեքի հարցը	58

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Ա. Գ. Բարսեղյան, Ոչ նյութական իմաստ ունեցող խոսքի մասի կապակցական դերը տեքստում	68
Ս. Հ. Կարապետյան. Հայերենի և անգլերենի բարդ բառերի բաղադրիչների խոսքիմասային պատկանելության որոշման դժվարությունները	74
Հ. Ս. Զաքյան, Արդի հայերենի կրկնասեռ բայական նորաբանությունները ..	82

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Ա. . Վարդանյան, Վանի բարբառին նվիրված բառարանը	94
Մ. Ա. Սարգսյան, «Նոր բառեր» բառարանի նոր պրակը	97
ԳՐՔԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ	99
ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ	104

СОДЕРЖАНИЕ

Статьи: В. Г. Амбарцумян. Этимологии: арм. արտորալ [artoral] «շուշալէլ, փութալ», արտոյտ [artoyt] «արտուլ (թռչուն)» - . А. Е. Петросян. Этимологии: арм. *uushi* [saws] 'пышный, великолепный', арм. *uush* sawsi] 'платан, тополь' - . А. В. Галстян. Лингвоструктурные основы театральных мемуаров. **Дискуссионные обсуждения:** М. . Саргсян. Интернет-сленг: речевое проявление или языковой вариант? - : Л. Н. Аветисян. Семантика качественных устойчивых сочетаний, связанных с христианским архимандритством в грабаре. - : Р. Ю. Дохоян.- Проявления синонимии в семантическом подполе речевой деятельности современного армянского языка.- В. А. Нерсисян. Вопрос о частеречной принадлежности слов ւերոնք [meronk^c] “ ” и ձերոնք [jeronk^c] “ ” в восточноармянском языке. - : **Сообщения:** А. Г. Барсегян. Связная роль нематериальных частей речи в тексте.- : С. Карапетян. Трудности в определении категориальной (частеречной)принадлежности компонентов сложных слов в армянском и английском языках- Г. С. Закаян. Глаголы- неологизмы двойственного залога в современноармянском языке.- **Рецензия:** А. . Варданян, Словарь диалекта Ван армянского языка. - : М. А. Саргсян , Новый выпуск словаря “Новых слов” : *Книжное обозрение . : Научная жизнь . :*

CONTENTS

Articles: V. G. Hambarzumyan. Etymologies: Arm. արտորալ [artoral] «շուշալէլ, փութալ», արտոյտ [artoyt] «արտուլ (թռչուն)» - . А. Е. Petroсяn. Etymologies: Arm. sawsi 'magnificent, great', Arm. sawsi 'platan, poplar'- . А. V. Galstean. Linguistic-Structural Bases of Theatrical Memoirs- . **Discussion:** M. A. Sargsyan. Internet Slang: speech manifestation or language option? - . L. N. Avetisyan. The semantics of qualitative stable compounds relating to the Christian archimandritism in old Armenian - . R. U. Dokhoyan. The displays of synonymy in the semantic subfield of speech activity in modern Armenian - . V. Nersisyan. The Issue of the Part of Speech of the words [meronk^c] “ ” and ձերոնք [jeronk^c] in the Western Armenian language- : **Reports:** A. G. Barsегhyan. The cohesive role of non-material part of speech in the text.- : S. . Karapetyan Difficulties in Determining the Part of Speech Meanings of Armenian and English Compound Words- Г. S. Zakyayn. Reciprocal verbs-neologisms in modern language. - **Reviews.** А. . Vardanyan, Dictionary of Dialkt Van of Armenian language- : M. A. Sargsyan, New Parts of Dictionary of “New Words” - : **Book reviews: - Science News: - .**

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը վերստին հրատարակում է «Լեզու և լեզվաբանություն» հանդեսը, որի առաջին համարը լույս է տեսել 2003 թ.:

Հոդվածները պետք է ուղարկել տպված և համակարգչային տեքստով (դիսկետով կամ կրիչով), 8-10 էջի սահմաններում, տողերի միջակայքը՝ 1.5, տառաչափը՝ 12 և Sylfaen տառատեսակով (ամփոփումները ռուսերեն և անգլերեն՝ Times New Roman): Վերևում նշվում է հեղինակի անունը, ազգանունը, հաստատության անվանումը, հոդվածի վերնագիրը:

Հղումները և գրականության ցանկը պետք է համապատասխանեն:

Խնդրում ենք գրախոսական հոդվածներն ուղարկել գրախոսվող գրքի հետ:

Մեր հասցեն՝ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ

ՀՀ, 3750015, Երևան, Գ. Լուսավորչի 15

Հեռ.՝ (+374 10) 565 337

Կայքէջ՝ www.language.sci.am

Էլ. փոստ՝ inslang@sci.am

Հանդեսի պատասխանատու քարտուղար՝ meri-sargsyan@mail.ru

К С В Е Д Е Н И Ю

НАН РА институт языка имени Р. Ачаряна заново издает журнал “Язык и языкознание”, первый номер которого был издан в 2003 г.

Статьи следует присылать в виде распечатки и компьютерного набора (на дискете), объем - в пределах 8-10 машинописных страниц, интервал - 1,5, размер шрифта - 12, шрифт- Sylfaen (резюме на русском и английском- Times New Roman). В начале указываются имя, фамилия, наименование учреждения, заглавие статьи.

Ссылки и список литературы должны соответствовать друг другу.

Просим статьи с отзывом или рецензией прислать с рецензируемой книгой.

Наш адрес: НАН институт языка имени Р. Ачаряна

РА, Ереван, Лусаворича 15

Тел.: (+374 10) 565 337

Веб. сайт: www.language.sci.am

Эл.-почта: inslang@sci.am

Ответственный секретарь: meri-sargsyan@mail.ru

ACKNOWLEDGEMENT

NAS RA language institute named after H. Acharyan is publishing afresh «Language and linguistics» magazine, the first number of which was published in 2003.

Please, send articles in hard and soft (on diskette) copies, within 8-10 pages, line spacing- 1,5, font size- 12, fonts- Sylfaen (the summary in Russian and English - Times New Roman). Author's name, institution and contact data should be placed in the upper right corner of the title page.

References or footnotes should be adequate to the list of bibliography.

Please, send reviews with the corresponding book.

Our address: NAS language institute named after H. Acharyan

RA, Yeravan, Lusavorich 15

Phone: (+374 10) 565 337

Web page: www.language.sci.am

E-mail: inslang@sci.am

Editorial secretary: mer-sargsyan@mail.ru

itorial secretary: mer-sargsyan@mail.ru

ԼԵԶՈՒ ԵՎ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
ЯЗЫК И ЯЗЫКОЗНАНИЕ
LANGUAGE AND LINGUISTICS

1 (18)
2018

Համակարգչային էջադրումը՝ Վ. Պապյանի

Հրատ. պատվեր № 915
Ստորագրված է տպագրության 25.12.2018թ.:
Չափսը՝ 70 x 100 ¹/₁₆, 7 տպագր. մամուլ:
Տպաքանակը՝ 200 օրինակ:
Գինը՝ պայմանագրային:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան,
Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24: